Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
2405

Ltn
1842

1999

ՄԽԻԹԱՐԱՅ ԱՆԼՅՈՅ

ՊՏՅՄՈՒԹԻՒՆ

Սկիզբն, Գլուխք Ի՛Հ

և

Յաւելուածք

Ի լոյս ած՝

Ք. Պ.

1879

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

2011

2405-2011
h$3562

Զհանգամանաց կենաց Մխիթարայ Անեցւոյ չէ ինչ մեզ յայտնի, բայց այն միայն թէ՝ էր սա աւագերէց Կաթուղիկէ եկեղեցւոյն Անւոյ և եկաց յելս երկոտասաներորդ դարու։ Սա գրեաց զՊատմութիւն իւր ի խնդրոյ հաւր Հաուիճայի վանաց, Գրիգորոյ վարդապետի, և եթող յետնոցս զայլ և այլ երկասիրութիւնս, որք ոչ հասին ի ձեռս մեր, և զորոց ճառեն Վարդան և Ստեփանոս մետրապաւլիտն Օրբէլեան։ Վարդան կրկնակի յիշէ զՄխիթար յիւրում պատմութեան։ Մի՝ բերելով զանցս ինչ ի պատմութենէ Վրաց և ի վերջն ասելով. "այս ըստ Մխիթարայ երիցու ասիցն (Վեն. եր. 91)". և միւս՝ ի պատմելն զսկզբնաւորութենէ Թուրքաց, յորժամ ասէ. "Այս ըստ Վահրամայ որդւոյ Տիգրանայ, վիպագրի։ Իսկ պատուական երէցն Մխիթար Անեցին այսպէս ասէ"։ Լաւ զոր ասէն՝ առանձինն եդաք ի վերջ հատուածոյս։ Ստեփանոս Օրբէլեան նոյնպէս յիշէ զսա և զգեղեցիկ Պատմութիւն սորա, յասելն. "այլ զի ժտեալ էր յիշատակ նախնական զրուցատրութեանց նոցա, նաև ամենայն արութիւնք և գործք երևելիք ի տանն Վրաց ազգին Օրբէլեանց ի նոցին ժամանակագրոցն, զոր Քարթլիս Ցխորեբայ կոչեն, վասն այն մեք ոչ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն, զի և ըստ կարգի շարայարեալ էաք ի մատենիս. բայց զոր ինչ գտաք ի հայալեզու գիրս սակաւ ինչ յիշատակ՝ գիցուք, ևս և զվախճան կատարածի նոցա, զոր հաւաստեաւ ծանոյց մեզ գեղեցիկ Պատմութիւն Մխիթարայ Անեցւոյ"։

Մեզ չէ յայտ, եթէ պատմութիւնս այս Վրաց, յիշատակեալն ի Վարդանայ և ի Ստեփանոսէ, առանձին երկասիրութիւն

էր հեղանակիս, թէ մասն ինչ միայն "աշխարհագումար զրուցաց" Ագեցւոյն։ Ինքն այսքան միայն ասէ ի նախերգանս իւր, թէ՝ "գումարեցի զայսոսիկ գումարումն յերիս պրակս... Առաջին Պրակն սկսանի ի Պարոյրայ Հայկազնոյ, առաջին թագաւորէ Հայոց մինչև ցՅովանէս վերջին. իսկ երկրորդն՝ ի Յովանիսէ մինչև ի քահանայանալն Տեառն Բարսղի։ Այլ երրորդն՝ մինչև ի գերելն զԵրուսաղէմ և ցելս ազգաց Ֆրանկաց"։ Ի սոցանէ մասն միայն առաջին Պրակին եհաս ի ձեռս մեր, զաւղեալ ի ստուար գրչագրի միում ի մատենադարանի բարձր Սրբազան Սարգիս Արքեպիսկոպոսին Հասան Ջալալեանց, որոյ ի լուսաւոր թոյլտուութենէ շահեցեալ տարաք ընդ մեզ ի Ս. Պետերբուրգ զերկուս գրչագիր մատեանս ի նոյն գրադարանէ վասն ընդաւրինակելոյ ի նոցանէ զինչ ինչ բանս, և այժմ ի լոյս ընծայեմք զնշխարս Պատմութեան Ագեցւոյն, յուսալով զի և զմնացորդն հանդիպեսցի գտանել ումեք յաջողագունի քան զմեզ։

Ի վերջ մատենիս եդաք՝ զՅաւելուածս, յորս գտանին տեղեկութիւնք և պէսպէս բանք մատենագրաց մերոց զմարդարէէն Տաճկաց։ Այլ և զքաղուածս ինչ ի պատմութենէ Համզայի Իսպահանեցւոյ յաղագս յաջորդաց Մահմետի, որոց գրեթէ ամենևին համահաւասար գտանին ամք, ամիսք և աւուրք իշխանութեան ասացելոցն ի Մխիթարայ, այնպէս զի երկոքեան մատենագիրքս ի միոջէ աղբերէ հանեալ երևին զնիւթն հատուածոյս։

ՄԽԻԹԱՐԱՅ ԱՆԼՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հանդէսք բանից աշխարհագումար զրուցաց, տիեզերապատում անցից. վիպասանեալ ի քաջ գիտնականէն Մխիթարայ, աւագերիցու մեծ կաթուղիկէին Ընդոյ, հոյակապ քաղաքի. ի խնդրոյ հաւր Հառիճայի Գրիգորոյ վարդապետի։

Ա. Մխեալք աստուծով ի սկիզբն մատենիս աշխարհավէպ հանդիսարանացս, ոյժ առեալ սատար և նեցուկ զաղաւթս սրբոցդ, ևս և զպատճառի բանիս, անսայթաք հաւատով կառուսցուք զդարշապար մտացս ի յոյսն անկարծելի և ի սէրն անկեղծաւոր։ Այլ այնպէս զաւրացեալք ՝ի Բանէն, որ բանիւ գոյացոյց զեղեալքս ամենայն, ուղղեսցուք զմակոյկ բանիս ի վերայ մկանաց անդնդահայեաց ծովուս խորութեան։ Ի ձեռն առեալ զայս մոյթ սրտի և . . . զաթ պարանոցի, որում աւարտն և նաւահանգիստն յանձն է քաջ և անմոլար նաւապետին։ Այլ արդ՝ ըստ կատարելոցն հրահանգից ի սոփեստական յեղանակսն, պարտ է յամենայնում յաւելաջարկութեանցն նախ քան զամենայն հարկաւորապէս ցուցանել, թէ՝ յաղագս ո՞ր է բանս. յորում և զբովանդակ մթերս շահիցն և զհոյլս աւգտութեանցն յայտ ածել և առաջի դնել։ Այլ այս՝ զի զմիտս ընթերցողացն և լսողացն առաւել յաւժարագոյնս արասցէ, և ի վարժումն մատենիս փութագոյնս և անյապաղս

մղեսցէ։ Եւ արդ՝ է բանս սակս բացայայտութեան անցելոց իրաց, լաւաց և վատաց, արեաց և անարեաց, խաղմից, հինից և խաղաղութեանց, պէս պէս և զանազան զրուցատրութեանց, որ ըստ ներգոյս սղմանակ տեղեկութեամբ թեւացեալ Յդամայ հետէ մինչ ի բնաւին վերջի ամանակս, յաւուրս Յովանիսի Թագաւորի։ Եւ անտի լայն և տարած բանիւք յընդարձակեալ մինչ ի ոՏ՝ Թուականս։ Իսկ մթերք շահիցն ի սմա ամբարելոց, նախ՝ լուսաւորութիւն ոգւոյ ի զանազան բանս և ի գիտութիւնս. նա և ի բարեացն զլաւն շտեմարանել և ի վատթարացն զհնարս զգուշանացն հայթայթել, յորմէ և ճոռոգարեալ լինին բազում ոգիք ի չար սադրողաց։ Եւ երկրորդ՝ զկենցաղոյս ուսանել զզանազան քաղաքավարութիւնս. ի թագաւորացն՝ զթագաւորականն ընդոստութիւն, յիշխանաց՝ զիշխանականն ընթացս, ի զինուորաց՝ զմարզ մրցական հանդիսիցն։ Զմանապէս և յայլոցն՝ զայլսն. ըստ հոգևորին՝ զհոգևորն, ըստ կենցաղոյս՝ զմարմնաւորն։ Քանզի յայսպիսի պատմութեանց ուսաք, թէ՝ յարարչէն ստեղծեալ մեք միայն եմք անձնիշխան ի սեռս կենդանեաց, որ յարարչապատում մատենի անդ։ Զա և զբարձրագոյնն ասելի է, քանզի սովաւ ծանեաք զբնութիւն արարածոցս եղական գոլ, յոչէից ածեալ ի գոյութիւն արարչին։ Ի սմանէ՝ թէ լքաք թողաք զվայրն վայելչական, և թէ մերկացաք ի փառաց և կողոպտեցաք յանմահութենէ։ Սա ուսոյց մեզ, թէ բանսարկուն պատառեաց զզարդն մեր ցանկալի, և զնայատականս մեր տերևոյն կարաւտացոյց. զամբարտակին սկայից կործանումն. զՆոյի յայտնի պատիւն, թէ արդարք այսպէս պատուով պատին. զՄելքիսեդեքին. զԱբրահամն. զՊոտայն և զկնոջն. զերկնատեղաց հրացանութիւնն. զբովանդակ Եգիպտոսին. զՄովսէսին և զանապատին. զերկրին աւետեաց, և զայլսն ամենայն մինչև ցՔրիստոս։ Զամենատենջ լուսոյ գալստեանն առ մարդիկ և զանպայման ցնծութեան գործս, և զբանս, և զարդիւնս, որ ինչ յաւրէնս և ի մարգարէս և յաւետարանս, պատմութեամբ ուսաք և իմաստնացաք։ Եւ եթէ ժամանակագրութիւն ոչ էր, առասպելաւք և այլանդակ զրուցաւք և անդէպ հերձուածովք լի էր եկեղեցի։ Կամ թէ զարդարն ասել, գոյին ոչ իսկ հեռք հաւատոյ և ճշմարտութեան։ Եթէ ոչ էին

քանոն և տիպք պատմութեան, որ տուան մեզ ի սրբոց աւանդողացն՝ գալուստ Քանին և կամ Գործք առաքելոցն, կամ այլք սոցին նման, որ ուսուցին մեզ զվիճաբանութիւն ուղղացն ընդ թիւրսն։ Եւ եթէ ոչ ի պատմագրութենէ առնուաք ուսանէաք զճանապարհ առաքինութեան և զգնացս որ ուղիղն է, ամենայն ոք կործանէր, անկանէր ի խորխորատս կորստեան։ Ոչ ոք ծանաւթ հաւաստի զրուցաց և ոչ տեղեակ կարգաց առաջնորդաց և թագաւորաց. ոչ գիտութիւն, թէ՝ լաւքն այսու առաքինացան. և ոչ զղջումն, թէ՝ վասն այսպիսի կենաց վատքն պատժապարտեցան։ Զի թէ որ այսչափ մանրապատում եղէն հնոցն և նորոյս կարգք և կրաւնք և գործք և բանք և ցանկապատեցաւ այդիս քրիստոսատունկ. դեռ ևս մտանէն ապականեն աղուէսք ժանտագործք և խառնափնդորեն զոճ ճշմարտութեան. զի՞նչ ինչ արդեւք էր ի չարաց որ ոչ գործէր ի մէջ տգիտաց և անծանաւթից գիտութեան։ Արդ՝ որպէս յայտնի է գիտնոց յոյժ աւգտութիւն սորա, ձեռն ի գործ արասցուք յուսով, տալ զանձինս յաշխատութիւն հոգևոր, ապաւինելով ի սուրբ շնորհս Հոգոյն։ Արդ՝ ո՞ պատուական հայր Գրիգորիէ, գրեթէ՝ զհարիւր և Ֆ ամաց մեծամեծ գործս խնդրէ քո պատուականութիւնդ, ի ժամանակաց անտի Յովանիսի, յետին և վերջնոյն Քագրատունեաց մինչև ի ներկայս յայս, յորում եմն դեռ ևս։ Իսկ ի վերայ այսոցիկ էր խնդիրն ի գրի աստ. նախ սկսանել զառաջին գերելն Յերուսաղեմէ, յոստոյ և յարմատոյ Դաւթի մարգարէի. զոր գերեալ Նաբուզոդոնոսոր և խնդրեալ Հրաչեայ պարգև զՇ՝ամբատ յարքայէ։ Արդ՝ հիմն բանիս պարտ է անդր ի վեր ընթանալ և անտի կարգաւ աստ առ մեզ կացուցանել։ Եւ այս ի յոլովս արտաբերի և կազմէ աշխատութիւն. ընդ որ յոյժ համառաւտիւ կամիմք անցանել, տալով միայն պատճառ իմաստութեան քո, Եւ արդ՝ գումարեցի զայսոցիկ գումարումն յերիս պրակս, զի խոստովանութիւն մեր և հաւատ է ի սուրբ Երրորդութիւնն. որպէս Պաւղոս ասէ՝ զամենայն զոր ինչ առնէք, յանուն Տեառն և Աստուծոյ արասջիք։ Առաջին պրակն սկսանի ի Պարոյրայ հայկազնոյ, առաջին թագաւորէ Հայոց, մինչև ցՅովանէս վերջին։ Իսկ երկրորդն՝ ի Յովանիսէ մինչև ի քահանայանալն տեառն Հարսղի։ Եւ երրորդն՝

մինչև ի գերեալն զԱրուսաղէմ և յելս ազգաց Ֆրանգաց։ Յայս երիս հատածս բազմատարազ ճառիւք ոչ դանդաղեցից գրել, քաղելով ի սրբոց և ի պիտանեաց պատմութեանց։ Զի և աղքատք և մուրացիկք սովոր են ի վաճառաց և ի դրացեաց առնուլ փոխ, և կերակրել զեկեալ հիւրս մեծատունս, թէպէտ և այնպէս ոչ իցեն զի հանցեն յամբարաց և ի գանձուց զնորն և զհինն։ Եւ որ բարեմիտ բազմեալք իցեն, զսակաւն լուրջ երեսաւք և գոհութեամբ ընդունին, պայծառացուսցեն զամաւթալի դէմս մուրողին և առնուն վարձս ի Տեառնէ. նմանին խոնարհութեան և անարգամեծար փրկչին, որ զամենայն զգործս և զգնացս հակառակ փքացեալ վարդապետութեան մարդասպանին աւրինադրեաց։ Զսէր՝ նոր աւանդ ասաց. զխոնարհութիւն երկնաստեղծ գլխոյն յոտս Յուդայի՝ նոր պատուիրան ետ. հաւասար հողեղինաց իբրև զընկերակից նոցին ի վերնատունն՝ նոր ուսոյց. ի մարմնոյ և յարենէ անտի իւրմէ՝ նախ ինքն եկեր։ Եւ այլն ամենայն ի սկզբանէ անտի տնաւրինականացն. մայրն, խանձարուրքն, լոկ Քրիստոսիւ այրն, աշխարհագրիլն, տատրակ չքաւորի և աղաւնի աղքատի, չքաւորի գառին նուիրել ինքն գառն, պանդխտիլն, Յոգիպտոս փախուստն իբրև զանկար, անտուն ի յարկէ, վաստակեալ, քաղցեալ, ի պոռնկէ ջուր հայցեալ, առ մաքսաւորս ի ճաշ չոքեալ, ընդ մանկունս յաթոռ նստեալ, զտղայսն ի գիրկս ընկալեալ, առ տկարս և հիւանդս հետիոտս անդանդաղ խոնարհեալ, վասն մեր ընդ բանսարկուին առ փորձողին եղեալ, և որ նախ քան զայն ի հողեղէն աջոյ մկրտեալ ընդ աժխոյժսն. մերկ և բոկ և հետիոտ առ ամենայն ճանապարհ ի յերկրի, ի մանկանց պաշտպանեալ, և իշով տրմղով ընթացեալ. զսաստկեալի համբերութիւն առ խորհուրդ Խաչին, զանարգանսն, զզրպարտանսն, զգանն, զապտակն, զթուքն, զկռուփսն, զպսակն փշեղէն, զեղէգն, զծիրանիսն. զաւարտն ամենայնի զմահն և զխաչիւ մահն։ Այսու ամենայնիւ և զորս թողաք ի խոնարհութենէն, զայն որ ամբարտաւան և վէս փքութեամբ անկաւ ի փառաց, քակեաց Տէրն մեր ամենասուրբ խոնարհութեամբն զբարձրութիւն նորա, և ուսոյց այսու զսպանումն նորա, որպէս ինքն արար։ Զտխմարս և զտգէտս կացոյց քարոզս և աւետա-

բանիչս, զի ի տկարս հզաւր զաւրութիւն կատարէ Հոգին ասուծոյ, և փառքն մի՝ տացին մարդկային իմաստութեան, այլ զաւրութեանն աստուծոյ։ Եւ արդ՝ նոյն ինքն որ այսպէս բարեմտէ և խոնարհի առ յոյժ անարգս, մի՝ փախիցէ, լքցէ զիս և ունայնացուսցէ ի սուրբ Հոգւոյն գործակցութենէ, այն որ ճանաչէ զսիրտ մաղթողին, ամէն։ Այլ տացէ դիցէ բան ի բերանի՝ որ զնայն պաշտեմ և խոստովանիմ՝ անթերի և աներկբայ հաւատով և յամենայն ժամ աւրհնութիւն նորա ի սմա. և ի նա պարծեսցի անձն իմ ուղիղ դաւանութեամբ, և ի սոյն անբիծ խոստովանութեան արժանի արասցէ զտառապեալ շունչ իմ աւանդել ի գանձս իւր, զի թերևս յաշխատութենէ աստի իմմէ աւգուտ լինիցի և շահ եկեղեցւոյ մանկանց։ Եւ թէպէտ սակաւ է տաղանդս, հաւատացեալ ինձ ի Տեառնէ, ի սեղանս պատրաստեսցի և մի՝ ընդ իս թաղեսցի. և ես ի Տեառնէ գովեցայց և մի կտրեցայց։

բ. Ճառ երկրորդ համառաւտ յԱդամայ, նահապետաց եւ թագաւորաց, որ ի նոցանէ ծնան, ըստ կարգի։

Խընդամտաբար և խնկեալ յաւժարութեամբ պարտ և վայելուչ է առնել զհին բանիս ի նախաստեղծէն մերմէ Ադամայ, համառաւտիւ հասուցանել մինչև ուր խնդիրն է մեզ, լայն և ընդարձակ գրել։ Արդ՝ որ հին և սկիզբն է բնութեան ազգի մարդկութեանս Ադամ, առաջին մարդն, զնա դիցուք առաջին վէմ ի հիմունս աստ, և ի նմանէ ըստ կարգի զմերոյս ազգաց և թագաւորաց, ածեալ հասուսցուք մինչև առ մեզ, աստուծով։

Ա. Ադաւրոս, շարս ԺԱ[1]

Ադամ, յետ ելանելոյն ի դրախտէն, լեալ ամաց ՃԼ ծնանի զԱԿԹ Յայէ կնոջէ իւրմէ և եկաց այլ ևս ամս Չ, մինչ ի ճլե՛ ամն Սաղաղիէլի. ծնանի այլ ևս ուստերս և դստերս. մեռանի ՋԼ ամաց։

Բ. Ադապարոս, շարս Ի

ԱԿԹ լեալ ամաց մե՛ ծնանի զԵնովս յԱզովրայ կնոջէ իւրմէ.

[1] Տես Եւսեբի ժամանակագր. վեն. 1818. եր. 8,58. Սամուէլ Ընեցի, ձեռագիր։

և եկաց այլ ևս ամս չէ՛ մինչև ի ի՛ ամն Անովքայ. ծնանի ուստերս և դստերս, և մեռանի ջԺ՛ ամաց։

Ը. Ադմեղոն, շարս ԺԳ

Անովս լեալ ամաց ՃՂ ծնանի զԿայինան ի Ենոշեայ կնոջէ իւրմէ. և եկաց այլ ևս ամս չԺ՛Է մինչև ցԺԳ ամն Մաթուսաղայի. ծնանի ուստերս և դստերս, և մեռանի ջԷ՛ ամաց։

Ը. Ամենոն, շարս ԺԲ

Կայինան լեալ ամաց ՃՀ ծնանի զՄաղալիէլ ի Մաղալեդայ կնոջէ իւրմէ. և եկաց այլ ևս ամս չԼ՛ մինչև ի ՆԲ ամն Ղամեքայ. ծնաւ ուստերս և դստերս, մեռաւ ջԺ ամաց։

Ը. Ամեդաղարոս, շարս ԺԲ

Մաղալիէլ լեալ ամաց ՃԿԷ՛ ծնանի զՅարեդ ի Դինայ կնոջէ իւրմէ. և եկաց այլ ևս ամս չԼ՛ մինչև ի խԲ՛ ամն Ենոշի. ծնաւ ուստերս և դստերս. մեռաւ պղԷ՛ ամաց։

Ը. Դաւոնոս, շարս Ժ

Յարեդ լեալ ամաց ՃԿԲ՛ ծնանի զԱնովք ի Բառաքայ կնոջէ իւրմէ. և եկաց այլ ևս ամս ՆԲ, մինչև մՃ՛ ամն Ենոշի. ծնանի ուստերս և դստերս. մեռանի ջԿԲ՛ ամաց։

Ը. Անդովրանքոս, շարս ԺԲ

Անովք լեալ ամաց ՃԿԷ՛ ծնանի զՄաթուսաղայ ի Յադներայ կնոջէ իւրմէ. և եկաց այլ ևս ամս ՃԾ. հաՃոյ եղեալ աստուծոյ, փոխեցաւ յամի ԼԲ՛ Ղամեքայ. ծնանի ուստերս և դստերս. փոխեցաւ յԿԷ՛ ամաց։ Ժողովին յԱդամայ մինչև ի փոխելն Անովքայ ազգ Է՛, ամք ռնՃԷ՛։

Ը. Ամեմիսինոս, շարս Ժ

Մաթուսաղայ լեալ ամաց ՃԿԷ՛ ծնանի զՂամեք ի Յեդնայ կնոջէ իւրմէ. և եկաց այլ ևս ամս պԲ՛։ Ոսովաւ անցանել ջրհե-

ղեղին ամաւք իբ՛, որ զկենաց նորա թիւ յայտ առնէ։ Իսկ եթէ հրպէս, յայլ օրինակս կայ. եկաց, ասէ, այլ ևս ամս չՃԲ՛, ծնաւ ուստերս և դստերս. մեռաւ ջկԺ՛ ամանց։

Ը. Ոսիարտէս, շարս Ը՛

Ղամեք լեալ ամաց ՃՃԲ՛ ծնանի զՆոյ ի Բեդնայ կնոջէ իւրմէ և եկաց այլ ևս ամս շԼ՛Է. յառաջագոյն քան զհայր իւր Մաթուսաղայ վախճանէր Ղամեք, և եկաց այլ ևս ամս, ցամս Նոյի շԼ՛Է. ծնանի ուստերս և դստերս. մեռաւ չԻՂ ամաց։

Ը. Քսիսութրոս, շարս ԺԲ՛

Նոյ լեալ ամաց Հ՛ ծնանի զՍեմ, զՔամ, զՅաբէթ ի Նոէմ զարայ կնոջէ իւրմէ. և եկաց այլ ևս ամս Ճ՛ մինչև ցՋրհեղեղն, և յետ ջրհեղեղին ամս յԺ՛. մեռաւ ջԺ՛ ամաց։

Ժողովին ի փոխմանէն Անովքայ մինչև ի ջրհեղեղ ազգ Ի՛, ամք չԺԷ՛։ Իսկ յԱդամայ՝ ազգ Ժ՛, ամք ռմխԲ՛։ Միանգամայն Ժ՛ նահապետացս ասեն շարս ՃԻ՛, որք առնեն սՂգ բիւր ամաց։ Քաղդէական է այս վէպ բանից և աւտար ի ճշմարտութենէ, որք մեկնեն զմին շարն վ՛ամ։

Արդ՝ պարտ է մեզ յերից որդւոց Նոյի, զՅաբէթայն ազգ ի կարգ արկանել մինչև ցսպառուած Հայկազանցն, զոր երարձ Աղեքսանդր մակեդոնացի։ Նա զկնի այնորիկ զԱրշակունեացն կարգ թագաւորելոցն ի վերայ մեր, մինչև ի նոցին սպառուածն կարգաւ հասուցից։

գ. Դասակարգութիւն Յաբէթի նախնոյն եւ արմատոյն Հայոց։

Ա՛ Յաբէթ, Բ՛. Գամեր, Գ՛. Թիրաս, Դ՛. Թորգոմ; Ասքանազ եղբայր, Ե՛. Հայկն. վասն սորա անուանեցաք Հայք՝, Զ՛. Արամանեակ, Է՛. Արմայիս, Ը՛. Ամասիայ, Թ՛. Գեղամ; Ժ՛. Հարմայ, ԺԱ՛. Արամ։ Ի սորա անուն կոչեն զմեզ ամենայն ազգք՝ արմանիք։ Սա ետ շինել գործավարի իւրոյ Մշակայ զԿեսարիա

քաղաք, որ և անուամբ նորա կոչեցաւ Մաժակ, զոր անուանեն Յոյնք՝ պռոտոն արմանիան, այսինքն՝ առաջին Հայք։ Ժբ. Ներսէն գեղեցիկ, ԺԳ. Կարդոս՝ որդի Նորին, որ անուանեցաւ ի Շամրամայ՝ Երայեանն Երայ։ Յաբեթայ մինչև Յերայ ըստ կարգի, և աստի յառաջ ըստ յառաջադիմութեան։ ԺԴ. Պարէտ, ԺԵ. Երբոկ, ԺԶ. Օաւան, ԺԷ. Սուր, ԺԸ. Հաւանակ, ԺԹ. Վաշտակ, Ի. Հայկակ, ԻԱ. Մրակ, ԻԲ. Ռնակ, ԻԳ. Շաւարշ, ԻԴ. Նորայր, ԻԵ. Վստամ, ԻԶ. Կար, ԻԷ. Գռակ, ԻԸ. Հրանտ, ԻԹ. Ընծակ, Լ. Գղակ, ԼԱ. Հորայ, ԼԲ. Օարմայր, ԼԳ. Պերճ։ Սա յաւուրս Դաւթի մարգարէին։ ԼԴ. Երբուն, ԼԵ. Բազուկ, ԼԶ. Հոյ, ԼԷ. Յուսակ, ԼԸ. Կայպակ, ԼԹ. Սկայորդի, Խ. Պարոյր։ Սա առաջին պսակեցաւ Թագաւոր ի Վարբակէ՝ Մարաց Թագաւորէ։ ԽԱ. Հրաչէ։ Սա յաւուրս Նաբուգոդոնոսորայ խնդրեալ ի նմանէ զմի ի գերելոցն Յերուսաղեմէ, զՇամբատ, զնախնին Բագրատունեացն։ ԽԲ. Փառնաւազ, ԽԳ. Պաճոյճ, ԽԴ. Կռոնակ, ԽԵ. Փաւոս, ԽԶ. Հայկակ, ԽԷ. Երուանդ, ԽԸ. Տիգրան։ Զոսվաւ եկին որդիքն Սենեքարիմայ ի Հայս՝ Սանասար և Ադրամելէք։ ԽԹ. Բաբ, Տիրան, Վահագն, Ծ. Ռաւան, ԾԱ. Ներսէհ, ԾԲ. Օարէհ, ԾԳ. Երմոգ, ԾԴ. Բագամ, ԾԵ. Վան, ԾԶ. Վահէ։ Այս վերջին Թագաւոր Հայկազնեաց. զսա սպանեալ Ալեքսանդր մակեդոնացի։

Ի նախնոյն մերմէ Հայկայ մինչև ցՎահէ իշխանք լե և թագաւորք ԺԷ ի Պարսպրայ սկսեալ, և ամք ռՂԾ։

Այս արդ՝ կարգեսցուք զկնի Հայկազանցն ի Պարթևաց զթագաւորեալսն Հայոց։ Սելևկոս զկնի Ալեքսանդրի՝ ԼԱ ամ։ Անտիոքոս, որդի Նորա՝ ԺԹ ամ։ Անտիոքոս Թէոս՝ ԺԵ ամ։ Ի սորա ԺԱ ամին ապստամբեցին Պարթևք ի Մակեդոնացւոցն և թագաւորեաց նախ՝ Արշակ քաջ Պարթևաց՝ ԼԱ ամ։ Սա ինքն Արշակն՝ ԼԱ ամ։ Արտաշէս՝ ԽՂ ամ։ Արշակ մեծ՝ ԾԳ ամ։ Սա զեղբայր իւր զՎաղարշակ առաքէ ի Հայս, առաջին Թագաւոր Պարթև զկնի սպառելոյ Հայկազանցն ի ՃԿԵ ողոմպիադին։ Վաղարշակ Հայոց առաջին Թագաւորէ, ամ իբ և մեռանի ի Մծբին քաղաքի։ Արշակ, որդի նորա՝ ամ ԺԳ։ Արտաշէս, որդի նորա՝ ամ ԻԵ։ Սա վեհ գտաւ քան զԱղեքսանդր մակեդոնացի. զի նա երբորդ մասին միայն տիրեաց աշխարհիս, իսկ սա զիՂ մասն աշխարհիս միապետեաց։ Տիգրան, որդի սորա՝ ԼԷ ամ։ Արտաւազդ, որդի նորա՝ Բ ամ։ Արջամ, եղբայր Տիգրանայ, հայր Աբգարու՝ Ի ամ։ Աբգար՝ ամս ԼԲ։ Սանատրուկ՝ ամս Լ։ Երուանդ՝ ամս Ի։ Արտաշէս՝ ամս խա։ Արտաւազ՝ ամս Բ։ Տիրան՝ ամս իա։ Տիգրան՝ ամս խԳ։ Վաղարշ՝ ամս իա։ Խոսրով՝ ամս խԲ։ Անիշխան՝ ԻԷ ամք։ Տրդատ՝ ամս ԾԶ։ Խոսրով՝ ամս ԺԹ։ Տիրան՝ ամս ԺԶ։ Արշակ՝ Լ։ Պապ՝ Է։ Վարազդատ՝ Դ։ Արշակ և Վաղարշակ՝ Ե։ Խոսրով՝ Ե։ Վռամշապուհ՝ իա։ Խոսրով դարձեալ՝ ա։ Շապուհ՝ Դ։ Անիշխան ամս՝ ժա։ Արտաշէս՝ Զ։ Անիշխան՝ ամս ԺԶ։ Սա վերջին Թագաւոր Արշակունեաց։

Օկնի Թագաւորացն կացին մարզպանք Հայոց յիշխանացն։ Առաջին Մեծն Վարդան՝ մարծպան ԺԹ։ Անիշխան՝ ամս ԺԱ։ Մանգնոս՝ ամս Ի։ Վահան՝ ամս Լ։ Վարդ՝ ամս Դ։ Պարսիկք՝ ամս ԺԹ։ Մեժէժ Գնունի՝ ամս Լ։ Պարսիկք՝ ամս ԼԶ։ Դաւիթ Սահառունի՝ ամս Լ։ Թէոդորոս Ռշտունի՝ ամս ԻԵ։ Ի սորա Ժ ամին և ի ՂԵ թուին երևեցաւ Մահմետ սուտ մարգարէն։ Համազասպ՝ Է։ Գրիգոր՝ Ժ։ Սա շինէ զկաթուղիկէն յԱրուճ։ Ներսէս՝ ամս Դ։ Աշոտ՝ Դ։ Ներսէհ Կամսարական՝ Դ։ Սմբատ Բագրատունի՝ ամս Ի։ Աստ այրեցին զիշխանն Հայոց ի Նախջաւանի, և բազում ամք յանիշխանութեան էր։ Աշոտ Բագրատունի՝ ԺԵ։ Սմբատ՝ ԻԲ։ Աշոտ Մսակերն՝ Ի։ Սմբատ Արքաբասն՝ ԼԲ։ Աշոտ՝ ԼԶ։ Սա Լա ամի իշխանութեան իւրոյ թագաւորեաց Հայոց ի Բագրատունեաց. և բովանդակին ի բառնալոյ Արշակունեացն մինչ ի թագաւորելԲագրատունեաց ամք ՆԼԴ։ Սմբատ որդի Աշոտի՝ ԻԴ։ Սա ի Դվին նահատակի ի Յուսփայ։ Անիշխան՝ ամս Է։ Աշոտ, որդի Սմբատայ՝ Ը, որ և Երկաթ կոչեցաւ։ Աբաս, որդի Սմբատայ և եղբայր սորա՝ ԻԴ։ Սա շինէ զկաթուղիկէն Կարուց։ Աշոտ Ողորմածն, որդի Աբասայ, թագաւորէ Հայնի՝ ամս ԻԵ, և շինէ զփոքր քաղաքն։ Այս Խոսրովանոյշ թագուհին շինեաց զՀաղբատ նժԷ թվին։ Սմբատ որդի Աշոտոյ՝ ԺԴ։ Սա պարսպէ զքաղաքն Անի և հիմն էարկ կաթողիկէին։ Գագիկ, եղբայր Սմբատայ՝ ԻԹ։ Յովանէս, որդի Գագկայ՝ ԺԹ։

Սա վերջին թագաւոր ի Բագրատունեաց։ Աստանաւր սպառեցան թագաւորք ի տանէն Բագրատունեաց։

Աղդ՝ սկսցուք զկաթողիկոսաքս Հայոց, որ ի սրբոյն Գրիգորոյ մինչև ցայսր առ մեզ։

Դ. Կարգ կաթողիկոսաց։

ա. Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ՝ ամս Լ
բ. Արիստակէս՝ ամս Է
գ. Վրթանէս՝ ժԵ
դ. Յուսիկ՝ Ղ
ե. Փառներսէհ՝ Ե
զ. Սուրբն Ներսէս՝ ԼԴ
է. Շահակ՝ Դ
ը. Օաւէն, եղբայր Շահակայ՝ Դ
թ. Սպուրակէս, եղբայր սոցա՝ Ե
ժ. Սուրբն Սահակ՝ ծա
ժա. Յովսէփ՝ բ
ժբ. Գիւտ՝ ժԵ
ժգ. Յոհան Մանդակունի՝ ժբ
ժդ. Բաբկէն՝ Ե
ժե. Սամուէլ՝ Ե
ժզ. Մուշէ՝ ը
ժէ. Սահակ՝ Ե
ժը. Քրիստափոր՝ Ե
ժթ. Գևոնտ՝ բ
ի. Ներսէս՝ Թ
իա. Յոհաննէս՝ ԺԵ
իբ. Մովսէս՝ Է
Ի սրբոյն Գրիգորէ մինչև ի դ ամն Մովսէսի, ուր եդաւ Թուականն Հայոց, ամք՝ մխԹ։ Նա յԹ Թվականին եդաւ Հեակն. ի Քրիստոսէ ամք շծդ։
իգ. Աբրահամ՝ իդ
իդ. Յոհան՝ իզ
իե. Կոմիտաս՝ ը
իզ. Քրիստափոր՝ բ
իէ. Նղբ՝ Ժ
իը. Ներսէս՝ Ի
իթ. Անաստաս՝ Ղ
Լ. Իսրայէլ՝ Ղ
լա. Սահակ՝ իդ
լբ. Նղիա՝ ժդ
լգ. Յոհան Ուձնեցի՝ ժա
լդ. Դաւիթ՝ ժդ
լե. Տրդատ՝ իդ
լզ. Տրդատ՝ դ
լէ. Սիոն՝ ը
լը. Նասայի՝ ժդ
լթ. Ստեփանոս՝ ա
խ. Յովաբ՝ ա
խա. Սողոմոն՝ ա
խբ. Գէորգ՝ դ
խգ. Յովսէփ՝ ժա
խդ. Դաւիթ՝ իէ

խե. Յոհանէս Կոտայից՝ իբ
խզ. Օաքարիայ ի Զագայ՝ իբ
խէ. Գէորգ ի Գառնոյ՝ իբ
խը. Մաշտոց Սևանայ՝ ա
խթ. Յովանէս Պատմագիրն՝ իը
ծ. Ստեփանոս՝ ա
ծա. Թէոդորոս՝ ժա
ծբ. Նղիսէ՝ Է
ծգ. Անանիայ՝ իբ
ծդ. Վահան՝ ա
ծե. Ստեփանոս՝ բ
Անկաթողիկոս՝ ամ ա
ծզ. Խաչիկ՝ իա
ծէ. Սարգիս՝ իդ
ծը. Պետրոս՝ լթ
ծթ. Խաչիկ՝ բ
Կ. Գրիգորէս, որ և Վարհամ, որդի Գրիգորոյ Մագիստրոսի՝ ժԵ
կա. Բարսեղ՝ լա
կբ. Գրիգորէս՝ ծդ
կգ, Ներսէս՝ Է
կդ. Գրիգոր՝ Ի, եղբաւր որդի սոցին
կե. Գրիգորէս Տղայն՝ ա։ Սա արգելեալ ի բերդն Կոպիտառայ, ի գիշերի կախեալ ընդ պարիսպն անկաւ և մեռաւ։
կզ. Գրիգորէս Աղիրատն՝ Է
կէ. Յոհանէս Մեծաբարոյ՝ ժը
կը. Կոստանդին՝ խզ
կթ. Յակոբ՝ ժթ
Հ. Կոստանդին, միւս, դ ամ կեցեալ՝ աքսորեցաւ։
հա. Ստեփանոս Դռվմայեցի, բ ամ կեցեալ գերեցաւ ի Մսր։
հբ. Նա այժմ է Տէր Գրիգոր, Անավարզայ եպիսկոպոսն։

Ե. Թէ զինչ է Պատմութիւն, եւ կամ քանիք են որ յայսմանի են առ մեզ։

Իմաստութեամբն աստուծոյ զրեցան գիրք և դրոշմեալ եդան ի քարտէզս վասն պէսպէս աւգտի և պիտոյից, լրութեան թերութեան յարկի և տան աստուծոյ և մանկանցն, որ գնան յաւրէնս աստուծոյ։ Սովաւ լուսաւորեալք յոգիս, որպէս և ասացին իսկ ներհունքն և առաջինքն և ետուն ապացոյց, եթէ պարտ և պատշաճ է, որք կամին ծայրիւ միայն մատին զճաշակ առնուլ իմաստութեանն որ յաստուծոյ, ամենայն կենցաղական հեշտութեանց՝ բարեաւ մնալ թողուլ. և ծայրագոյն ողջախոհ մոլութեամբ մոլիլ զկնի իմաստութեանն երկնաւորի. զի իմաստասիրութիւն, ասէ, նմանութիւն է աստուծոյ ըստ կարողութեան մարդոյ. և իմաստասիրութիւն խոկումն մահու է, և իմաստութիւն մարդոյ լուսաւոր

առնէ զերեսս իւր. վասն զի եղաւ հիմն սկզբանն, որ յերկիւղ Տեառն և զողբիչս իւր փրկէ ի ցաւոց։ Լուսաւոր և անթառամ է իմաստութիւն և դիւրաւ երևի սիրողաց իւրոց, գտանի խնդրողացն զնա և հասանէ վաղվաղակի առ ցանկացողս իւր։ Որ կանխեաց առ նա, ոչ վաստակեսցի, զի դեղերեալ գտցէ զնա առ դուրս իւր։ Քանզի զմտաւ ածել զնմանէ, կատարեալ իմաստութիւն է, և որ տքնի վասն նորա՝ վաղվաղակի անհոգ լինի, զի ինքն շրջի խնդրել զարժանաւորս իւր. և ցանկութիւն իմաստութեան տանի յարքայութիւն։ Իսկ եթէ զի՞նչ է իմաստութիւն, պատմեցից և ոչ թաքուցից ի ձէնջ զխորհուրդս, և ածից յայտ զգիտութիւն նորա։ Եւ ոչ ստերիւրեցայց ի ճշմարտութենէն, և ոչ նախանձու մաշեալ գնացից ընդ նա, զի այն ոչ հաղորդի ընդ իմաստութեան։ Առանց նենգութեան, ասէ, ուսայ և առանց նախանձու բաշխեցի. զմեծութիւն նորա ոչ թաքուցից, զի անպակաս դանձ է նա մարդկան։ Բայց ինձ տացէ ասել ըստ միտս Տէր և խորհել արժանաւոր ըստ բանիցս ասացելոց, զի նա իսկ է իմաստութեան առաջնորդ և իմաստնոց ուղղիչ։ Զի ի ձեռն նորա եմք մեք և բանք մեր և ամենայն հանճար և գործոց խելամտութիւն։ Եւ նա տայ զանվրէպ գիտութիւն զեղելոց և որ լինելոց են։ Զի նա է ամենեցուն ճարտարապետ և ուսուցանէ զգիտութիւն. զի մտաւոր հոգի է, սուրբ, միածին, բազմաբաշխ, դիւրաշարժ, պարզ, անարատ, յայտնի, անվրէպ, բարեսէր, արագ, անարգել, բարերար, մարդասէր, հաստատուն, զգուշաւոր, անհոգ, ամենազաւր, ամենահայեաց, և ամենայն ոգւոց իրաց բաւական, մտաւորաց, նրբից, սրբոց։ Քան զամենայն շարժուն շարժնագոյն է իմաստութիւն, դարմանէ և ընդմտանէ ընդ ամենայն վասն յստակութեան։ Քանզի ճաճանչէ աստուծոյ զաւրութեանն և ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին։ Վասն այսորիկ և ոչ մի ինչ պիղծ խառնակի ի նա. քանզի նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն և հայելի անարատ աստուծոյ ազդեցութեանն և պատկեր առատութեան նորա. մի է և ամենայնի կարող. կայ յինքեան և զամենայն նորոգէ և ըստ ազգաց յոգիս սուրբս փոփոխի։ Բարեկամս աստուծոյ և մարգարէս յարդարէ։ Ոչ զոք սիրէ աստուած բայց զայն որ ընդ իմաստութեամբն կեցցէ. զի գեղեցկագոյն է նա քան զարեգակն և

քան զամենայն դիրս աստեղաց։ Ընդ լուսոյ համեմատեալ՝ առաւել գտանի, զի զնա գիշեր փոխանակէ. բայց իմաստութեան ոչ յաղթէ չարութիւն ինչ։ Զգի ի ծագաց մինչև ի ծագս, աւգտակար առողջութեամբ և դարմանէ զամենայն քաղցրութեամբ։ Զնա սիրեցի և քննեցի ի մանկութենէ իմմէ և խնդրեցի ածել ի հարսնութեան, և եղէ ցանկացող գեղոյ նորա. զաղնուականութիւն փառաւոր է, զի կենաց հաղորդութիւն ունի ընդ աստուծոյ. և ամենեցուն Տէրն սիրեաց զնա, զի խորհրդակից է աստուծոյ իմաստութեանն և ցանկացող գործոց նորա։ Եւ զի՞նչ է մեծագոյն քան զիմաստութիւն որ զամենայն ունի. և ո՞ զք քան զնա յեղելոց՝ իցէ առաւել պիտանի և աւգտակարագոյն։ Զայսոսիկ զամենայն հոգին իմաստութեան դրոշմեալ ետ մեզ, այն որ զգիտութիւն և զհանճար ուսուցանէ և զզաւրութիւն և զարդարութիւն. քան զորս պիտանագոյն չէք ինչ ի կեանս մարդկան։ Եւ եթէ բազմահմուտ ոք լինել ցանկանայցէ, սովաւ գիտասցէ զառաջինսն և զհանդերձեալսն նկատել, ճանաչել զդարձուածս բանից և զմեկնութիւնս առակաց։ Զնշանս և զարուեստս յառաջագոյն գիտէ, և զելս ժամուց և ժամանակաց։ Արդ՝ եղի ի մտի զսա ածել ինձ կենաց կցորդ, ծանուցեալ զսա խորհրդակից բարեաց և մխիթար հոգոց և տրտմութեանց։ Զայսոսիկ հոգին ծանուցանէ և յորդորէ ի սէր սիրելութեան իմաստութեան։ Եւ ի ձեռն այլոց այլով աւրինակաւ վարդապետէ և որ պիտանացունէ և կարևոր բանիս պատմութեան, մեկնէ և սահմանէ։ Պատմութիւն, ասէ, է բան արտագրեալ իրաց եղելոց կամ իբր եղելոց։ Եւ տառք պատմութեան են ՁԷՄ, իր, տեղի, ժամանակ, եղանակ, պատճառ։ Եւ երիւք կարգաւորի՝ հաւասարութեամբ, հաւանութեամբ, համառաւտութեամբ։ Որ և այլ ոմն վասն սորին ևս բնութեան վեցիւք սահմանէ մասամբք առնել զպատմութիւնս։ Նախ, ասէ, վերծանութեամբ, այսէ՝ հնոց և նորոց պատմագրութեանց։ Ներկուռ, այս ինքն, բազում անգամ, որպէս զճանապարհ հանապազակոխ, ունել ի սիրտս զմիտս և զիմաստս գրոց։ Առոգանութեամբ, ըստ ԺՀ յեղանակի՝ ըստ շեշտի, ըստ պարուկի, ըստ բութի, ըստ ապաթարցի, ըստ ենթամնայի, և ըստ այլոցն, զի ի սոցանէ միտք բանին արտայայտին,

և թարց սոցին աղաւաղին ոյնք ասացուածին։ Երկիր՝ զրուցատրութիւն, բայց քերթողականաւ հանգամանաւք և մի՝ աշխարհաբառ բառով։ Երիր՝ զի այլ լեզուաց և հին պատմութեանց տեղեակ իցէ և առձեռն ունիցի։ Ջորիր՝ ասէ, ստուգաբանութեան գիւտ, զի գիտէ ի միտս զստոյգն զատել ի ստոյն։ Հինգեր՝ համեմատութեան տեղեկութիւն, այն է՝ ճանաչել զնմանութիւն բանից առ բանս. արդեաք Սողոմոնի՞ է բանս, արդեաք՝ Մովսէսի՞. նորոյս եթէ հնոյն, մերոյս եթէ արտաքնոց, ճշմարտութե՞ան եթէ առասպելին։

Նախնին մարգարէից Մովսէս զնախն քան զինքն գործս երկնաւոր և երկրային բնութեան, յամենարուեստ հոգւոյն աստուծոյ վարդապետեալ և ուսեալ, որ դերագոյն գիտութիւն է քան զբնութիւն մարմնականաց, զգործս աստուածագործս, զոր ի կանուխ գիտութեան իւրում ստեղծ, ի սկզբանէ առնելով, անբերեալթ ունելով զերեւելին տիպ. ընդ որում ոչ ոք էր ի գործ և ոչ խորհրդակից անկարաւտին հաստչի, բայց միայն հոգին արարչակից, տայ ի ձեռն մարգարէին պատմութեամբ մեզ զարարչութեանն պայմանաւոր կարգս երկնի և երկրի և որ ի նոսա արարածք, և զոր ինչ ի սկզբանց անտի մինչև ի ներկայն ժամանակ. և ապա զգալոցն որ ինչ յապառնիսն լինելոցն էին, զորս ստուեր հանդերձելոցն փրկութեանց ասեն գիրք. թէպէտ և առ ժամայն գործէին աւրինաւքն. ի հինգ գլուխս աւանդելով, տայր առ յապա հանրական գիտութիւն, լոյս ոգւոյ որոց ի վերայ երկրի, զմեծ և զանպատում պարգևացն աստուծոյ նախաստեղծ իմաստութիւն։ Իսկ յետ այնորիկ՝ գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ և գիրք մարգարէիցն յանցիւր ժամանակի զներկայն և զգալոցն մարգարէացան։ Որպէս Սամուէլ և Նաթան մարգարէքն գրեցին զմասն ինչ Դատաւորացն և զառաջին գլուխ Թագաւորութեանն։ Իսկ զերկրորդ գլուխն և զերրորդն գրեցին Յէսու, որդի Անանիայ և Անկրորդ որդի Յովսեդիկեայ քահանայի, զոր սպան Յովաս արքայ զարեայ որդի Յովսեդիկեայ քահանայի, զոր սպան Յովաս արքայ Յուդայ։ Իսկ զչորրորդ Թագաւորութիւնն գրեաց Երեմիայ և կարիցէ զբանս իւր նման նմին և համեմատս խաւսել, զոր արդեաք և սիրիցէ։ Այլ և է համեմատութիւն, զբայս և զբանս և զառոգանութիւնս համեմատաբար դնել առ միմեանս։ Եւ վեց-

երորդն ևս, որ ասէ՝ դատումն Քերթածաց, կարի պիտանեգոյն է պատմութեան, զի սեփականագոյն է և յարմար, որ գրենն՝ գրեն և ընթերցողացն դիւրաւ դիպիցի վերծանելն ըստ տասանց առոգանութեանց։

Արդ՝ նախ ասասցին թէ՝ ոյք պատմագիրք ծանաւթք մեզ և դրացիք։ Եւ ի Բաբիլոնէ զելսն մինչև ցԱկաբայեցիսն գրեաց Եզր։ Եւ զԱկաբայեցիսն գրեաց Յովսէպոս։ Իսկ ի նորոյ աստի փրկութեան զմեզ աստուծոյ բանին գրեցաւ աւետարանն սուրբ ի Մատթէոսէ և այլն, ծանաւթս արարին զկնի եկեալսն. թէ աստուած մարմնատիպ կերպարանաւք զխոստացեալ պարգևսն կատարեաց ի մեզ, ընդ մեզ լինելով բազմաժամանակեայ ժամանակաւք, գնեաց զմեզ ազատարար արեամբն, ի կեանս ածեալ վերստին, աւերելով զմահ։ Որպէս Եւսեբի ժամանակագիր՝ զպատմութիւնն եկեղեցւոյ և զգիրս Քրոնիկոնին. և Աֆրիկանոս, և Անդրէաս, Եպիփան, Սոկրատ, Տատիանոս։ Իսկ ի նորոց աստի մերոց, նախ և առաջին պատմող Ղեբուբնա, որդի Աֆշադարայ դպրի, գրէ զգործս Աբգարու և Սանատրկայ։ Եւ հզաւրն բանիւ Ագաթանգեղոս։ Եւ Բիւզանտացին Փաւստոս։ Եւ զկնի նոցա պատմութիւն Ղերսէսի, զոր Ղազարիկ Հայոց անուանէ։ Կորեան պատմութիւն։ Եւ պատմութիւն Հայոց ի Մովսիսէ Շարագրեալ։ Եւ Ղազարիկ Փարպեցի։ Եւ Եղիշէ։ Շապուհ։ Եւ Սեբէոս որ Հերակլին է։ Եւ պատմութիւն Աղուանից։ Եւ Ղևոնտ երիցոյն։ Տէր Յովաննէս։ Եւ Ասողնիկ։ Եւ Լաստիվերտցին։ Եւ Կողբանն։ Եւ Սամուէլ երիցու։ Հուսկ ամենայնի վերջինն՝ այս որ ի մէնջս գրեալ, բայց բանիւք կարևորաւք և զարմանազան իրաւք, հարուստ և ընդանեգոյն, նոր և ծանաւթ զրուցաւք։ Եւ արդ՝ բուռն հարեալ զազգէն Բագրատունեաց և զնախնոյն մերմէ Աբգարու, զայն գիցուք սկիզբն, և քաղեսցուք ի պատմագրաց աստի համառաւտ և հակիրճ բանիւ,

—

զ. Նախնի թագաւոր Հայոց Պարոյր ի Հայկազանցն [1]

Թագ եդեալ առաջին թագաւորական պատուեալ ասի Պարոյր, քառասներորդն ի Յաբեթայ, ի զարմէ Հայկայ։ Սա աջակցեալ Վարբակայ Մարաց թագաւորի, պսակի ի նմանէ վասն բառնալոյ զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ. որպէս և ասէ քաջն պատմող Մովսէս, և ասէ այսպէս. զմերս ասեմ Պարոյր առ Սարդանապալլաւ։ Սա ոչ փոքր ինչ աւգնականութիւն տուեալ զտանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ։ Եւ արդ՝ ահա զուարճացոյց, ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաշտիճան։... Քանզի Վարբակիս մեծաւ հաստատութեամբ .... յինքն և զքաջն մեր յանկուցանէ զՊարոյր, թագաւորութեան ձև նմա խոստանալով։ Եւ բազում ամբոխ արի արանց, որք ի տէգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողաձեռնագոյնք՝ գումարէ։ Եւ այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ յինքն առեալ տիրէ ասորեստանի և Նինուէի։... Իսկ մեր առաջին ի Վարբակայ պսակեալ Պարոյր, և նորին որդի Հրաչեայ։ Եւ Հրաչեայ կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն լինելոյ։ Ընդ սովաւ ասեն կացեալ զՆաբուգոդոնոսոր Բաբելացւոյ արքայ։ Եւ սորա, ասեն, զմի ի գերելոց գլխաւորաց Նբրայեցւոց խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ, զՇամբաթ՝ յազգէ Դաւթի մարգարէի, և ածեալ զնա բնակեցոյց յերկրիս Հայոց մեծաւ պատուով. յորմէ սերեալ ազգն անուանեցան Բագրատունիք։ Ի Բագարատայ առեալ սկիզբն անուանել Բագրատունիք։ Վասն զի զկնի ժամանակաց յոլովից ի զարմէ սորին Սմբատայ, զԲագարատ թոռն սորին թագադիր և ասպետ անուանեաց առաջինն ի Պարթևաց՝ Վաղարշակ։ Եւ յայնմ աւրէ հետէ անուանեցան յանուն Բագարատայն՝ Բագրատունիք։ Բայց ծանիր զի Սմբատ անուն, զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատանեաց կոչեն, ճշմարտութեամբ է Շամբաթն, որ խնդրեցաւ ի Նաբուգոդոնոսորայ, որպէս և գրեցաք վերագոյն։

[1] Պատմ. Խորենն. Ա. իա, իբ։

է. Թէ որպէս Վաղարշակ զնախնին Բագրատունեաց զԲագարատ, թագադիր եւ ասպետ անուանեաց։

Արդ՝ զկնի անցելոյ ազգին Հայկազանց իբրև անկանէր թագաւորութիւնն Հայոց[1] ի Պարթևս, Վաղարշակ, եղբայր Արշակայ, յաւրինէ, աւրինադրէ զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ և ի թագէ։ Կոչէ առ ինքն զԲագարատ որ ի Հրէից շնորհակալութիւն նմա մատուցեալ վասն յառաջագոյն անձնատուութեանն առ թագաւորն, միամտութեանն և քաջութեանն, Ասպետ եդեալ անուն ազգին, և իշխել նմա միայն թագ ի գլուխ թագաւորին դնել, և կոչիլ թագադիր, այլ և ասպետ։ Եւ առանց ոսկոյ և ականց զկրսեր մարգարիտն երեք տակեան՝ վարսակալ ածել, յորժամ յարքունիսն և ի տան թագաւորին շրջիցի։[2]

ը. Վասն Ենանոսի Բագրատունւոյ։

Բարուն իմաստուն Մովսէս այսպէս պատմէ վասն Ենանոսի Բագրատունւոյ։ Զթէ Ենանոս՝ ասպետ և թագադիր էր Արջամայ, որդոյ Արտաշէսի, եղբաւր Տիգրանայ, հաւր Արգարու, որում Ասորիք զԱրջամ՝ Մանովա կոչէին։ Այս Արջամ, ասէ, ցասումն զեղեալ ի վերայ Ենանոսի, վասն արձակելոյն զՀիւրկանոս, Հրէից քահանայապետ, որ էր գերեալ։ Եւ Ենանոս պատճառէ ասելով, եթէ՝ փրկանս խոստացաւ ճ քանքար։ Իսկ Ենանոս առաքէ առ Հիւրկանոս, զի տացէ զխոստացեալն։ Եւ երթեալ եղբայր նորա Սենեքիա, եգիտ սպանեալ զՀիւրականոս ի Հերովդէէ. և ոչ տուաւ ճ քանքարն։ Յայնժամ բարկացեալ Արջամ հրամայեաց տանջել զԵնանոս, կամ թողուլ զաւրէնս հրէութեան և երկիրպագանել արեգական, կամ բնաջինջ լինիլ ազգի նորա։ Եւ անդէն զորդիսն Ենանոսի մատուցեալ ի սպանումն։ Յայնժամ Ենանոս յերկիւղէ սպանմանն կատարէ զկամս արքայի։ Սակայն ոչ վստահացաւ ի նա Արջամ, այլ առաքէ ի Հայս տալով նմա զաշխարհն։[3]

[1] Ի ձեռ. էր՝ հարց. մեք այսպէս ուղղեցաք։
[2] Տես Պատմ. Խոր. Բ. 7.
[3] Պատմ. Խոր. Բ. 24.

2405-20ԺԴ

Թ. Զրոյցք Սբգարու, որդոյ Սրջամայ.

Ստուգութեամբ և ըստ կարգի տիրեալ Աբգար իշխանական աթոռոյ թագաւորութեան Հայոց, զկնի Սրջամայ հաւր իւրոյ։ Սա նախ քան զամենայն թագաւորս ազգաց կանուխ հաւատաց ի կենարար Խանն Հաւր, յաստուածն իմ Յիսուս, ի ծագմանէ հաւրն բոլորից, և եդ զսա նախ ի հիմունս եկեղեցւոյ Հայաստանեաց։ Վասն զի նախապտուղ մատուցաւ ի սեղան արքայական ի տնկոյն զոր հայր մշակեաց. և առ զնախագահ աշտիճան, ուր թագաւորացն պատրաստեալ աւթևան։ Օ՛ի ընդ նմին նախնին Խագրատունեաց, Տուբիա, սքանչելին ի պնդութիւն հաւատոյ, որ ոչ ընդ այլ ազգականս իւր թուլացաւ, այլ խոյս տուեալ Սրջամայ՝ պահեցաւ ի հաւատս մինչ ի գալ Թաթէոսի։ Ի միասին հաւատացին ի Յիսուս նախնին Խագրատունեաց, Տուբիա, և թագաւորն Աբգար։ Օ՛ի երկոքեան սոքա ըստ մարմնոյ ազգք և զարմք և սերեալք Սբրահամ. զԱբգար, ասեմ, ի Քետուրական ծննդոցն՝ Սրշակայ և ի Վաղարշակայ, և զՏուբիա՝ ի Դաւթայ սերեալ և ելեալ, որոց նախնի Իսահակ և Աբրահամ։ Օ՛ի որ լուսաւորութեան և փրկութեան պատրաստեալ էր պատճառ ազգիս Հայոց, զԼուսաւորիչն, ասեմ, և զՏրդատ պահլաւունիք, և սոքա էին յարմատոյ Աբրահամու, ի Քետուրական ազանց թոռունք Վաղարշակայ։ Որոյ և Աբգար եւթներորդն ի Վաղարշակայ, նախահաւ Տրդատայ. որ թէպէտ և անցին ժամանակք յոլովք ընդ մէջ և թագաւորք Ը Սբգարու մինչև զՏրդատ՝ ա. Սանատրուկ, բ. Նրուանդ, գ. Արտաշէս, դ. Արտաւազդ, ե. Տիրան, զ. Տիգրան փոքր, է. Վաղարշակ, ը. Խոսրով. ապա Տրդատ։ Որք ի կոչմանն կանխեցին ժամանեցին։ Սոսկալի և նորալուր սիրոյ զեղմունք. ևս առաւել քան զամենայն ազգաց ի մեզ ի մետասեան (sic) ժամեայ գործաւնեայս աստուածակերտ այգւոյն։ Որոց զյաւժարութիւնն զտասն ժամեայ հեղգագործ դանդաղանսն և զերկարութիւնն կոխեալ, զսակ վարձուն ինքն նախ յափշտակեաց. Թէպէտ և ակն այլոց ազգաց չար է։ Իսկ ինն Տէր առատ է ամենեին, և զյոյժ յետինն եկն առնել նախ և բարձր և առաջին։

Ժ. Թէ որպէս չոգաւ Սբգար վասն իւրոյն ազգաց[1]։

Պարտ և պատշաճ վարկանիմ աստանաւր սակաւուք առնուլ զասացեալն ի Մովսէսէ. թէ՝ յորժամ չոգաւ Աբգար Սրշաւրի, որպէս յարդարեաց զորդիս Աբշաւրի։ Վասն զի ի մեռանելն Աբշաւրի ի քաղաքին Իւրում Խալէս, երէց որդին նորին՝ Արտաշէս, յարուցեալ ի վերայ այլ եղբարցն և քեռն, յափշտակել զիշխանութիւն հաւրն, դնէ զնոսա ի բանտ մահու։ Վասն այսպիսի զուժի երթեալ Աբգար Սրշաւրի, համոզէ զեղբարսն ի խաղաղութիւն, և կացուցանէ զանդրանիկն գլուխ և առաջին ի վերայ եղբարցն՝ զԱրտաշէս։ Իսկ զկրսեր եղբարսն՝ զԿարէն և զՍուրէն և զքոյրն՝ զԿոմշ ի հնազանդութիւն նմա։ Այլ դնէ աւրէնս և ուխտադրութիւնս ի մէջ նոցա։ զի եթէ հասցէ ի պակասումն և ի սպառումն թագաւորութիւնն ի տանէ և յորդոց Արտաշէսի, մի՛ տալ աւտարազգոյ ումեք պայազատել, և անկանել ի ժառանգութենէ հայրենի. այլ յորդոց եղբարցն առնուլ զիշխանութիւն և զանուն։ Դնէ և անուանս նոցա յանուն քաղաքին իւրեանց Խալէսայ՝ Պահլաւս։ Այլ ցեղս որոշէ զնոսա անուամբ այսպիսեաւ՝ Կարէնի Պահլաւ, Սուրէնի Պահլաւ, և զազգ քեռն՝ Ասպահապետի Պահլաւ, յանուն առնն Կոմշայ անուանեալ, որ էր ասպետ, Սրշաւրէ հաւրէն Կոմշայ կարգեալ ասպետ ամենայն արեաց աշխարհին։ Իսկ մերն Լուսաւորիչ ի Սուրէնեանն[2] Պահլաւէ էր. և ազգ Կամսարական ի Սուրէնեանն[2] Պահլաւէ։ Այլ արդ՝ զի ոչ իբր աւելաբանութիւն թուեսցին յիշատակ կարգելոց բանիցս. ի սոցանէ ցուցից զազգականութիւնս երկուց թագաւորացն, Տրդատայ, ասեմ և Աբգարու։ Որպէս կամք նախատեսակ կամացն յարդարեցին, նախ քան զգոլն արարածոց, և որպէս վասն Աբգարու և նախնեացն Խագրատունեաց ծանուցաւ ի միւում ժամանակի ծագումն ողորմութեանն աստուծոյ, հաւատալ ի բանն աստուծոյ. սոյնպէս և ի նոյն գթութիւն պատրաստեցան երկուց թագաւորացն ծնունդք, Սրշակայ և Վաղարշակայ, մարմնական իշխանութեամբ և հոգևորական թագաւորութեամբ,

1 Պատմ. Խոր. բ. 28.

2 Ի ձեռ. էր՝ Սուրեանն։

մեծացուցանել զազգս Հայոց. այն որ սովորն է յարհամարհս և յոչինչս մեծ ցուցանել մեծութիւն, զի զաւրութիւն նորա ի տկարութեան կատարի, և փառքն մի՝ կարծիցին ամբարձեալ ինչ սնոտի կամաց մարդկայնոց. այլ ճշմարիտ իշխողի և կառավարի, կարողին աստուծոյ։ Այլ որպէս ասացաք վերագոյն, ի հաւատոց Աբրահամու ծնեալք և սերեալք, ի խոստացեալ ճշմարիտ աւրհնութիւն ժամանեցին և հաւատացին ծնունդք նոցին։ Այլ որպէս եղաք որդիք հաւատոցն Աբրահամու, և ի մարմնասեր նորայն մի՝ զրկեսցուք ազգականութենէ։ Այսպէս հաւատարիմ է բանս։ Արշակ Քաջ, թագաւորեալ ի զաւակէ Աբրահամու ի Քետուրական ծննդոց։ Զայս ձայն աւետեալ առ Աբրահամ, թէ՝ թագաւորք ի քէն ելցեն։ Որք թագաւորեցին մտրմնական արութեամբ և հոգևորական պերճութեամբ ի կեանսն յաւերժականս։ Այլ որպէս ունիմ ասել, թագաւորէ[1] Արշակ Քաջ, յետ Կ ամի մահուանն Աղեքսանդրի, ի վերայ Պարթևաց ի քաղաքին Բալխ Առաւաւտին, յերկրին Քուշանաց, թափելով զամենայն արևելեայսն։ Ընդու և զթագաւորութիւն Բաբելոնի զկնի ամաց տասանց Անտիոքեայ Թէոսեայ։ Այլ զկնի Քաջին Արշակայ, որդի նորին Արտաշէս։ Զսա պայազատէ Արշակ որդի նորին, որ Մեծն կոչեցաւ։ Սա պատերազմի ընդ Դեմետրեայ, և (ընդ) որդոյն Դեմետրեայ Անտիգոնեայ. քանզի ի վերայ նորա եկն ի Բաբելոն։ Կալեալ զնա Արշակ Մեծ տարաւ ի Պարթևս հանդերձ երկաթի կապանաւք, ուստի և Սիրիպինդէսն[2] կոչեցաւ։ Այլ տիրեալ երրորդ մասին աշխարհի, որպէս ի պատմութեանցն Հերոդոտեայ ուսանիցիս. զի յերիս բաժանեալ զբոլոր աշխարհս, դնէ անուանս նոցա՝ Եւրոպայ, Լիբէ և Ասիա, որում տիրեաց Արշակ Մեծ՝ ամս ծգ։ Սա զվաղարշակ զեղբայր իւր թագաւոր կացուցանէ ամենայն աշխարհիս Հայոց ի խա ամի իւրոյ թագաւորութեանն։ Այլ արդ՝ վասն զի պահանջէ հանէ յընդարձակ և ի լայն սփիւռս զբանն պատմութեանն օրէնք, դարձեալ ի սոցանէ երկոցունց բերցուք ի մի տեսակ։

[1] Պատմ. Խոր. Բ. 2.

[2] Ուղղագրն՝ Սիդերիտէս, σιδηρίτης, այսինքն՝ երկաթեայ կամ երկաթեղէն։

Արշակ Քաջ՝ լա.
Արտաշէս՝ ի զ.
Արշակ Մեծ՝ ծգ.
Արշական՝ է.
Արշանակ՝ լա.
Արշէս՝ ի.
Արշաւիր՝ խզ.
Արտաշէս՝ լդ.
Դարեհ՝ է.
Արշակ՝ ժթ.
Արտաշէս՝ ի.
Պերոզ՝ լդ.
Վաղարշ՝ ծ.
Արտաւան՝ լա։

Զոր սպան Արտաշիր Ստահրացի։ Այլ ազգային նորին Խոսրով, հայր Տրդատայ, խնդրէ զվրէժ ազգայնոյն յԱրտաշիրէ բռնակալէ՝ ամս ժ։ Որպէս և անուանին իսկ Պահլաւք յանուն քաղաքին Բալխայ, և Արշակունիք՝ յԱրշակայ։

Կարդ ազգին Վաղարշակայ։
Այսպէս և եղբայր նորա ասասցի
Վաղարշակ, թագաւորն Հայոց, ամս՝ ի.
Արշակ՝ ամս ժզ.
Արտաշէս՝ ամս իե.
Տիգրան ամս լզ.
Արտաւազ՝ ը.
Արշամ՝ լը.
Աբգար՝ լը.
Սանատրուկ՝ է.
Արուանդ՝ ի.
Արտաշէս՝ խա.
Արտաւազ՝ ը.
Տիրան՝ իա.
Տիգրան՝ խբ.
Վաղարշ՝ իա.
Խոսրով՝ խը.

Ի իթ ամի Խոսրովու սպանանի Արտաւան, ազգական նորա։

Այլ արդ՝ այսպէս ուսաք զազգաբանութիւն սոցա յԱբրահամէ զոլ։ Ընդու, ասէ, Աբրահամ իւր կին զՔետուր, զաղախին իւր, և ի նմանէ ծնանի զԶմրան եղբարբն։ Իսկ իբրև ծնաւ աւետացն ժառանգ՝ Իսահակ, հանեալ զաղախինն ընդ արևելս և զորդիս նորին. յորոց ծննդոց՝ Արշակ և Արշակունիք։ Այլ կատարումն աւրհնութեանն գլխաւորեալ ճշմարտի ի թուունս նոցին, որպէս և ասացաք, յԱբգար, ի Տրդատ, ի մերն Լուսաւորիչ Գրիգոր, որք ժառանգեցին զխոստացեալ աւրհնութիւնն մարմնով և հոգւով, ընդ թագաւորեալսն յաստուծոյ։ Զի յաւրհնութենէ անտի Աբրահամու մինչև ցմկրտութիւնն կենարարին բովանդակին ամք սծգ, և մինչև ցլուսաւորութիւն ի սրբոյն Գրիգորէ՝ ոյիզ։ Արդ՝ այսպէս պատուեալ զտունս թորգոմեան,

զազգս ապքանագեան, զզարմս յաբեթեան, զսերունդս հայկական, անուանեալ յանուն միածնի իւրոյ Քրիստոնեայս, արար և որդիս հաւատոցն Աբրահամու, և ժառանգս ճշմարիտն Իսահակայ, որ-դւոյն Միածնի Յիսուսի Քրիստոսի, Տեառն և Աստուծոյ։ Օ՝այսս և զայսպիսի իրի պատահումն ոչ անխորհրդաբար և ոչ առանց մեծի տեսչութեան և դթոյ և խնամոյ և սիրոյ վարկանիմ պատուեալ և մեծարեալ մարդասէր փրկչին. որում փառք և մեծապէս գոհութիւն, խնամողին և մեծարողին և յարգողին զազգս հայոց մարմնաւոր և հոգեւոր փարթամութեամբ. աւրհնեալ է նա յաւիտեանս։

Ժա. Սկիզբն Բագրատունեաց։

Սկսանիմք համառաւտիւք քաղել զյիշատակս Բագրատունեացն՝, մինչև բերեալ հասուսցուք ի վերջին թագաւորն Բագրատունեաց՝ Յովաննէս. նախ՝ զասպետսն թագադիր իշխանս և ապա զթագաւորեալսն զկնի նոցին։ Աշակ, որդի Վաղարշակայ, մերոյ առաջին թագաւորին Պարթևաց, թագաւորէ՝ ամս ԺԶ։ Ընդսմանէ[1] ասի ի գիրս բազում արութիւն և կարգս ուղղութեան յարդարեալ, և զպոնտացիսն վանեալ։ Այլ զբոլորատեղ նիզակի իւրոյ խորագոյն հարստէ ի սիրտ վիմի մոյ մեծի, ի նշան յիշատակի կանգնէ յեզր ծովուն Պոնտոսի, զոր համբաւէին զայն նիզակ մխեալ արեամբ զեռնոց։ Օ՝որ և յետոյ թէպէտ և պատուեցին զարձանն, իբր զզարմանալի իմն և զհրաշալի գործ. սակայն ընկեցին ի ծովն Պոնտոսի, յաղագս միւսանգամ գոռալոյն Արտաշիսի ընդ նոսա։ Իսկ այսպէս պատմէ Մովսէս վասն սոցին Բագրատունեաց. թէ՝ յաւուրս Տիգրանայ Աշակունւոյ, որդոյ Արտաշէսի, որդոյ Աշակայ, որդոյ Վաղարշակայ առաջնոյ մերոյ, որ թագաւորէ Տիգրանս այս յինն և Ժ ամի Աշանակայ[2], աղգայնոյն իւրոյ, թագաւորին Պարսից։ Սա յետ սպանման հաւրն ժողովէ զզաւրս Հայոց, ընդդէմ երթալ զաւրացն յունաց և ընդդէմ բախեալ ի վերջ նհանջէ։ Այլ ինքն չուեալ գայ Ամնի, որ կոչի

[1] Պատմ. խորեն. Բ. 9.
[2] Պատմ. խորեն. Բ. 14.

Կամախ, և զԱրտեմիդեայ պատկերն կանգնէ Այրիզայ, և զոհս և երկրպագութիւն նախարարացն հրամայեաց մատուցանել. զոր ոչ առեալ յանձն ազգին Բագրատունեաց։ Այլ մի ոմն ի նոցանէ անարգեալ յայտնապէս զաստուածսն և քաջապէս դաւանեալ զանուն ճշմարտին Աստուծոյ. վասն որոյ հատանի լեզուն գովելի ի վերայ յայտնի խոստովանութեանն և անարգութեան դիցն. որում անուն Աստուդ ճանաչիւր։ Իսկ այլքն յանձն առին ուտել զմիս զոհիցն, այլ ոչ զերկրպագութիւն կռոցն։

Ժբ. Ցաղագս Սրգարու։[1]

Որդի Աշամայ՝ Աբգար թագաւորէ ի վերայ ամենայն Հայոց ի Ի ամի Աշաւրի, պարսից արքայի։ Այս Աբգարիոս կոչի ա-ւադ այր վասն առաւել հեզութեանն և իմաստութեանն։ Այլ ոչ կարացեալ ուղղախաւսել յունաց և ասորոց՝ կոչէին Աբգար։ Սա ի ձեռն մերոց զաւրաց առնու զվրէժ արեան և սպանման մերոյ։ Չէն արդարոյ և կարապետին կենաց։ Որպէս միաբանի ընդ Աբրեթ Աբգար և սաստկապէս խորտակեն զզաւրսն Հերովդի, վասն զի անարգեաց զդուստր Աբրեթայ արքայի, և առ զՀերոդիադայ, որով գորեաց զդործ դառն և առաւել դաժան։ Իսկ ի ժամանակին իբրև դարձաւ Աբգար յարևելից, որ երթեալ միաբանեաց զեղբարս ազգի իւրոյ, առաքէ զերկուս ի գլխաւոր նախարարաց իւրոց՝ զՄարիհաբ բդեշխն և զՇամշագրամ առ Մառինոս հազարապետ պաղեստինացւոց և փիւնիկեցւոց և ասորոց, և զՆանհաւատարիմ իւր, վասն զդացուցանելոյ նմա զպատճառ երթալոյն իւրոյ յարևելս։ Իսկ առաքեալքն ի նմանէ իբրև չոգան անդ, վասն հրաշալի համբաւոյն Քրիստոսի, ելին Այրուսաղէմ՝ տեսանել զնա։ Որ և ականատես եղեալ զքանչելի գործոց նորին, եկեալ պատմեցին Աբգարու. և նա ի համբաւոյ արանցն հաւատացեալ ասէ. «այդ սքանչելիք, զոր պատմէք, ոչ մարդոյ է, այլ Աստուծոյ ճշմարտի»։ Այլ վասն ցաւոց մարմնոյն, զոր ախտացաւ յերկրին պարսից, որ էլ ընդ հնարս մարդկան, գրէ թուխթ առ Քրիստոս՝ գալ և բժշկել զնա։

[1] Պատմ. խորեն. Բ. 26, 27, 29, 30.

Ժդ. Թուխթ Ընդարու, զոր կարդաւ դրէ բարուն Մովսէս զբանս Թղթոցն, այսպէս։[1]

"Ընդար Ընշամայ, իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար յաշխարհիդ Յրուսաղէմայ, ողջոյն։ Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինի ի ձեռս քո, առանց դեղոց և արմատոց։ Զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ, զբորոտս սրբել, և զայսս պիղծս և զդևս հանել. և որք միանգամայն չարչարեալն են ընդ յերկար հիւանդութեամբք՝ բժշկես։ Դու և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եղի ի մտի իմում զմի յերկուց. կամ թէ դու իցես աստուած իջեալ յերկնից՝ գործես զայդ. կամ որդի իցես դու աստուծոյ և զայդ առնես։ Ընդ՝ վասն այնորիկ գրեցի ես աղաչել զքեզ, զի աշխատ լիցիս, եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես։ Նա և լուայ, զի հրէայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և դեղեցիկ է իմ. բաւական է մեզ երկոցունց։" Որոյ առաքեցանն տարածեալ զթուղթն, պատահեցին նմա յԵրուսաղէմ։ Զայս վկայէ և աւետարանական բանն, թէ՝ էին ոմանք ի հեթանոսաց եկելոց առ նա։ Վասն որոյ ոչ համարձակին ջրք լուանն՝ ասել զՅիսուս։ Իսկ ինքն Փրկիչն մեր, յայնմ ժամանակի, յորում կոչեաց զնա Ընդար, ոչ առ նմա յանձն. բայց թղթոյ արժանի արար զնա, որ ունէր աւրինակ զայս։

Ժդ. Թուխթ Քրիստոսի, զոր գրեաց առ Ընդար, ի ձեռն Թումայի։[2]

"Երանի իցէ այնմ որ հաւատայ յիս, իբրու չիցէ նորա տեսեալ զիս։ Զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանենն զիս, ոչ հաւատան յիս. և որք ոչ տեսանիցեն զիս, նոքա հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այնր, զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ. արժան է ինձ կատարել ամենայն ինչ, վասն որոյ առաքեցայ ես։ Եւ իբրև կատարեցիս զայս, ապա համբարձայց։ Առաքեցիս քեզ մի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանք քեզ և որոց ընդ քեզդ են՝ շնորհեսցէ։"

[1] Պատմ. խորեն. Բ. 32.
[2] Պատմ. խոր. Բ. 32.

Զայս թուղթ եբեր Ընան, սուրհանդակ Ընդարու. ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերի։

Ժե. Քարոզութիւն առաքելոյն Թադէոսի յԵդեսեայ եւ մկրտելն զԸբգար, ընդ որում եւ զՏուբիա Բագրատունի։[1]

Յետ համբառնալոյ փրկչին մերոյ, Թովմաս առաքեալ, մի յԼեւոնիցն, առաքեաց, զԹադէոս, որ էր մի յեւթանասնից անտի, ի քաղաքն Եդեսեայ՝ բժշկել զԸբգար և աւետարանել ըստ բանին Տեառն։ Որոյ եկեալ եմուտ ի տուն Տուբիայ, իշխանի հրէի, զոր ասեն լինել յազգէն Բագրատունեաց։ Որոյ խաւսեալ Ընշամայ ոչ ուրացաւ զհրէութիւնն ընդ այլ ազգականս իւր, այլ նոյն աւրինաւք եկաց մինչև ի հաւատալն ի Քրիստոս։ Եւ էլ համբաւ առաքելոյն ընդ ամենայն քաղաքն։ Լուեալ Ընդարու, ասէ. "նա է, վասն որոյ գրեացն Յիսուս„. և իսկոյն կոչեաց զնա։ Եւ եղև ի մտանել Թադէոսի, տեսիլ մեծ երևեցաւ Ընդարու յերեսսն Թադէոսի։ Եւ յարուցեալ ի գահոյիցն անկաւ ի վերայ երեսաց իւրոց, և երկիր եպագ նմա։ Եւ զարմացան ամենայն իշխանքն որ շուրջ կային, զի ոչ գիտացին զտեսիլն։ Եւ ասէ ցնա Ընդար, թէ՝ "դո՞ւ իցես արդարև աշակերտ աւրհնելոյն Յիսուսի, զոր ասաց ինձ առաքել այսր, և կարո՞ղ իցես բժշկել զցաւս իմ„։ Պատասխանի ետ նմա Թադէ.„ եթէ հաւատասցես ի Յիսուս Քրիստոս յորդին Աստուծոյ, տացին քեզ խնդրուածք սրտի քո„։ Ասէ ցնա Ընդար. "Ես հաւատացի ի նա և ի հայր նորա. վասն որոյ կամեցայ առնուլ զզաւրս իմ և գալ կոտորել զհրեայսն, որ խաչեցինն զնա, եթէ ոչ էր արգելեալ վասն թագաւորութեանն հռովմայեցւոց„։ Եւ յայս բանէ սկիզբն արարեալ Թադէի, աւետարանեաց նմա և քաղաքի նորա. և եդեալ ձեռն ի վերայ՝ բժշկեաց զնա և զԸբգիու պատգրոս, իշխան քաղաքին։ Նա և զամենայն որ էին ի քաղաքին հիւանդք և ախտաժէտք՝ բժշկեաց, և հաւատացին ամենեքեան։ Եւ մկրտեցաւ ինքն Ընդար և ամենայն քաղաքն։ Եւ ոչ զոք բռնութեամբ ածէր ի հաւատս, բայց աւր ըստ աւրէ յաւելեալ ի հաւատացեալսն՝ բազմանային։ Իսկ

[1] Պատմ. խոր. Բ. 33.

առաքելոյն Թադէի զխոյրարար ոմն մետաքսագործ մկրտեալ և անուանեալ Աղդէ, ձեռնադրեալ ի վերայ Եդեսեայ, փոխանակ իւր Թողու առ արքայի։ Եւ իւր առեալ հրովարտակ յարքայէ, զի ամենեքեան լուիցեն աւետարանին Քրիստոսի, դայ առ Սանատրուկ քեռորդի նորին, զոր կարգեալ էր ի վերայ աշխարհիս զաւրաց։ Բայց Աբգար յաւժարեցաւ գրել Թուղթ առ Տիբեր՝ աւրինակ զայս։

Ժզ. Թուխթ Աբգարու առ Տիբեր։ [1]

"Աբգար, արքայ Հայոց, Տեառն իմոյ Տիբերեայ կայսեր հռովմայեցւոց՝ խնդալ։ Գիտելով իմ, թէ ոչ ինչ ծածկի ի քումմէ թագաւորութենէդ. այլ իբրև զմտերիմ քո, աւելի ևս իմացուցանեմ ի ձեռն գրոյս։ Զի հրեայք, որք ընակեալ են ի գաւառս պաղեստինացւոց, ժողովեալ խաչեցին զՔրիստոս առանց իրիք յանցանաց, ի վերայ մեծամեծ երախտեացն զոր արար՝ նշանս և սքանչելիս, մինչև զմեռեալս անդամ յարուցանել։ Եւ գիտեա, զի զաւրութիւնքս այս ոչ են սոսկ մարդոյ, այլ աստուծոյ. զի ի ժամուն յորում խաչեցին զնա, արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեալ տատանեցաւ, և ինքն յետ երից աւուրց յարեաւ ի մռելոց և երևեցաւ բազմաց։ Եւ այժմ յամենայն տեղիս անուն նորա, ի ձեռն աշակերտաց նորա, սքանչելիս մեծամեծս կատարէ. որ և առ իս ինքն իսկ եցոյց յայտնապէս։ Եւ արդ՝ այսուհետև տերութիւնդ քո գիտէ, որ ինչ արժանն է հրամայել ի վերայ ժողովրդեանն հրէից, որք զայնն գործեցին. և գրել ընդ ամենայն տիեզերս, զի երկրպագեսցին Քրիստոսի իբր ճշմարտի աստուծոյ։"

Ժէ. Պատասխանի Թխթոյն Աբգարու ի Տիբերեայ։

Տիբեր կայսր հռոմայեցոց Աբգարու, թագաւորին Հայոց, խնդալ։ Զթուղթ մտերմութեան քո ընթերցան առաջի իմ. վասն որոյ շնորհակալութիւն քեզ ի մէնջ հասցէ։ Թէպէտ և ի

[1] Պատմ. Խոր. Բ. 33.

բազմաց լուեալ է մեր յառաջագոյն, եցոյց և Պիղատոս ստուգապէս վասն նշանացն նորա և թէ յետ յարութեան նորա հաւատարիմ եղև՝ թէ աստուած է։ Վասն որոյ և ես կամեցայ առնել զայդ, զոր դուդ խորհեցար։[1]... Այլ մեք տուաք հրաման ամենայն ուժեք, որում և հաճոյ թուեսցի Յիսուս, ընկալցին զնա ընդ աստուածս. և մահ այնոցիկ սպառնացեալ, որ չարախաւս կայցեն զքրիստոնէից։ Եւ վասն ժողովրդեան հրէից, որ յանդգնեցան խաչել զնա, զորմէ լսեմ թէ ոչ արժանի խաչի և մահու էր նա, այլ պատուի և երկրպագութեան, յորժամ առից պարապումն ի պատերազմէս սպանիացւոց, քննեալ հատուցից նոցա զարժանն։

Ժը. Դարձեալ Աբգարու առ Տիբեր։

Աբգար արքայ Հայոց, տեառն իմում Տիբերի, կայսեր հռոմայեցւոց, խնդալ։ Զթուղթ գրեալ ըստ արժանի քո տէրութեանդ տեսի, և ընդ հրաման մտածութեանդ քո, ուրախացայ։ ... Բայց քեզ, տեառն իմում հաճոյ (թուեսցի) առաքել (զայլ ոք) Յերուսաղէմ փոխան Պիղատոսի, զի լուծցի նա անարգանաւք յիշխանութենէն, յորում կարգեցերն զնա. վասն զի արար զկամս հրէիցն և խաչեաց զՔրիստոս տարապարտուց։ Ողջ լինել քեզ ըղձամ։

ԺԹ. Այլուստ պատկան սորին կարգի։

Իսկ թագաւորն Աբգար, իբրև զճշմարիտ նախանձաւոր փրկչին, առնու վրէժս ի գրժողաց փրկչին գրով և յորդորմամբ զթագաւորս հռոմայեցւոց, մինչև զկատարումն առ խնդիրն ի Տիտոսէ և ի Վեսպ(աս)իանոսէ, զկնի Խ ամաց։ Այլ իբրև տեղեկացաւ կայսր Տիբեր զնենդաւոր գործն Պիղատոսի յԱբգարու, առաքէ կոչէ զնա ի դուռն թագաւորական, առնել նմա ըստ արժանոյ անաւրէնութեանն։ Եւ մինչ նաւէին ի վերայ Ովկիանոսի, ծանուցեալ զսաստիկ սպառնալիս կայսերն, անձամբ արար զվրէժ անձին իւրոյ, ընկէց զինքն ի խորս ալեացն և հեղձամղձուկ եղեալ,

[1] Պատմ. Խոր. Բ. 33.

սուղեցաւ յատակս անդնդոց։ Եւ այսպէս մասնաւորն ի բազմաց ամենայն անյուսաբար համարձակելոց ի Բանն Աստուծոյ, խնդրեցան վրէժք, առ ի լինելոյ հաւատարիմ դատաստանին Աստուծոյ։

Ի Ցաղագս Սանատրկայ։

Արդ՝ Թագաւորէ Հայոց զկնի Աբգարու քեռորդի նորին Սանատրուկ։ Քանզի իբրև կալաւ զթագաւորութիւնն Աբգար՝ զամս լը, վախճանեցաւ Ճշմարիտ խոստովանութեամբ։ Այլ որդի նորին՝ Անանուն, ոչ ըստ առաքինութեան հայրենի գնայր, այլ եբաց զդրունս մեհենից և խոտորեցաւ ի կռամոլութիւն։ Եւ յայնմ հետէ պատառեցաւ Թագաւորութիւն Հայոց՝ յերկուս։ Անանուն Թագաւորէ Յադեսեայ, և Սանատրուկ՝ ի Հայս։ Այլ Սանատրուկ ի քարոզութեանն Թադէի հաւատաց, որ և հետոյ և սա յերկիւղէ նախարարացն դարձեալ ուրացաւ, և չարչարեաց զառաքեալն և զդուստր իւր զՍանդուխտ, մատուցեալ ի նուէր երանելի նուիրին։ Ըստ սմին աւրինակի, Անանուն և զԱդդէ նահատակեալ սրով, յանկարծուստ զոտս նորա կտրեալ. վասն զի առաքեալ առ նա՝ առնել խոյր գլխոյ նորա ըստ աւրինակի հաւրն։ Իսկ նորա պատասխանեալ ասէ. Թէ՝ ոչ գործեսցեն ձեռք իմ խոյր գլխոյ, որ ոչ խոնարհեալ երկրպագէ որդոյն Աստուծոյ։[1]

Եւ Սանատրուկ[2] ժողովէ զաւր ի ձեռն քաջացն Բագրատունեաց և Արծրունեաց, իւրոց դայեկացն, և պատերազմի ընդ որդիսն Աբգարու, զի բովանդակ առցէ զթագաւորութիւնն։ Եւ նա մինչև այսպէս պաշարեալ կայր ի դողման մեծի, ի վերուստ նախաժամանեալ նմա վրէժն Աղդէի արդարոյ։ Վասն զի ի վերնատան ապարանի իւրոյ տայր կանգնել սիւն կձեայ, և ի ներքոյ անցեալ Անանունս կամէր պատշաճել ինչ. անկեալ սեանն ի վերայ նորայ, չարաչար սատակեաց զամբարշտեալն. և այն ինչ պատշաճապէս պատշաճեաց զգործն։ Վասն զի անձնատուր եղեն բնակիչք Յադեսեայ առ Սանատրուկ, միայն զայս ուխտ խնդրեալ ի նմանէ, զի մնասցեն ի դաւանութեան զոր ունէին առ Քրիստոս. զոր և ուխտեալ՝ յետոյ

[1] Պատմ. Խոր. Բ. 34.
[2] Պատմ. Խոր. Բ. 35.

ստեաց, վասն զի կոտորեաց զամենայն որդիսն Աբգարու։ Իսկ Սանատրուկ վասն այնր, ասի, կոչիլ անուն. զի ճանապարհ կալեալ քեռ Աբգարու ի Հայս, կալեալ զնոսա բքոյ ի լերինս Կորդուաց, և ցրէր զամենեսեան։ Եւ դայեակ մանկանն, քոյր Բիւրատեայ Բագրատունւոյ, կին Խոսրոնեայ Արծրունւոյ, առեալ զմանուկն՝ եդ ի մէջ ստեանցն, լեալ ի ներքոյ ձեանն զերիս տիւս և զերիս գիշերս։ Եւ Մովսէս[1] ասէ, եթէ՝ շան սպիտակ լեալ ընդ նոսա ի բնակելն ի մէջ ձեանն, աւգնական ջերմութեան դտեալ. զոր և դայեկին կարդացեալ զմանուկն՝ Շանատուրք։ Սա Թագաւորեալ ամս է, մեռանի ի դիպմանէ նետոյ որսոյ, զվրէժ առեալ սպանման դստերն։

Իսկ զկնի մահուանն Սանատրկայ, շփոթեալ Թագաւորութեանն, անկանի յաւտարածին,[2] առասպելածինն համբաւեալ և ոչ յաւրինական խառնից, ի վարար կնոջէ արշակունոյ, Երուանդ անուն մանկանն, սնի ի դրան Սանատրկայ. որոյ, ասի, առնուլ զթագաւորութիւնն յաղագս առատաձիր ձեռացն։ Սա մերժէ զաղդ Բագրատունեաց, ոչ լինել թագադիր ինքեան ըստ աւրինի թագաւորացն. և կոտորէ զորդիսն Սանատրկայ, որպէս նա զորդիսն Աբգարու։ Եւ զմի ոմն յորդոցն Սանատրկայ առեալ ստնտուն, փախեաւ ի սահմանս Հերայ. և ծանուցանէ Սմբատայ Բիւրատեան ի Սպեր դաւառ։ Իսկ նորա երթեալ վաղվաղակի առեալ զմանուկն Արտաշէս, ի վանս հովուաց դաղտագողի սնուցանէր։ Եւ անցանէ առ Դարեհ արքայ պարսից և պատուի մեծապէս յաղաղս քաջութեանն. և մանուկն կարգի ընդ որդիս արքայի։ Այս որդիս Սանատրկայ Արտաշէս սնանի առ Դարեհի։ Եւ յղէ[3] առ Դարեհ Երուանդ՝ տալ ի ձեռս զմանուկն. և նա ոչ առեալ յանձն տալ։ Յայնժամ առաքեալ Երուանդայ, կոտորեաց զդաղտականսն ի Բայբերդի. և զդստերսն առեալ՝ դնէ յԱնի։ Եւ ինքն ի կասկածանաց աղէտին հասելոյ Արտաշէսի, տայ ձեռս ի Տիտոս և ի Վեսպիանոս, թողլով ի նոսա զՄիջագետս։ Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւն (Հայոց) ի Միջագետաց և յԱդեսեայ և

[1] Պատմ. Խոր. Բ. 36.
[2] Պատմ. Խոր. Բ. 37.
[3] Պատմ. Խոր. Բ. 38.

գրաւեցաւ ընդ տէրութեամբ հոռոմոց։ Եւ փոխէ Երուանդ զարքունիսն Այրմաւրայ՝ Այրուանդաքար[1]։ Յետ այսորիկ Մովսէս պատմէ զթագաւորեցուցանելն Արտաշէսի ի թի ամի Դարեհի։ Եւ ինքն Սմբատ պատուի յարքայէ, հաւատալով ի նա զամենայն վերակացութիւն աշխարհին։[2]

Իա. Հին անուանք Բագրատունի։[3]

Ի սկզբան անդ մինչդեռ ի հրէութեան աւրէնս էին ազգն Բագրատունեաց, էր յորջորջումն անուանց նոցա՝ Բագատիա, Տուբիա, Լղենան (?), Սարեա (?), Վաղարիա, Ենանոս։ Իսկ որ այժմ կոչին Բագրատունիք ի Բագարատայ՝ Բագադիայէ, և Սուրդա՝ Աշոտ, և Վաղարեայ՝ Վարազ, որպէս Շամբաթ՝ Սմբատ փոխարկեցաւ։

Իբ. Ցաղագս խառնելոյ խնամութեամբ Բագրատունեաց եւ Արշակունեաց։

Կամիմ աստանաւր ցուցանել զխառնիլն խնամութեամբ Բագրատունեաց և Արշակունեաց, և անդանաւր սկիզբն արկեալ տեսչութեանն Աստուծոյ, հանել զնոսա ի պատիւ և յաթոռ թագաւորութեանն, զնախնոյն նոցա զԴաւթի մարգարէի և զաստուածահաւր խոստացեալ խոստումն։ Եւ վաւերական առնէ զբան ճշմարիտ ուխտին, ի թագաւորական դնել աթոռ. որպէս ի ձեռն հաւատալոյն ի Քրիստոս, թագադիրք և ասպետք մեծարեցան ի թագաւորացն արշակունեաց, նա և խնամութեամբ ընդ նոսին խառնեալ պատուադրեցան։ Եւ իբրև կարի գովելի և ուղիղ կենաց զկետ եղեն, զԴաւթեանն ժառանգեցին աւծումն և պատիւ, նստելով յաթոռ նորա, ի վերայ բոլոր Աշոտ յերկրիս հայաստանեաց ի Շիրակ գաւառի, ի Շիրակաւանն աւանի, որպէս հանդերձեալ եմք գրել։ Բայց նախ կարգեսցուք զխառնիլն խնամութեամբ. յետ այնորիկ ապա զգալն կարգաւ ի հաւրէ յորդի, մինչև Աշոտ, նախնին թագաւորաց։

[1] Պատմ. խոր. Բ. 39. Երուանդաշատ։
[2] Պատմ. խոր. Բ. 43-47.
[3] Պատմ. խոր. Բ. 63.

Ի թագաւորեցուցանել[1] Թէոդոսի մեծի զԱրշակ և զՎաղարշակ, զորդիսն Պապայ, յետ սպանելոյն զՊապ, ի վերայ Հայոց, Արշակ առնու կին զդուստր Բարկայ, Սիւնեաց իշխանին. իսկ Վաղարշակ փեսայանայ Սահակայ ասպետի Բագրատունոյ։ Եւ աստանաւր խառնեցան խնամութեամբ Արշակունիք և Բագրատունիք, որպէս և ասացաւդ։ Արշակ և Վաղարշակ, որդիք Պապայ, Պապ՝ Արշակայ, Արշակ՝ Տիրանայ, Տիրան՝ Խորովայ, Խոսրով՝ Տրդատայ։

Իգ. Գործք Սմբատայ քաջի։

Ի և այս գործք քաջութեան արժանի յիշատակի ազգին Բագրատունեաց։ Վասն զի ի ժամանակին, յորում ըմբռնեցաւ Արշակ թագաւոր Հայոց ի թագաւորէն պարսից Շապհոյ. որոյ նենգեալ յաղագս ըմբռնմանն, ընդ սուր ելանէ կամաւորաբար և մեռանի ի Խուժաստան, Այնուշն կոչեցեալ ի դղեկի։ Իսկ Մեհրուժան Արծրունի, ուրացեալ և ի բաց մերկացեալ զզարդն հաւատոյն, առեալ ի Շապհոյ իշխանութիւն, բռնաբար կամէր թագաւորել ի վերայ Հայոց. և բազումնեղութիւնս և վիշտս անցուցեալ ընդ կանայս ազատաց և ընդ որդիս նոցա սատակմամբ սրոյ, զորս հանեալ յամրական տեղաց կախէր զպարսպաց։ Նա և զմայր Պապայ, զԴաւռանձեմ, նախատամահ և անյիշելի մահուամբ սատակէ։ Ընդ որ յոյժ վշտացեալ ի դառն անցից ազգիս, Ներսէս հայրապետն խնդրեալ ի Թէոդոսէ զՊապ թագաւորել, փոխանակ հաւրն իւրում Արշակայ։ Եւ հնազանդեալ հրամանաց սրբոյն, թագաւորն մեծ Թէոդոս տայ նմա զաւր յաւգնականութիւն և արձակէ հանդերձ հայրապետաւն ի Հայս։ Որոց եկեալ պատահէին ուրացելոյն, և որ ընդ նմա Շերգիրն զաւրաւք պարսից ի դաշտին Ցիրաւ։ Յայնժամ ելեալ սուրբն Ներսէս ի գլուխ լերին Նպատ, և անդանաւր տարածէ զբազուկսն, որպէս նախնին մարգարէից ի պաղատանս առ աստուած։ Եւ խորտակեալ վկանդի ուրացողն և անաստուած դունդն։ Յայսմ մարտի քաջ և ընտիր ասպետն Սմբատ, որդին Բագարատայ, Բագրատունի,

[1] Պատմ. խոր. Գ. 41։

մեծ քաջութիւն և հանդէս առաքինութեան կատարէր, աւգնականութեամբ աղաւթից սրբոյն և զաւրացն հոռոմոց. յորում և կամնարականն Սպանդարատ զքաջն և զանուանին Հ՝երգիր հարեալ, իբրև զշանթահար յերկիր կործանէր. և անդանաւր զիակամբք շատանայր վայրն ամենայն։ Իսկ աստուածուրացն Մեհրուժան ոչ կարաց փախչել։ Որում հասեալ քաջ սպարապետն Սմբատ և զառհաւատչեայ յաւերժական այրմանն տայր ըմպել նմա. զամենայն փախստեայսն որ ընդ նմայն սատակէ բազկաւ սրով։ Լու զուրացողն ձերբակալ արարեալ ի Կոդովտի՝ յոտն Մասեաց։ Լու խորհեալ սպարապետին, թէ գուցէ խնայեսցէ ի նա սուրբն Ղերսէս, անդանաւր զտանէ պատրաստական կրակեղ, զի խորովէին միս։ Լու առեալ անտի զշամիրուն երկաթի յեռանդան հրոյն արտաշիկագոյն փայլեցուցեալ և բոլորեալ անուանձև, ասէ ցնա. "Ե՛կ, զի պակեցից զգլուխդ տիրամոռաց, զի ինձ հաւատացեալ է ասպետական թագաւորութիւն, և դու թագաւորել Հայոց եկեալ ես այսր„։ Անդանաւր սատակի ամբարիշտն սաստիկ սատակմամբ.[1] և փառաւորի անունն աստուծոյ։

Իբրև առ զիշխանութիւն թագաւորութեանն Պապ և խոտորնակ ընթացիւք անլուր լեալ խրատու սրբոյն Ղերսէսի, զնայր յանարժան և յանաւգուտ վարս, և ոխացեալ ընդ նմա, բարոյն՝ չար փոխարէնս հատուցանէ ի ձեռն դեղոյ բարձեալ զնա ի կենաց։ Լու փոյթ ընդ փոյթ ըմբռնեալ զՊապ թէոդոս, սատակէ սակրաւ, ընկալեալ զմանաւորն վրէժ։ Լու զկնի Պապայ թագաւորէ Հայոց Վարազդատ՝ զամն ԺԸ, որոյ իրազգաց եղեալ թէոդոս, եթէ տայ ձեռն ի Պարսս. և զնա սատակէ։ Լու փոխանակ նորա, զորդիսն Պապայ՝ զԱրշակ և զՎաղարշակ թագաւորեցուցանէ։ Յաւուրս սոցա, որպէս Պատմութեանն իւրում սկիզբն դնէ Ղազարիկ պատմագիր, իբր զհնացեալ ձորձ՝ յերկուս պատառեցաւ թագաւորութիւնս Հայոց։ Օ՝երկիրն Ադրարատեան մինչև ցսահմանս պարսից՝ առնու թագաւորն պարսից։ Լու զմնացեալ մասն առնու Արկադէոս, որդի մեծին թէոդոսի, և տայ ի ձեռս Արշակայ, զաւրավար զնա եղեալ յետս ընդդէմ իշխանութիւն տուեալ կայսերն։ Իսկ թագաւորն պարսից՝ Հ՝ապուհ, տայ զիւր հասեալ

[1] Պատմ. խոր. գ. 37—39, 41—40.

մասն ի Խոսրով ոմն Արշակունի։ Օ՝որ լուեալ նախարարացն, որք էին առ Արշակ, դարձան առ Խոսրով ի տունս իւրեանց։

Եդ. Վասն Սմբատայ Քաջին՝ զրոյցք։

Ո՛վ վերծանող սիրելի, զիտեա հաւաստի, զի ի մտի եդի գրել ծայրաքաղ աստ և անդ զանուանս Դագրատունեացն միայն՝ մի զհետ միոյ։ Յաւուրս բաժանման թագաւորացն մերոց, մղթ ոլիմպիադին, ի Քրիստոսէ նժբ՝ էին ամք, յեւթն ամին Արկադեայ, որդւոյ թէոդոսի Մեծի, և ի Հ՝ապհոյ հա՝ ամին[1]։ Այս Հ՝ապուհ և Խոսրով, որդի Տրդատայ, ի միում վայրի թագաւորեցին[2]։ Զա եկայ՝ թ ամ. իսկ սա ձգտեցաւ հգ՝ ամ։ Ի սորա հա՝ ամին նստի թագաւոր Հայոց Վռամշապուհ. և սուրբն Սահակ՝ հայրապետ, որդի մեծին Ղերսէսի։ Անտի մինչև յայս քաջ Սմբատ են ամք ճձե՝։ Լու կացին ի Հ՝ապհոյ մինչ ցայսր. Արտաշիր՝ ամս ի՝։ Վռամոր և Կրման՝ ժա՝։ Յազկերտ՝ ժ[3]։ Վռամ՝ իա՝։ Յազկերտ՝ ժթ։ Պերոզ՝ իբ՝։ Վաղարշ՝ ԺԸ։ Կաւատ՝ ամս է՝։ Ջամասպ՝ բ՝։ Կաւատ՝ ժէ՝[4]։ Խոսրով հաւատացեալն՝ ամս խբ՝։ Որմիզդ՝ ժբ՝։ Խոսրով՝ լէ՝։ Ի թագաւորութեանն պարսից Խոսրովի և հոռոմոց Մաւրկայ, ի հայրապետութեանն Հայոց Աբրահամու Ռշտունեցւոյ, ի թուին Հայոց խգ՝, ի շղգ ամին ի ծննդենէ Քրիստոսի, Սմբատ քաջ Դագրատունի բազում և անհնարին մարտս յարգարէր ընդդէմ թշնամեաց Խոսրովու պարսից թագաւորի. ընդ որ յաւէտ ի՞մն հաճոյանայր արքայ, և ընդ այլ բազում ընծայից և զմարզպանութիւն Վրկանայ տայ նմա։ Որոյ երթեալ անդ՝ գտանէ ազգ մի գերեալ ի Հայոց և բնակեցուցեալ ի Թուրքաստան կողմանէ, որ Սագաստանն անուանի, մոռացեալ զլեզու և զգիր հայերէն։ Որոց տեսեալ զՍմբատ ուրախ լինէին։ Լու նա նորոգէ դարձեալ զլեզու և զգիր հայերէն ի ձեռն Հաբելի երիցոյ և տայ զնոյն առաջնորդ նոցա։ Լու եպիսկոպոս յետոյ ձեռնադրեալ Մովսէսի զԱբել։ Իսկ յետ այսորիկ հրաման ընկալեալ Սմբատայ, գայ ի տեղի ծննդեան իւրոյ, և եկեալ ի Դվին, շինէ

596
43
553 ?(551!)

[1] Այս ըստ Սամուէլի Ընեցւոյ։
[2] Զէ համաձայն խորենացւոյն. տես Գ, 8.
[3] Ըստ Սամուէլի Ընեցւոյ։ Իսկ ըստ այլոց ուղղագոյն՝ ի ամ
[4] Այս եւս ըստ Սամուէլի։ Իսկ ուղղագոյն՝ լա։

զսուրբ Գրիգոր, զորոյ առեալ հրաման յարքայէ։ Իսկ պահնակ բերդին չարախաւսէ առ արքայ, յորոգայթ բերդին դոլ զայն։ Եւ արքայ պատասխանէ. "զի բերդն քակեսցի, և եկեղեցին շինեսցի". զոր յառաջագոյն ի փայտէ և յաղիւսէ, սրբոյն Վարդանայ էր շինեալ։ Եւ իբրև եկն քաջն Սմբատ, ետես յաւաջնորդէ որբ զեկեղեցին, զի էր վախճանեալ Մովսէս։ Կարգէ յառաջնորդութիւն Հայոց զԱբրահամ Ուշտունեաց եպիսկոպոս ի գեղջէ Աղբաթանից։ Եւ ինքն քաջն Սմբատ շինէ զեկեղեցին, զսուրբ Գրիգորն, քարիւ և կրով[1]։

Վահրամ Մեհեւանդակ, իշխան արևելից, յաւուրս Որմզդի, որդոյ խոսրովանող Խոսրովու։ Սա հարկանէ քաջութեամբ զզաւրն Թետաղաց և բռնութեամբ ունէր զերկիրն Քուշանաց և զմայրաքաղաք նոցին զԴալխ, մինչև յայնկոյս Վեհռոտ գետոյ։ Այլ և զՄազքթաց զաւրսն կոտորեաց և զթագաւորն սպան. և զանբաւ աւարն զաւրացն իւր բաշխէր, և սակաւ ինչ Որմզդի առաքէր։ Ընդ որ զայրացեալ Որմզդի առաքէ փուշտիպան՝ ժողովել ի զաւրացն զաւարն։ Իսկ զաւրուն սպանեալ զփուշտիպանն, թագաւորեցուցին զՎահրամ Մեհեւանդակ։ Զոր լուեալ Որմզդի, փախստական լինի և ի զաւրացն մեռանի։ Այս զորդին նորին զԽոսրով թագաւորեցուցին. որոյ անկեալ առ Մաւրիկ։ Եւ նորա առաքեալ զաւր և զՄուշեղ Մամիկոնեան, սպանանէ զՎահրամ, և առնու ի Խոսրովէ փոխանակ այնր զերկիրն Հայոց մինչև զԿոգովիտ և ցՀուրաստան գետ, և զերկիրն Վրաց մինչև ցՏփղիս։ Այս Խոսրով առնու կին քրիստոնէ, Շիրէն անուն, և տայ նմա համարձակութիւն վասն հաւատոյ. և նա մերձ յապարանսն վասն շինեալ՝ կարգէ ի նմա քահանայս։ Եւ Մաւրիկ խնդրեալ ի Խոսրովու զմարմին մեռելոյն, որ կայր ի գանձս արքունի, եդեալ յաւազան պղնձի. զոր պարսիկն կաւ Խոսրով անուանէ, և Հայք՝ զԴանիել մարգարէ։ Եւ իբրև ածին ջորիս և հանին ընդ դուռն ասպարէզս երեք, դարձան անդրէն ջորիքն, առաթուր հարկանելով և անդէն արձակեցան բղխումն ջուրց։ Զոր իմացեալ կայսեր պատարագաւք պատուեալ զնա։

[1] Սեբէոս, գլ. ժդ—ժթ։

Զայսու ժամանակաւ զՍմբատ Բագրատունի չարախաւսեալ տարան ի դուռն արքունի. և հրամայէ արքայ արկանել կուր գազանաց։ Եւ աղաղակեալ Սմբատայ ի ձայն մեծ և հարեալ մուրացացի զձակատ սրջոյն՝ սատակեաց։ Եւ կալեալ զեղջերուացոյցոյն՝ սատակեաց։ Եւ իբրև յաւելին արձակել առիւծ մի. ընթացեալ հզաւր զաւրութեամբ արիականաւ կալեալ զականջաց առիւծուն, հեծաւ ի վերայ առիւծուն։ Եւ իբրև ետես զայն բազմութիւնն, զաղաղակ բարձեալ դիմեցին առ ոտս թագաւորին, խնդրէին վասն այնպիսւոյ քաջի ողորմութիւն։ Յայնժամ հրաման եալ ի թագաւորէն՝ տանել զնա ի բաղանիս և զարդարել. և արարեալ զնա տրիբուն զաւրացն որ Ամփրիկէ։ Իսկ էր նա հասակաւ բարձր և լայն, և գեղեցիկ տեսլեամբ։ Եւ լինէր, յորժամ անցանէր ընդ անտառս, բուռն հարկանէր զձաղկից անտառին և կծկեալ ոտիւքն՝ վերացուցանէր զերիվարն[1]։ Իսկ քաջն և արին զկնի այսորիկ մեռաւ ի Տիզբոն, բարւոք քաղաքավարութեամբ և բերեալ եդաւ ի Դարունս, ի կոգ դաւառի[2]։ Իսկ զկնի նորին, որդի նորին Վարազտիրոց առնու զիշխանութիւն Հայոց, ի թագաւորէն կաւատայ, որդոյ Խոսրովայ և առաքի ի Հայս։ Որոյ եկեալ եգիտ վախճանեալ զկոմիտաս։ Այս զՔրիստափոր Աբրահամեան տանէ, կարգէ առաջնորդ Հայոց, ձեռնատուութեամբ Թէոդորոսի Ուշտունոյ, զամս բ։ Իսկ զկնի Քրիստափորի Լազ եկաց կաթուղիկոս Հայոց, զամս ժ, յաւուրս Հերակլի և պարսից Խոռենայ։

ԺԵ. Վասն առասպելաց անաւրէն Մահմետի եւ նորին ստութեան. զոր խայտառակէ նորին աշակերտն։

Իբրև եհաս մեզ պատմել զանաւրէնն Մահմետայ դիցուք զկնի զմոլորութեան նորա զյաճախութիւնն, զի իսպառ ատեսցես և փախիցես ի նորին անուանէ, ով դու քրիստոսասէր անձն։ Զոր

[1] Պատմ. Սեբ. գլ. բ—գ, ժ։

[2] Զէ այս Սմբատ բազմայաղթն սպարապետ Խոսրովու, զորմէ վերագոյն յիշեցաք (Սեբ. գլ. ժգ—ժթ), այլ այլ ոք Բագրատունի, համանուն նորին, ի ծառայութեան յունաց (Սեբ. ժ)։ Սխալի հեղինակս զվախճան Բազմայաղթին ի Տիզբոն եւ զորդին Վարազտիրոց՝ վերջնոյն ընծայելով։

մինչև ցայսաւր, դեռ ևս անգիտութեամբ երթեալ ի հէճն[1] և ի Մաքայ, մատուցանեն նուէրս դիւաց, և կատարեն անմտաբար զխորհուրդ առաջին կռամոլ դիւապաշտութեանն, ոչ գիտելով զինչ գործեն։ Զոր աւտի կարես գիտել զգործս նոցա, զոր նոքայն անգիտաբար համարին աստուածպաշտութիւն զդիւապաշտութիւնն։ Զու եղև, ասէ, ի ժամանակին յայնմիկ այր մի անուն Մահմէտ, յազգէն որ կոչի Կուրէշ[2], յորդոց Կեդարայ, յերկոտասան ցեղից Իսմայէլի։ Որոյ եկեալ ի սուրբ լեառն Սինէական, աշակերտեցաւ միայնակեցի ումեմն, որ գիտէր լեզու Իսմայէլացի և պարսիկ, անուն Բխիրայ[3]. որոյ առեալ զնա՝ կամելով ճշմարտութեամբ ամենայնի ի վերայ հասուցանել. սկիզբն արարեալ ի լինելութենէ արարածոց, ոՀ եդեալ ընթերնոյր նմա զգիրս ծննդոց և զայլսն ամենայն կարգաւ, և զնոր Կտակարանս և զգիրսն զոր Յիսուսի մանկութեանն կոչեն։ Զու մինչդեռ ականջալուր միայն նմա էին գիրք աստուածաշունչք և ոչ հասու լեալ ստուգապէս, հասեալ նմա պատՃառ՝ գնալ ի ներքսագոյն անապատն, և այնուհետև ոչ ևս դառնալ առ վարդապետն իւր։ Զու ոչ միտք նորա սիրեցին զՔրիստոնէութիւն, այլ խորհուրդք նորա յուզէին գիտել թէ՝ զի՞նչ էհրէութիւն։ Զու պատահեալ նմա հրէի ումեմն վաՃառականի, տեղեկացաւ ի նմանէ զկարգ և զհաւատ նոցին. անգոսնեաց և զայն ևս։ Զու սկսաւ մտացածին յինքենէ ասել հաւատ նոր, ՃշմարտութեանՀակառակ և ստութիւն. և խոտեալ զամենայն պաշտամունս նման նեռինն, և զիւրն միայն աւրինադրէր։ Զրթեալ ի դեղն Մաքա, որ անդր է քան զԶփծրեփ Մադինայ[4], որ է նոցա քաղաք, քարոզեաց ըստ կամաց և ըստ ախորժակաց. ա-

[1] Հէճ, حج, ուխտագնացութիւն, յորմէ հաճի, حاجى, ուխտագնաց, որ երթեալ իցէ ի Քաաբա։

[2] Մուհամմէդ, որդի Ապդալլայի էր ի Կորայիշ قريش ցեղէն Տաճկաց։

[3] Տաճիկ մատենագրաց եւս յայտնի է անուն վարդապետին Մահմետի, بحيرا Բահիրա, զոր քրիստոնեայ կոչեն ոմանք, միայնակեաց կամ աբեղայ։ Նոյն Բահիրա Սարգիս سرجس եւս ասի յոմանց։

[4] Մադինա مدينة քաղաք լսի ի լեզու տաճկաց, եւ է անուն քաղաքի յԱրաբիայ, յորում ծնաւ Մահմետ։ Ոչ Եփծրեփ, այլ Եացրեբ يثرب կոչէր անուն քաղաքիս ի հնումն։

սելով զտուն տոհմարանին, այսինքն՝ պաշտման աւձից, տուն աստուծոյ[1] և տուն Աբրահամու. և անուանեաց՝ալ քաաբա[2]։ Զուասաց թէ Իսմայէլ արար կին և սա է տուն նորա։ Զու կարաւտացեալ տեսանել զնա Աբրահամու, ասէ ցԱռաւ. «արձակեա զիս, զի երթեալ տեսից զորդին իմ»։ Իսկ Սառայի երկուցեալ, թէ գուցէ մերձեսցի առ աղախինն, զերդումն աստուծոյ դնէ ի վերայ նորա, թէ՝ «մի՛ իջցես ի դրաստէդ ի դեռին, այլ ի վերայ կալով քո, տեսցես զորդինքո և դարձցիս այսրէն»։ Զու եկեալ նորա ոչ պատահէր Իսմայէլի, քանզի յորս անցեալ էր։ Զու հարցանէր ցկինն, թէ՝ «ո՞ւր երթեալ է այրն քո»։ Զու նորա թշնամանեալ անդոսնեաց զնա, ասէ. «զառանցեալ խանդարեալ ալևոր, յի՞նչ պէտս խնդրես զայրն իմ»։ Զու նա ասէ. «ասասցես ցայր քո՝ ոչ բարւոք են դրունք տան քո. ի բաց փոխեա զդա, այլ առնելով դրուս»։ Զու եկեալ Իսմայէլ յորսոյն, ոչ ասաց նմա կինն իւր, անփոյթ արարեալ զպատուէրն Աբրահամու։ Այլ Իսմայէլ առեալ զհոտ հաւրն, հարցանէր զկինն, թէ՝ «ե՞կ ոք այսր»։ Զու նա ասէ. «ալևոր մի»։ Հարցանէ Իսմայէլ, թէ «զի՞նչ խաւսեցաւ». և պատմեալ կնոջն։ Գիտաց Իսմայէլ, եթէ զկնոջէն ասացեալ է. արձակէ զնա և այլ առնու կին։ Այնպէս պատահեալ երկրորդ կնոջն և երրորդ, մինչև ցեւթներորդն։ Զու նա ասէ ցԱբրահամ՝ «բարի եկիր, հայր. էջ ի դրաստէդ, զի աւծից զգլուխս քո»։ Զու նա ասէ. «ոչ հաւանիմ»։ Զու իբրև թախանձէր զնա կինն, իջեալ Աբրահամու, ոչ ի դեռինն՝ վասն երդմանն Սառայի, այլ մի ոտն ի վերայ վիմի և մի ոտն՝ հեծնելոջն[3]։ Զու վէմն տեղի տուեալ ոտինն, ցուցանէր զտեղին։ Զայս այսպէս ուսոյց յառասպելաց։ Զու յամենայն կողմանց զերկրպագութիւն քարին այնմիկ և տանն հրամայեաց մատուցանել։ Զու ի ներքս ի տանն, կալով շուրջ զքարիւն, երկրպագել հրամայէր, որ միւս վէմն է

[1] Տուն աստուծոյ بيت الله։

[2] الكعبة։

[3] Զայսմանէ եւ զայլոց առասպելաբանութեանց Տաճկաց գտցես զընդարձակագոյն տեղեկութիւնս առ եւիրոպացի մատենագիրս՝ Wüstenfeld, Geschichte der stadt Mekka, Leipzig, 1861, եւ Caussin de Perceval, Essai sur l'Histoire des Arabes, Paris, 1847. T. I.

և ծակ ոտիցն։ Դարձեալ՝ զարտաքին վիմին ուր ոտնհետն Աբրահամու, հրամայեաց շուրջ դալ, միոտանի վաղվաղելով ասել "լբայք, լբայք[1]", որպէս թէ պատասխանի ումեք առնելով՝ "յայ, յայ, աւաս, աւաս"։

Դարձեալ ի ձորն անցեալ, որում վորդն ալ համարն[2] կոչեն, առնեն ի նմա սպանումն անասնոց։ Այս հեծեալ ի գրաստ փախչին անդառնալի մինչև ցրլուրն, մերձ ի Մաքա։ Այս ի փախչելն, եթէ բաճկոն ուրուք անկանիցի և զհեծեալն իւր ջարդէ, ոչ դառնան յարուցանել։ Այս յետ այնորիկ ընթանալով ի մէջ երկուց վիմաց հետի, զոր անուանեն՝ Սափա և Այմրան[3], ընթանան վիմէ ի վէմ է անգամ անհանգիստ, որչափ և ուժն բաւական լինի։ Այս յետ այնր ընթանան յայլ տեղի, զոր Մաքա ալհաս անուանեն. է անգամ ընթանան և զքարինս ձգեն, և ոչ յայտ է, թէ ում զքարինս ձգեն։ Այլ միայն ասեն, եթէ՝ Մահմետ այսպէս արար։ Այս հրամայեաց ասելով, թէ՝ Աբրահամ դոյնպէս արար։ Անզգուշութեամբ է ասացեալն ի նմանէ. զի ասաց՝ ոչ էջ ի գրաստէն, և յետոյ ստեաց, թէ՝ ընթանայր և քարինս ձգէր։ Այս ոչ սպանանեն ի տեղւոջն յայն զեռունս և սողունս և գազանս, վասն աւձիցն որք բնակեալ ի տանն, խառն ընդ մարդկանն շրջին և ոչ վնասեն ումեք, զորս մուսլիմ[4] անուանեն, այսինքն՝ հաւատացեալս։ Այս պատեալ ծածկեն զտունն է հանդերձիւ, և համբոյր երթեալ հանդերձին, ի վերայ աչաց դնեն[5]։

Արդ՝ ոչ երևի ի ձեզ մոլար խաբէութիւն շաղփաղփութեան նոցա։ Քանզի բազումք ոչ գիտացեալ զայս ամենայն տեսանեն զազգս մարդկանն յամենայն պաշտամունսն պարապ և փոյթ յաղաւթս և խաւսել հանապազ աստուծով և կարծեն հաւատացեալս։ Վասնորոյ կարևոր համարեցայ յայտնել զծածկեալս

[1] لبيك لبيك, հրամայեա, հրամանա։

[2] Աղաւաղեալ թուի անուն ձորոյս ի գրչաց։

[3] Սափայ, Սաֆա صفا է անուն բլրոյ մեոյ ի Մաքքայ. իսկ անուն միւսոյն ոչ Եմրան, այլ Մարվայ, مروه։

[4] Մուսլիմ مسلم է հաւատացեալ. իսկ զի զաւանս այսպէս անուանէին, մեզ չէ ծանաւթ։

[5] Զծիսից եւ զարարողութեանց Ցաճկաց յաւուրս հէճին, տես D'Ohsson, Tableau général, III, p. 55—177.

խաբէութեան նոցա։ Տունն զոր կոչեն Աբրահամու, ոչ երբէք երթեալ անդ Աբրահամ և ոչ Իսմայէլ, որպէս և աստուածայինքն վկայեն պատմութիւնք։ Այլ է նա տուն կռոց և աւձից պաշտման. զի տոհմարան գոլ ի միջոցի տանն ուր սնուցանեն զաւձսն մինչև ցայսաւր ժամանակի, որպէս և ասացաք։ Իսկ զկուռսն բարձեալ ասպատակին Եգիպտացւոց որք ի ժամանակին Տիւռիանոմի։ Քանզի անդրիք պղնձիք էին ընդ այլ դիսն, զոր կանգնեցին յԱղեքսանդրիայ։ Յայնժամ տաճկացն գտեալ զայլ կուռս, այսինքն՝ զկուռս Դիմասկոսի Ռիմանայ[1] յանապատի ուրեմն. զոր ի գալ քրիստոնէութեանս երկուցեալ քրմաց նորա, թէ՝ գուցէ ի ձեռն քրիստոնէից անկեալ փշրեսցի, առեալ փախստական զնացին յանապատ անդ։ Այն վերջոյ գտեալ կռապաշտացն Տաճկաց, տարեալ ի Մաքա հանդերձ քրմով նորին, ի տունն յայն, յայտնի տեղի առաջին կռոցն կամեցան կանգնել։ Իսկ աւձապաշտ քրմացն ոչ հաւանեալ զկուռս աւտարաց քրմաց յիւրեանց տանն կացուցանել, հաւանեցուցեալ զամբոխն՝ զտունն աւձիցն միայն բաւական լինել. որպէս թէ՝ ոչ ախորժեցին աւձքն զաւտար քուրմսն յիւրեանց բնակարանի։ Այս այսպէս բաղբաղեալ, արտաքոյ դրանն կացուցին զնա ի վերայ վիմին, ի միոյ ոտան վերայ կալով, և զմիւսն ի վեր ունելով. իբր թէ՝ այնպէս է պատկեր Ռամանայ, իբրև զԱփեստեայ պատկերն։ Այս թէ՝ նա ինքն է Ռամանն՝ Աֆեստոս ի Դամասկացւոցն անուանեալ։ Այս նոցա երկաթով փորեալ և կապարով պնդեալ, ի մի ոտինն կացուցին զնա ի վերայ վիմին։ Զոր ի ժամանակս Թէոդոսի, յոչ զգուշանալ պաշտաւնէիցն, զի արտաքոյ կայր շինի, գողացեալ եղև ի վաճառականաց եթիոպացոց յաղագս ոսկոյն. վասն որոյ և պատերազմ եղև ի մէջ երկոցունց։ Պատմեն յԱգիպտոս աւանդութեամբ մինչև ցայսաւր։ Այս ոտնահետ[2] է ի վերայ վիմին, զոր ասաց Մահմետ Աբրահամու լինել. որ և միոտանի շուրջ գոլով Տաճկաց, զմիոտանոյն Ռոմանայ բերելով զնա, և դիւի նորա երկիր պագանեն և ձայն տան և ոչ գիտեն։ Դա և ոչ զայն իմանան,

[1] Ռամին, Ռեման ի Ս. Գիրս, տես Chwolson, Die Ssabier, II, 287—288.

[2] Ոտնահետն Աբրահամու մաքամ Իբրահիմ مقام ابراهيم կոչի ի տաճկաց։

թէ՝ ումմ զանասունս կոտորեն ի ձորն, և կամ յումմէ փախչին։ Այլ մեք քննեալ հասու եղաք, թէ Մահմետի մեկուսացեալ ի բազմաց մարդկութենէն ի ձորն, արար զոհ ամենայն դիւացն։ Յոր դիմեալ դևքն ի կերպարանս մարդկան տեսլական երևեցան. յորոց զարհուրեալ Մահմետ՝ փախեաւ, զնոյն և աւանդեաց։ Իսկ որ մէջ վիմացն ընթանան, վէմք նախկի նոցա պաշտաւնք լեալ էին, քան զկուռսն առաջինս, որպէս զայն վէմ որ ի ներքս ի տաննէ։ Եւ դևքն յերկուց վիմացն զՄահմետի պաշտաւնն ինքեանց ստիպեն։ Զասնորոյ այսր անդր ընթանայր ստիպով մոլեգնեալ, զնոյն և աւրինադրեաց։ Դարձեալ՝ փութով ի պաշտաւնն տաննն ելեալ, և շուն ինչ կատաղի գհետ ելեալ մուտ յառնուլ. իսկ Մահմետի քար ձգեալ՝ զերծանի. զոր վարկեալ յաւտարդ (?) և խափանիչ նորա պաշտամանն լինել, զնոյն և աւանդեաց։ Իսկ որ զԱբրահամ, ասեն, է անգամ երթեալ անդ, յոյժ ստեն։ Եւ որ զոսղունս և զգեռունս և զգազանս ոչ սպանեն, պատիւ և պաշտաւն աւձիցն առնեն։ Որպէս և մոգպետքն ի Թղթին Յազկերտի ի Հայս, զսոյն աւրինադրեցին, թէ՝ աւձք և մողեզք և այլ ճճիք մի՝ սպանցին. վասն զի աստուածք էին և պաշտամունք առ նոսա[1]։ Զայս ամենայն երանելի այրն, որ յոյժ տեղեակ էր և եկն ի Կրէտէս կղզի, հաւատաց՝ յայտնեաց և ծանոյց։

Իզ. Սրդ՝ պատմեցուք վասն մահուանն նորա, արդարեւ արժանի ծաղու։

Քանզի իբրև մեռաւ Մահմետ, պատեալ եդին զնա ի պարտիզի իւրում. ոչ թաղեալ, վասն զի խոստացաւ՝ յերիր աւուր յառնել, նման Քրիստոսի։ Եւ ի քուն լինել պահապանացն մտեալ շանց կերան զերեսս մեռելոյն։ Եւ յայնմ հետէ աւրինադրեցաւ յաշակերտաց նորա՝ ի նոյն ամսոջ սատակել զշունս. որ մինչև ցայսաւր կալեալ զսոյն սովորութիւն, սատակեն զշունս ի նոյն ամսեան։ Այլ առաւել է, թէ զկրաւնից և զկարգաց և զդատաստանաց նորին ասացից, լի յիմարութեամբ։ Եւ եդ ի բերան

[1] Այլազգ ասէ Եղիշէ ի Պատմ. իւրում; բ. հշնջրիք եւ աղուէսք եւ նապաստակք մի մեռցին։ Աւձք եւ մողէզք, գորտք եւ որ այլ եւս խառնափնդոր բազմաճճիք են, մի կայցեն. այլ վաղ թուով համարով ի մէջ բերցեն ըստ արքունի չափոյն։

աշակերտելոցն կարծել, թէ՝ որպէս վասն Քրիստոսի գուշակեցին մարգարէքն, սոյնպէս և զՄահմետայ գուշակեցին, նշանակելով զկոչումն մարգարէութեանն, Յիսուս՝ իշով, և սա՝ ուղտով, զԱսայեայ տեսիլն առեալ իւրեանց վկայութիւն. «Հեծեալ մի ասէ, տեսի իշոյ և հեծեալ մի ուղտոյ[1]»։ Զայս ասէր ի քաղաքին իւրում Մադինա, մինչդեռ նստէր ի բազմամբոխ հրապարակին։ Եւ մինչդեռ խաւսէրն, աներևոյթ եղև յաչաց տեսութենէ ժամ հարուստ։ Եւ կալաւ ափշութիւն մեծ զամենեսին։ Եւ ապա մինչդեռ խաւսէինն, եկաց ի մէջ նոցա, և ետ ողջոյն և ասէ։ «Խաղաղութիւն ընդ ձեզ և ողորմութիւն և շնորհ[2]»։ Ապա զարհուրեալ հիացան և ասեն. «ուստի՞ գաս, կամ զի՞նչ է ողջոյնդ այդ, կամ յորմէ աստուածոյ բերեր զայդպիսի բան ողորմութեան և շնորհաց»։ Նա պատասխանի. «ահա մինչդեռ խաւսէի ընդ ձեզ, յափշտակեցայ ի հրեշտակէ և գտայ ի Մաքայի ի տան հարց մերոց՝ Աբրահամու և Իսմայէլի. զոր շինեալ զնա տուն աստուծոյ և մեզ ի ժառանգութիւն. որպէս երբեմն զԵրուսաղէմ հրէիցն շինեալ և մարգարէիցն առ ի բնակութիւն որդոցն Իսրայէլի։ Զի լուեալ զյափշտակէն Աբրակումայ Երուսաղեմ ի Բաբիլոն առ Դանիէլ. սայապէս զինքն համարեալ ասէր առ նոսա։ Որ ոչ երբէք ճշմարտութեամբ էին բանքն։ Ծածկէր առաջի նոցա, թէ էր նորա տեսեալ զՄաքայ, և պատմէր առաջի նոցա զաւրինակ տեղւոյն, զվայրացն և զշինուածոցն, և զամենայն նշանս սահմանացն ետ նոցա դիւթութեամբ, որպէս և տեղեկացեալն էր ի մանկութենէ։ Զասնորոյ զարմացեալք ամենեքեան ասէին զնա մարգարէ գոլ։ Եւ իբրև լուաւ զայս ի բերանոյ նոցին, համարձակեցաւ քարոզել և ասել. «վկայեցէք թէ չէք աստուած, բայց միայն ինքն, և ոչ զոյ նորա ընկեր, և Մահմետ ծառայ նորա և առաքեալ[3]»։ Զայս այսպէս իմաստասիրեաց, զմի աստուածն ասելով ըստ հրէականին։ Իսկ ասելովն, թէ չէք նորա ընկեր, այսու բաժանէր զՈրդի և զՀոգի ի հաւրէ։

[1] Տես զոյսմանէ ի Պատմ. Ղեւոնդեայ, յեր. 123—124.

[2] السلام عليكم و رحمة الله و بركاته ։

[3] Զոր համառաւտեալ ասեն այժմ։ لا اله الا الله و محمد رسول الله

Եւ այսպէս ուսուցանէ նոցա, թէ՝ զոր հարքն մեր պաշտեցին և մարգարէքն, զայն աստուած քարոզեմ ձեզ։ Եւ այսու հաւանեցուցանէ զժողովուրդն։ Եւ դարձեալ որոշէ զնոսա ի հրէականացն, որ մարդ միայն և որդի Յովսեփու ասացին զՔրիստոս, և յինքեանց խաչեալ։ Այլ և սա կոչէ զՅիսուս՝ Յան աստուծոյ և հոգի առաքեալ ի Մարիամ յաստուծոյ, և առեալ ի նմանէ մարմին մարդկապէս։ Եւ դնէ վկայութիւն բանիւ աստուծոյ և ասէ. թէ՝ "այսպէս ասաց աստուած, թէ՝ առաքեցաք ի նա զհոգին մեր, որ եղև ի կերպարանս մարդոյ"։ Եւ ասէ, թէ՝ հրէայք զնա ոչ խաչեցին, այլ նմանեցոյց նոցա։ Եւ ոչ համարեցաւ նոցա կարող գոլ՝ խաչել զՅան աստուած և խաչիլ ի նոցանէ։ Եւ ոչ ընդ մահուամբ անկեալ՝ այլ կայ կենդանի, և դալոց է յաշխարհ յետին ժամանակս։ Եւ գովէ զքրիստոնեայս և ընդունի զաւետարանն և զմարգարէս։ Եւ նզովէ զՀրեայսն, թէ ուրացան զՔրիստոս և ապստամբեցան ի նմանէ, և սպանին զմարգարէսն։ Արդ՝ Մահմէտ առնէ զաւրինադրութիւն իւր յաւրինացն հին և յաւետարանէն. բայց որոշէ մտացական կամաւք զոր ինչ ախորժէ, իբր յիւրմէ եդեալ և ոչ առեալ յումեքէ, զոր և աւրինադրէ ժողովրդեան իւրոյ։ Եւ առնէր առաջի ժողովրդեանն առ աչաւք նշանս, որպէս և առաջիկայ հանդերձեալ նեռնն, զոր զգուշացուցանէ Տէրն մեր Քրիստոս։ Սա կարապետ նեռինն հորդէ ճանապարհ նմին. զի ի ժամանակի անդ կոչէ զծառս յանտառէ յանուանէ։ Եւ նոքա մեկնեալ ի միջոյ՝ գայ ճեմելով՝ կայ առաջի։ Եւ դարձեալ հրամայէ երթալ ի տեղի իւր։ Եւ շարժել լերանց կարծեցուցանէր մարդկան։ Եւ ի վեր ունելով զձեռս՝ ի հինգ մատանց աղբեր բղխեցուցանէր առ աչաւք։ Եւ դեղ մահու՝ ասեն՝ գործեալ նմա։ Խորովեալ ուլ մի և եդեալ առաջի նորա՝ կամեցաւ ուտել։ Եւ խաւսեցեալ ուլն ի լսելիս բազմաց՝ թէ՝ «մի՛ ճաշակեր յինէն՝ զի դեղ մահու գործեալ է յիս վասն քո»։ Եւ հանդեալ ի կարաւանի՝ աւազակաց ի վերայ անկեալ կամելով յափշտակել զնա ... և[1] զնոսա։ Իսկ նոցա ժողովեալ ի մի վայր՝ բնակէին ի ցամաքային դաշտի և շուրջ զինքեամբ ծովացեալ. արդեւլան աւազա-

[1] Պակաս երեւին քանի մի բառք։

կքքն յեղը ծովու՝ մնալով զերիս աւուրս՝ զնացին ունայն։ Եւ սոքա տեսանէին զինքեանս ի ցամաքի՝ ուր ոչ զոյր խոնաւութիւն։ Այս զհաւրեղբայր նորա ասեն արարեալ. և սա ի նմանէ ուսեալ՝ նոյնպէս արար։ Այլ բազումք իսկ յիւրոց անտի ոչ հաւատան առասպելայաւդ բաջաղանաց նորա։ Եւ ասեն դարձեալ՝ եթէ զլուսինն ի չորս բաժանեալ ցուցանէր մարդկան՝ որիշս ի միմեանց. և դարձեալ ի մի հաւաքեալ կարկնաձև։ Իսկ վասն զքարինսն ձգելոյ՝ զոր յառաջն ասացաք՝ յաւդեն այսպէս. թէ՝ յորժամ եհան զԱդամ ի դրախտէն աստուած՝ յայսմ աշխարհի բնակեցոյց զնա։ Եւ նորա տեսեալ զսատանայ յայսմ տեղւոջ ուր զքարինսն ձգեմք՝ ծանեաւ՝ թէ՝ սա էր որ զմեզ եհան ի կենացն. առեալ քարինս արկ ի վերայ նորա. վասն որոյ և մեք այսպէս առնեմք։

Իսկ յորժամ պատմեաց նոցա զոր ինչ պատմեաց՝ և զինքն պատգամաւոր քարոզեաց. յայնժամ նոքա խնդրեցին իւրեանց աւրէնս դնել։ Եւ նա խոստացաւ նոցա՝ առ վաղիւն հարցանել ցաստուած՝ թէ՝ զի՞նչ հրամայեսցէ։ Եւ արձակէ յիւրմէ։ Եւ ինքն ետ ածել երինջ մի առաջնածին յայն ժողովեստղ՝ և զորթն արդելու ի տան։ Եւ զոր ինչ կամէր ինքեան՝ դրեալ կապէ յեղջիւր երնջուն՝ և հանեալ յանապատ։ Իսկ ի ժամու ժողովմանն՝ հրամայէ արձակել զերինջն։ Եւ ինքն հանդերձ սիւնհոդոսաւն սպասեալ մնայր գալստեանն՝ իբրև ի վերուստ այցելութեան ինչ։ Եւ յերևման երնջուն զաղաղակ բարձեալ՝ գոհութիւն առաքէր ի վեր։ Եւ հանեալ զգիրն ահիւ և շքով ընթեռնոյր՝ իբր յերկնից եկեալ աւրինին։ Այս ամենայն յայտնեալ մեզ աշակերտ նորին և խայտառակեալ զպատրանս աղանդաւոր առասպելացն՝ եկեալ մկրտեցաւ ի Կրէտէս կղզոջ յազգմանէ նախախնամող կամացն աստուծոյ։ Եւ մեք զառասպել և զզաղիր պատրանս նորա դրեցաք առ ի ծանուցումն և ի զգուշութիւն երկեղածաց Քրիստոսի. զի փախուցեալ ատեսցուք զատելին աստուծոյ։

Իբ. Վասն Մահմետայ, կրկին։

Իբրև լուան զմահն Հերակլի արքային յունաց՝ համարձակեցան Իսմայէլացիքն ելանել Ասորիս և ի Հրէաստան։ Վասն

զի Ասորիս և Հրէաստան էին ընդ ձեռամբ Հերակլի։ Եւ գրբ-
գռեցին զԻսմայէլացիսն առաջնորդք ջըհտանոյն և ասեն. թէ՝
"մեզ խոստացաւ աստուած տալ զերկիր. և վասն մեղաց մերոց
տարագիր արար զմեզ։ Եւ դուք նոյնպէս եղբարք մեր էք և որ-
դիք Աբրահամու Իսմայելէ։ Եկէք, և կատարէ աստուած
զխոստումն"։ Եւ դրդեալ ելին ի հրէաստան և յԱսորիս։ Եւ
սատակեցին զզաւրս հոռոմոց և արկին ընդ հարկաւ իւրեանց։
Եւմար առաջին առ զաթոռ սուլտանին, առաջին իշխան եկաց
Իսմայելացոյն։ Քաղբրթն՝ Թ ամ։ Եմրան՝ ԺԲ ամ։ Մահմետ՝
Թ ամ։ Բուբաքր, աներ Մահմետի՝ Բ ամ։ Եւմար որ եղև սուլ-
տան՝ ամս Ժ։ Սա սկսաւ ելանել և առ զաշխարհս։ Ի Քաղբթայ
մինչև յելանելն էին ամք ԼԲ, որպէս և Ղևոնտ պատմագիրն
ասոյն վկայէ[1]. և ասէ, թէ՝ յԼԲ ամի իշխանութեան ելին յԱսորիս
և ի հրէաստան. և ի միւս ամն ելին ի Պարսս և ի Հայս, ընկե-
ցին զսուլտանն պարսից զՅազկերտ Շահրիարեան, և մտին յաշ-
խարհն Հայոց ընդ կողմն պարսից։ Եւ առնուին գերէին զաւանս
Մարաց և զգաւառն Գողթն և զՆախջաւան. սպանմամբ սատա-
կէին և գերեալ անցուցանէին ընդ գետն Երասխ՝ ընդ հունն Ջու-
ղայ. և գունդ բաժանեալ ի գաւառն Արտազ անցեալ։ Որոց ընդ
առաջ էլ Թէոդորոս Ռշտունեան, սատակէր զառաջաւորս զաւ-
րուն։ Իսկ յառաջին ամին Մաւեայ ելանէ զաւրն Տաճկաց ի
Հայս, և հարկեցան Հայք ամին Ը դահեկան, և առեալ պատանդ
զԳրիգոր Մամիկոնեան և զՄբատ Բագրատունին տարան առ
Մաւի։ Եւ հետ Բ ամի անկաւ գութ յաստուծոյ ի սիրտ Մաւ-
եայ, և արձակեալ զնոսա՝ զԳրիգոր կացոյց իշխան Հայոց, զՀի-
նողն սուրբ կաթուղիկէին Արծոյ։ Եւ դադարեալ յաւուրս նորա
խաղաղացան Հայք ի հարկս տալոյ և ի հինէ։ Եւ ասէ զԳրիգորէ
Ղևոնդ երէց, եթէ՝ "էր այր երկեղած յաստուծոյ, եղբայրասէր
և աւտարասէր և դարմանիչ աղքատաց և կատարեալ ի հաւատս
աստուածպաշտութեան"։ Ի սորա աւուրս նահատակեալ սուրբն
Դաւիթ ի Դվին։ Օ՞սա սպանին զաւրքն Խազրաց։ Գրիգոր՝ ամս
Ժ։ Եւ դարձեալ յաւուրս Աբդլմելքի զաւրավար նորին Մահ-

[1] Պատմ. Ղեւոնդեայ, Փարիզ. 1857. եր. 19, 24, 33, 35.

մէտ սաստիկ սատակումն անողորմապէս անցոյց ընդ երկիրս Հա-
յոց։ Սա արձակեաց զծոմն Գեղամայ և աւար առ զգաղթեալսն ի
նմա։ Եւ յս Մահմէտ անիծեալ ետ հրաման զաւրացն, որ աւե-
րեցին զՀագուան և սպանին զսուրբս, որպէս պատմէ Ղևոնդի
գրեալն[1]։ Ա՛ռ սա հասեալ Սահակ կաթողիկոս ի Խառան վախճա-
նէր, և զգիրն աղաչանաց գրէր։ Որոյ զղջացեալ դառնայր, և
ապրէր Հայք։ Իսկ զկնի Աբդլմելքի եկաց որդի նորին Վլիթ։
Եւ Սմբատ զաւրավարն Հայոց երթեալ ի Յոյնսն խնդրեալ զաւ-
րքս յաւգնականութիւն, և եկեալ ի գաւառն Վանանդ։ Օ՞այն
լուեալ Մահմետ զաւրավարն, հասեալ ի վերայ կոտորէր սաս-
տկապէս. և ինքն դառնայ ի Դվին։ Եւ իբև տեղեկացաւ եթէ
իշխանքն Հայոց բերին զզաւրսն Հոռոմոց, հրամայէ Վլիթ
Մահմետի՝ բնաջինջ առնել զիշխանսն Հայոց։ Եւ Մահմէտ
հրաման ետ Կասմոյ[2] ամիրայի որ ի Նախջաւան առ ինքն կոչել
զազատսն Հայոց՝ բառնալ ի միջոյ։ Ընդ չոգան իշխանքն պարզ-
մտութեամբ՝ Սմբատ որդի Աշոտոյ ի Բագրատունոյ, Գրիգոր և
Կորիւն ի տոհմէ Արծրունեաց, Վարազ Շապուհ և եղբայր
իւր ի տոհմէ Մամիկոնեաց, զորս այրեցին յեկեղեցիսն։ Եւ այս
ամենայն գործք չարք Մահմետի հասին յականջս Վլթի։ Եւ
նորա կոչեալ առ ինքն առաքէ յերկիրս Հայոց զԱբդլազիզ ոմն,
այր բարի և խաղաղարար, փոխանակ նորա։ Սա եկն և շինեաց
կրկին զպարիսպն Դվնայ և ամրացոյց։ Իսկ Մահմէտ գրգռեալ
զսիրտ թագաւորին Իսմայէլացոց, խնդրեալ ի նմանէ բձե՛ արս,
գնաց յառնուլ զերկիրն Հէնաց։ և դառնայր սև երեսաւք։ Վա-
սրն զի կոտորեաց խաբանաւք զզաւրսն Հեմբակուր իշխանն Հէ-
նաց, իբր թէ տալոց է նմա զլե՛ աղջկունս և զարդարեալս ցու-
ցանէր դէմ յանդիման յայնկոյս գետոյն։ Եւ հրաւիրեալ յայն-
կոյս գետոյն նաւաւք, հանեալ զվառեալսն ի սայլէցն, ի սուր սու-
սերի կոտորէր զզաւրսն ամենայն. որք էին արք խո՛, որ սպանան
և գետակուր եղեն։ Օ՞այս պատմէ Ղևոնդ երէց[3]։ Եւ յս Մահ-

[1] Պատմ. Ղեւոնդ. 50—51, 55.
[2] Ի բնագրին էր՝ կամ. իսկ մեք այսպէս ուղղեցաք ըստ Ղեւոնդեայ, եր. 56.
[3] Պատմ. Ղեւոնդ. 60—64.

մէտ զաւրավար էր, և ոչ էր սա առաջինն, որ զայս ամենայն գործեաց, զի մի՝ մոլորիցիս։

Յայտնութիւն եւ երեւումն աղանդաւոր եւ սուտ մարգարէին Մահմետի, նա եւ նեռինն ստուգապէս, ի Թուին զն ի Քրիստոսէ՝ ոխբ [1]։

Լալով և մեծաւ ողբով և ցնորալի տաղտկութեամբ, թէպէտ և ոչ ըստ ախորժակի, սակայն ճառեցից զխաւարարեր չարին այնորիկ զսկիզբն ուստի սկսաւն, և զզեցոյց քուրձ սեւութեան լուսատարփեան հաւատին Քրիստոսի։ Այս խաւար թանձրամած դարձեալ տիրեաց տեղայ, զոր երբեմն մերժեցին փախուցին ի մէջ խաչակրաւն սրբոցն զնդից վարդապետութիւնք. և ըստ աւրինակի և ապացուցի Տեառն եղին զարիւնս և զանձինս գրաւական փրկութեան մերոյ։ Աստանաւր մոլեգնարար դարձեալ յարձակեցան ի մեզ դեւք, ասպնջական և վայր հանդստեան գտեալ զծննունդս հագարեան, և նոքաւք ներգործեալ զկամս խոտորնակ [2] .... անաւրէն և անձնահաճոյ ստութեանն Մահմետի, զոր սերմանեաց զսերմ Կերինթեայ, զընկալեալն ի Խիրայէ, արիանոս կրաւնաւորէ։

Սա յառաջագոյն երթեալ սովին աղանդով քարոզել և ուսուցանել նոցա զստութիւնն զայն։ Իսկ նոքա ոչ ընկալեալ զնա հաւլածական արարին։ Այս կրկնեալ դարձեալ երկրորդէ առ նոսա զերթն։ Այս յերորդումն՝ կախ(արդ)անաւք հաւանեցուցեալ զնոսա, մնայ առ նոսա՝ ամս թ և ամիսս ժ՝ և աւուրս իբ։ Այլ դու, ով սիրելի, տեղեկացեալ յայսմանէ գիտասցես և ոչ շփոթեսցիս մտաւք, յորժամ տեսանիցես զգիր համարոյ պատմագրաց մերոց, այլ և այլ թուեալ զերևմանն նորա ժամանակ և զսկիզբն թուականին Տաճկաց։ Այս բ՝ ինչ են պատճառ շփոթման. մի, զի լուսնական տարով վարին նոքա և թուեն զամս. և մի, զի ոմանք զելն ի Հայս դնեն սկիզբն երևման նորա. և ոմանք՝ զծննունդ նորին. և ոմանք՝ զառաջին երթալն ի Մաքայ. և ոմանք՝ զեր-

[1] Այս գլուխ եդեալ էր ի գրչագրի առանձինն եւ որոշ ի պամութենէն Ննցուդն, զոր մեք իբրեւ շարունակութիւն սորա դնեմք։

[2] Պակասին բ տողք։

կրորդն. և ոմանք ի դառնալոյն նորա անտի թուեն։ Այ իւրաքանչիւր ոք յիւրումն ուղիղ են և ոչ ստեն։ Այլ թէ այսպէս և թէ՝ այն. աւաղ զքրիստոնեայք յերևման խաբեբայ աստուածուրացին։

Առաջին ելանէ զաւր Իսմայելացոց, ունելով գլուխ և առաջնորդ զՔաղբրթ ոմն, ի կողմանս պաղեստինացւոց և Դամասկոսի անթիւ բազմութեամբ։ Սորա գտեալ զՄահմետ խաբեբայ, որ էր գլուխ վաճառականաց Եգիպտացոց, և աւրինացն նորա հաւանեալ, հրամանաւ նորա շրջէր։ Իսկ նա խրատեալ զՔաղբրթ՝ արդելուլ զսուրն և դնել հարկս ի վերայ քրիստոնէից՝ ռամկաց և շինականաց, անշուշտ հրամանաւ և երդմամբ՝ մի՝ ինչ աւելի պահանջել բաց յայսմանէ, զի տայցեն խարաճ ամենայն երդ՝ դրամս ՃԿ, և երիս մոդ խորբալ և ձիատաւպրակ մի և պարան և ձեռնարար մի։ Այլ զքահանայս, զվանորայս, զտեղիս ուխտից, զազատս և զհեծեալս թողուլ ազատ։ Այ զամենայն ինչ զոր և աւրէնս եդ, դիւր և լայն ճանապարհաւ եդ։ Այ յուսացոյց ի սուտ յոյս զժողովուրդս և զհաւանողս իւր, կեալ ասա պղծութեան հանդստիւ՝, զրկել և սպանանել և կեղեքել զկեանս քրիստոնէից, և անդ երթալ ժառանգորդ լինել դրախտին մարմնապէս հանդստեամբ և յոգնաժողով զուգութեամբ։ Հակառակ Քրիստոսի քարոզեալ, որ ասէ թէ՝ ի յարութեանն ոչ արք կանայս առնեն և ոչ կանայք արանց լինին, այլ զբարս մաքուրս և սրբարս զգեցեալ են հաւասար հրեշտակաց։ Այ ի հնոյն և ի նորոյս գողաբար ի բաց զերծեալ զախորժակս մտաց մարմնասիրաց. այնպէս քարոզէր և կախարդէր զմիտս տկարաց և ծխմարաց յիմարաց։

Բայց հասեալ Քաղբրթի ի Դամասկոս Միջագետայ, մինչև ցքաղաքն Ամիթ և արձակէ երիս գլխաւորս. մի, ի կողմանս հոռոմոց՝ Յաղու, որոյ խրատիչ ասեն զՅովել ոմն, որք կոտորեցին ի հոռոմոց հՃ։ Իսկ ի պարսից կողմն՝ զԱթման ամիրայն և զՄաւի։ Նոքա հարին զՄրդատ և զՄուշեղ սպարապետն իւրով սպայիւն, և տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից, Մաբաց, Պարթևաց և Պաղեստինացոց։ Քաղբրթ՝ ամս ՃԿ։ Եմրան՝ ամս ԺՃ։ Մահմետ՝ ամս ԺԲ։ Բուբաքր, աներն Մահմետի՝ ամս ՃԲ,

ամիսս ԥ։ Ա՛ւմարն՝ ամս Ժ, ամիսս ԥ։ Ա՛ւթման, փեսայ Մահմետի՝ ամս ԺԱ, ամիսս ԺԱ։ Ա՛լի, փեսայն Մահմետի՝ ամս դ, ամիսս Թ։ Մաւի՝ ամս ԺԹ, ամիսս ԥ։ Իզիտն, Մաւէ որդի՝ ամս գ, ամիսս Ը։ Մավիա՝ ամիսս դ։ Ա՛ւդլայ Մրուանի՝ ամիսս դ։ Ա՛ւդալա՝ ամս Ը, ամիսս Ե։ Ա՛բդլմելիք Մրուանեան՝ ամս Ա (Ի՞?), ամիսս Բ, աւուրս ԥ։ Ալիթն՝ Թ, ամիսս Է, աւուրս՝ ԻԹ։ Սուլէյման՝ ամս Բ, ամիսս Է, աւուրս ԻԹ։ Ա՛ւմար, Ա՛բդլազզի որդի՝ ամս Բ, ամիսս Ե, աւուրս ԺԴ։ Իզիտն, Ա՛բդլմելէքայ որդի՝ ամս դ, և աւր մի։ Հուշամն, Ա՛բդլմելէքայ որդի՝ ամս ԺԹ, ամիսս Ը, աւուրս Թ։ Ալիթն, Իզտի որդի՝ ամ մի, ամիսս Բ, աւուրս ԻԲ։ Իզիտն, Ալթին որդի՝ ամիսս Բ։ Ի՛բրահիմ, Ալթին որդի՝ ամիսս Բ։ Մրուան, Մահմետայ որդին՝ ամս Ե, ամիսս Բ։ Ա՛պլապաս, Մահմտայ որդին՝ ամս դ, ամիսս Ը, սուրս Բ։ Մանսուր, Ռուջաբրայ որդին ամս ԻԵ, ամիսս ԺԱ, աւուրս Ը։ Մահդի, Մահմտայ որդի՝ ամս Ժ, ամիս մի, աւուրս Ե։ Հադի, Մուսէի որդի՝ ամս ԺԱ, ամիս մի, աւուրս ԺԱ։ Հարոն Ռաշիտն՝ ամս ԺԳ (ԻԳ?), ամիսս Բ, աւուրս ԺԳ։ Մահմատ, Հարոն Ռաշտին որդի՝ ամս դ, աւուրս ԻԵ։ Մայմուն, Ա՛բդլմելքին որդի՝ ամս Ի, ամիսս Ե, աւուրս ԻԵ։ Մութասամ, Մահմուտայ որդի՝ ամս Ը, ամիսս Ը, աւուրս Բ։ Հարուն, Մութասմի որդի՝ ամս Ե, ամիսս Թ, աւուրս Թ։ Մութաւաք Ջաւհար, Մութասմի որդի՝ ամս ԺԴ, ամիսս Թ, աւուրս Թ։ Մումթասիր Մահմատ Մութաւաքալի որդի՝ ամիսս Ղ, աւուրս Բ։ Մութասային Ա՛հմատ՝ ամս Բ։ Ջուբայիր՝ ամս դ, ամիսս Ղ։ Մուհթադի Մահմատ՝ ամիսս ԺԱ։ Սա էր վերջին յազգէն Մահմետի, սուլտան։ Որոյ առեալ զիշխանութիւն որդին Սըբտքնայ՝ Մահմուտ սուլտանն, և այլ ոչ ևս հասին ի նոյն պատիւն իշխանական։ Ա՛յլ ի նոցանէ առին ազգն Թուրքաց՝ Սարջուկիքն, զոր յիւրումն տեղւոջ գրեսցուք ստոյգ գտակաւ։ Լու իբրև անկան ի սուլտանական ճոխութենէն ազգն Մահմետի յայնմ հետէ խալիֆայք անուանեցան մինչև ցայսաւր։ Լու առին զսուլտանական աթոռն և զանունն Սկիւթականքն, որպէս ասացաք։ Որ լինի թիւ ամացն Մահմետի մինչև ցայս վերջինս Մուհթադի՝ ամք բ՚ճ՚խգ, և իշխանք լգ։

Ելս ի Վարդանայ Պատմութենէն (Վենետ. 1862, եր. 91—92, 94—97).

Իսկ յաղագս Վրաց թագաւորացն սկզբանց, որ կայ ի գիրս նոցա, եթէ Թորգոմ ութ որդւովք եկն յԱյրարատ գաւառ զկնի ջրոյն մեծի. և երեք յորդւոց նորա նախագահք եղեն՝ Հայոս և Քարթլոս և Կոկասոսն, և տիրեցին աշխարհաց, և իւրեանց անուամբն կոչեցին Հայս և Քարթլ և Կովկաս. և տիրեցին ի ծովէն Պոնտոսի մինչև ցծովն Կասբից՝ մինչև ցՄիհրան, և ցԱրբակ թոռն իւր, որ էառ կին ի Պարթևաց՝ Սահակդուխտ անուն ի Պարտաւայ. որ և ամուլ զոլով հաւատաց ի Քրիստոս, և ետ նմա զաւակ՝ զՎախտանգ, որ և Գուրգասարն[1] կոչեցաւ, որ է Գայլագլուխ ի Պարսից բառն. զի ունէր ի վերայ սաղաւարտին պատկեր գայլոյ յառաջի կոյսն, և յետի կոյսն՝ առիւծու։ Սա էառ իւր ի կնութիւն զդուստր Լևոնի կայսեր. և ի սմանէ սերեցան թագաւորք մինչև ցԹևատաս, զոր կուրացոյց Աբաս. յետ որոյ թագաւորեաց Ռազարատ, որդի Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, ի վերայ Ափխազաց. այս ըստ Մխիթարայ Երիցու ասիցն։

. . . . . .

Էր ի Խորասան ոմն յիսմայելացւոցն Մահմուտ անուն, որ անցեալ ընդ Ջահան գետ յերկիրն Թետալացւոց, ածէ բազում գերիս ի Խորասան՝ որ ասի արևելք, բնակեցուցանէ առանձինն, և աճեալ նոցա և բազմացեալ՝ դնեն զոմն ամիրա, և ապա տան նմա թագ՝ ի մեռանելն Մահմուտին. նա յաջողակ եղեալ տիրեաց Պարսից և նստաւ սուլտան, որում անուն էր Դօղլա-բաք[2]։

---

[1] Նորագոյն պատմիչք Վրաց զմականուն Վախտանգայ՝ Գուրգասլան, այսինքն՝ գայլաառիւծ, ասեն լինել. զի ունէր իվերայ սաղավարտին պատկեր գայլոյ յառաջի կոյսն, եւ յետի կոյսն՝ առիւծու։ Բայց չէ այնպէս. զի ասլան اسلان կամ լաւ եւս ارسلان է բառ Թուրքաց, որք յայնմ դարու չեւ էին մտեալ ի Պարսս կամ ի Հայս, ուստի եւ լեզու նոցա տակաւին անյայտ ազգաց։ Գուրգասարն Վարդանայ է كرك سار որ ըստ պարսից թերեւս՝ գայլագլուխ, իսկ ուղղագոյն գայլանման. նշանակէ, եւ ի հնագոյն վիպասանութիւնս նոցա վարեալ իբրեւ անուն հռչակաւոր փեհլիվանի մոյ Ցուրանացւոյ։

[2] Հասարակապէս Թողրիլ طغرل անուանեալ։

Այս ըստ Վահրամայ, որդւոյ Տիգրանայ, վիպագրի. իսկ պատուական երէցն Մխիթար Անեցին, որոյ յիշատակն ի գիրն կենաց, այսպէս ասէ. «Յոլով աշխատ եղէ գտանել զորպէսն սուլտանացն՝ որ ի Թուրքաց, և գտի շնորհօքն Աստուծոյ այսպէս. Մահմուտն՝ զոր ասացաք, Սբքթանայ[1] որդի, յաննշանից մեծացեալ՝ որպէս Արտաշիրն Սասանեան, և երարձ զիշխանութիւնն Մահմետի ազգին ի Մահմատ Մուհթադէ, երեսներորդ երրորդ ի Մահմետայ, յերկերիւր քառասուն և վեցերորդ (?)[2] ամի իշխանութեան նոցա. և զօրացաւ նա ի Բահլ քաղաքի ի յերկրին Քուշանաց, և եկ համբաւ զնմանէ ուժգին, մինչև խալիփայն երկուցեալ՝ առաքէ նմա ընծայս և ալամ, և լաղապ՝ Ամինադլ[3], և սուլտան կոչէ զնա։ Այս առեալ նորա զպատիւն ևս մեծանայ. և ելանէ ի Հնդիկս՝ ի համբաւ կռոցն Մաթանայ[4], զոր կործանէ, և առեալ աւար դառնայ, զՄահմատ որդի իւր թողլով անդէն, և գայ ի Գուրգան. և առնու ի տեառնէն Գուրգանայ չորեքհարիւր հազար դահեկան, և սլեհս տամբ միով, ի չորեքհարիւր և քսան թուին իւրեանց. և անցանէ գայ մինչև Ոռէոյ Մաջա-դաւլա Ոստոմ, երեք աւուրբ յառաջ առեալ զԳելմիկսն՝ եկ ընդ առաջ նորա, և գայ ի Սրաւ անհնարին ուժով, և ընդ նմա երկերիւր և յիսուն փիղ։ Այս տեսեալ զնա, ասէ. Շահ, նամազ կարդացեա՞լ ես. և նա ասէ. Այո՛. և դարձեալ ասաց. Հատրկուց խաղացեա՞լ ես.—Այո՛։ Ապա ասէ. Թագաւոր ի թագաւորի տուն մտէ՞ թէ ոչ. և նա լռեաց։ Այս առժամայն կապեալ զնա յղարկէ ի Խորասան, և զամենայն ինչս նորա առեալ՝ տիրեալ Ոռէոյ, և գայ ի Տապարաստան և ի Տառաբի, և ի Սարի. տայ ի ձեռս Մասխուտի որդւոյ իւրոյ զՈռէ, և զՊաղուին և զՔոհաստան բովանդակ. թողլով զնա մինչև, գայ ի Սրաւ և առ-

[1] Ի Սեբեքթեգին سبكتكين անուն։

[2] Մահմատ Մուհթադի, 869—870. չվոթէ ասա հեղինակս զանուանս իշխանաց, զժամանակն եւ զանցս իրացն։

[3] Սլամ علم, դրօշ, նշան պատուոյ։ Լաղապ لقب, պատուանուն։ Ամինադլ امين عدل, վերատեսուչ կամ խնամիչ արդարութեան։

[4] Մաթանս այս թուի լինել անուն Սոմնաթ կռոց ի Պատան քաղաքի Գուջրաթայ ի Հնդիկս, զոր կործանեալ Մահմուտայ եւ զանհամար գանձս նորա կողոպտեալ յամին 1026։

նու հարիւր հազար դեռնարի, և անցանէ ի Գաշաւուրն ի չորեքհարիւր քսան և մի թուին իւրեանց։ Իսկ Մասխուտն առնու զՀամիան և զԱսպահան, և դառնայ մինչև. և իսկոյն լսէ թէ սպանին զշահնայսն քո մինչև։ Այս դարձեալ անդրէն սատակէ չորս հազար այր և դառնայ մինչև. և նոյն ժամայն բերեն նմա զգոյժ մահու հօրն, և թէ սուլտանացաւ Մահմատ եղբայր քո. և յարուցեալ գնայ, և կալեալ զեղբայրն կուրացուցանէ, և առնու զիշխանութիւնն և զաթոռն։ Այս քանզի հայր նորա ի գնալն յօգնականութիւն ազգին՝ որոց գլխաւորն կոչիւր Խորշան-Պողրղան, ի ճանապարհին պատահէ բանակաց ինչ բազմութեան թուրքաց, և ի դառնալն նոյն ճանապարհաւ՝ մեծաւ յաղթութեամբ առեալ զամրայն նոցա զԱփղու բերէ ի Խորասան և դնէ ի կապանս. և ազգ նորա եկեալ խնդրեցին ի հօրէն, և ապա յորդւոյն, և ոչ ետուն։ Իսկ նոցա բարկացեալ անցին ընդ Ղահան ամենայն բանակօքն իւրեանց, և զանձինս ի մահ եղեալ կռուեցան, և յաղթեցին և առին զնշաւուրն և կոտորեցին զզօրս սուլտանին ի Գադանղանն մօտ ի Սրմն. և փախստական եղեալ սուլտանն՝ գնայ ի Ղազնին և անտի ի Հնդիկս։ Այս ի ճանապարհին սպանաւ սուլտանն, և զկայր եղբայր նորա թագաւորեցուցին ի Ղազուին, որոյ յերկարեալ ի նմին ծնանի որդիս. և մի ի միոջէ առեալ ունին զՂազուին մինչև ցայսօր։

Իսկ յառաջադէմն ի թուրքացն՝ որում անուն էր Մուսեափաղղ Սարչուքեայ որդի, ունէր հինգ եղբօրորդիս. որոց անուանքն՝ Աբուսալիմ, Դաւութ, Զաղրբեկ, Աբուտալիփ, Տողրիլ-Բէկն, որ էառ զիշխանութիւն սուլտանութեանն, և հնգետասան ամ ընդարձակեալ զաշխարհն՝ բաժանեաց զամենայն երկիրն Խորասանայ. և եկեալ մինչև գտանէ երկուս շտեմարանս դանձուց լի ոսկւով. և առնու ընդ ձեռամբ, և յղէ առ խալիփայն և խնդրէ օրհնութիւն. և նա մեծարէ զնա արամբք պատուական, և տայ նմա ալամ և ընծայք, և կարդայ զանուն նորա ի մամբարն, և դնէ նմա մականուն Ռուքնադովլա[1]. և յայնմ օրէ քաբարն, և դնէ նմա մականուն Ռուքնադովլա[1]. և յայնմ օրէ քա-

[1] Մամբար։ منبر, տեղի բարձրագոյն, բեմ։ Ռուքնա դովլա ركن الدولة, սիւն կամ նեցուկ իշխանութեան, կամ բախտի։

բողեցաւ աշխարհակալ։ Եւ փոխէ զնա Ալփասլան հօրեղբօրորդի Տուղրիլին[1], որ ելից զամենայն աշխարհ արեամբ. և ունէր որդիս ութ, որ և հասանէր յաթոռ թագաւորութեանն Մէլիք շահն, բարի և խաղաղարար. և զկնի Մահմուտ սուլտանն։ Եւ յետ նորա աւագ եղբայրն Բաքարուխն՝ որ կոտորեաց զնա, և առ զաթոռն ամս հինգ։ Եւ յառնէ ի վերայ նորա Դուդուշն որդի Ալփասլանին, զոր վկանդեալ Բակիարուխն եհար զզօր նորա, և սպան զԴուդուշն։ Եւ Մահմուտ սուլտանն Մահմուդի որդին եհար զԲակիարուխն տղայ հասակաւ, և առ զսուլտանութիւնն ամս երեքտասան, և զկնի նորա Մահմուդն որդի նորին. ընդ որ պատերազմեալ Սանջար սուլտանն կոտորէ զնա, և առնու զԱրաղայ իշխանութիւնն, և դնէ զնա ի Բարաղայ. և զկնի նորա Դաւութ որդի նորա եկաց սուլտան՝ զոր սպանին Մլհեթք[2]։ Եւ ապա եկաց Տօղրիլն, և զկնի Մասխուտն, և ապա որդին՝ Ասլան, և զկնի ուժգին Տուղրիլ՝ որ կայր մինչ ի պատմադիրս. որում պատիւ ի տեառնէ Աստուծոյ։

Եղն այր ասէ և յաղագս թագաւորին Յովանիսի, եթէ եղբայր նորա Աշոտ՝ ի յոտս թաղնայ՝ կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն, փորելով ի սնարիցն կուսէ որոգայթս. և այնու ըմբռնեալ՝ տայ ի ձեռս մեծ իշխանին Ապիրատն կոչեցելոյ սպանանել զնա. և նա յօժար կամաւք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր Անի, ասելով. Հիարդ ձգեցից զձեռս իմ յօծեալ Տեառն, և խելագար մի եղից ի տեղւոջ սորա։ Զսմանէ ասեն յանշանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն՝ մինչ լինել տէր երկոտասան հազար հեծելոց. որ և շինեաց զսուրբ ուխտն Կեչառուս, որպէս Վարհամ իշխանն՝ զՄարմաշէն»։

---

[1] Տօղրուլ բեգ, 1038—1064։ Ալփ ասլան, 1064—1072։ Մալեքշահ, 1072—1092։ Յետ որոյ չորեքին որդիք նորա՝ Բարքիարուք, 1092—1104, Մահմուտ, Սանջար, 1104—1157 եւ Մուհամէդ, 1105—1118։ Դաւութ, 1131։ Մասուդ, 1132։ Տօղրուլ, 1134—1152։ Մասուդ, 1152։ Արսլան, 1160—1175։ Տօղրուլ, 1175—1195։

[2] Մլհեթք, ملاحد, որ եւ Հաշիշք حشيش, յորմէ եւ Assassin առ Եւրոպացիս, Իսմայէլացի մոլեռանդ աղանդաւորք։ Զարարս նոցա տես ի Journ. Asiat. 1849, Janvier; Hammer, I; Pauthier, Marco-Polo, 97—106.

ՅԱՒԵԼՈՒՆԾՔ

ՈՐ ԻՆՉ ՑԵՂԱԳՍ ՄՈՀՄԵՏԻ ԵՆ ԲՍՆՔ ՍՈՒ ՄՈՑԵՆՍԳԻՐՍ ՄԵՐ։

Ա. Վարդան վարդապետ, վենետիկ, 1862, եր. 64—68

Եւ էր թիւս մեր վաթսուն և եւթն։—Եւ զի յաջողեաց նոցա խրատն Մահմետի՝ խնդրեն ի նմանէ օրէնս և նա զտեղի մեհենից օձիցն, զոր պաշտէին՝ կոչեաց Ալքաուբա, որ է Դուռն Աստուծոյ։ Եւ կոչեաց զբնակութիւն քաղաքին իւրոյ Տուն Աբրահամու։ Եւ ի զօրանալ քրիստոնէութեան զկուռս Դամասկոսի՝ զՈՒեմանայ, որ նա ինքն է Հեփեստոս կաղ՝ տարեալ ընկեցին յանապատ, զոր գտեալ Տաճիկք տարան ի մեհեանս օձիցն, և քուրմք օձիցն ոչ կամեցան անդ դնել. այլ հանեալ արտաքոյ՝ արարին տեղի միոյ ոտից ի վերայ վիմի և անդ եդին, զոր գողացան Եթովպացի վաճառականք վասն ոսկւոյն, զոր ձուլեցին Իսմայէլացիքն։ Եւ եղև պատերազմ սաստիկ ի մէջ երկուց ազգացն, մինչև մոռացան։ Այնմանէ՝ ասաց, թէ Աբրահամու ոտնահետն է, յորժամ եկն ի տեսանել զորդին իւր զԻսմայէլ։ Եւ քանզի յորս էր Իսմայէլ՝ հարցանէ ցկին նորա, թէ «Ո՞ւր է այր քո». և նա ասէ. «Զնա՝ աղճատեալ ալեւոր»։ Եւ ասէ Աբրահամ. «Յորժամ գայ ի տուն՝ ասա ցայր քո —փոխեա զդուռն տան քո»։ Իսկ յորժամ եկն Իսմայէլ և էառ զհոտ հօրն՝ եհարց ցկինն և նա ասաց զոր լուաւն։ Եւ իմացեալ Իսմայելի՝ եհան զկինն և այլ էառ մինչև ցեօթներորդ կինն, որ մաղթեաց զԱբրահամ իջանել յիշէն և օծցէ զոտսն։ Եւ իջոյց՝ ասէ, զմի ոտն, և եդ ի վերայ վիմին և տեղի ետ վէճն ոտիցն, և զմի ոտն ոչ իջոյց ի գրաստէն, զի երդուցեալ էր Սառայի, թէ՝ մի՛ իջաներ՝ երկուցեալ թէ լինի ընդ Հագարու։ Այս առասպելեաց Մահմետ և հրամայեաց յամենայն կողմանց առնել անդ երկրպագութիւն, և զվիմն ասաց շուրջ գալ միոտանի և ասել—լբայք լբայք, և որպէս թէ պատասխանի ումեք առնել—այ այ,

աւաս աւաս։ Եւ անցեալ ի ձորն՝ անասուն սպանանեն, և ելեալ ի գրաստ փախչին մինչև ի բլուրն Մաքա։ Եւ թէ ի փախչելն հանդերձ անկանի կամ զուլամբի — ոչ ոք իշխէ յետս հայել։ Եւ ի մէջ երկուց վիմացն ընթանալով, զոր կոչեն Սափայ և Մրմայ՝ վիմէ ի վէմ երթան եօթն անգամ անհանգիստ, և քարինս ձգեն և Մահմետ՝ ասեն, այսպէս արար և ուսոյց։

Ամէլ միոտանի վազելն վասն ոտնահետին է, և ի ձորն անասուն կոտորելն և փախչելն՝ ասեն. թէ զոհ արար ամենայն դիւաց Մահմետ, զի տեսիլս ցուցցեն նմա, և երևեալ նմա դևք՝ փախեաւ։ Եւ յերկու վիմամիջին շրջելն և քար ձգելն լեալ են վէմք նոցա պաշտելիք նախ քան զկուռսն. — և ի պաշտելն Մահմետի ըստ սովորութեան՝ շուն կատաղի եւ ընդդէմ նորա և նա ձգեաց նմա քարինս, և զնոյն հրամայեաց առնել։ Եւ օձք և սողունք, զի ոչ սպանանին՝ զի պաշտելիք լեալ են նոցա։ Եւ շուն կոտորելն այն է որ ասեն, թէ ի մեռանելն Մահմետի չկամեցան թաղել՝ ակն ունելով, թէ յառնէ երեքօրեայ նման Տեառն մերոյ՝ և շունք կերան զերեսսն, և յորժամ իմացան՝ կոտորեցին զշունսն։ Եւ յամէն տարի ի նոյն ամսեանն հրամայեցին զնոյն առնել։ Նա ուսոյց ասել՝ «մի է Աստուած և ոչ ոք է նմա ընկեր, և Մահմետ ծառայ նորա»։ Եւ որ ասեն Հրէի միոյ բանիւ, թէ մարգարէքն խօսեցան որպէս վասն Քրիստոսի և վասն Մահմետայ՝ զայն ասեն, որ Լսայի տեսանէր երկու հեծեալս իշոյ և ուղտու։ Յաւուր միում յանկարծակի գիւթութեամբ անյայտ եղև Մահմետ և յետ սակաւու երևեալ՝ ասէ. «Խաղաղութիւն ընդ ձեզ և ողորմութիւն Աստուծոյ և շնորհք»։ Եւ նոցա զարմացեալ ասեն. «Ուստի՞ գաս և զի՞նչ է նոր ողջոյնդ և զո՞ր Աստուծոյ շնորհք բերեր մեզ». և նա ասէ. «Յառ զիս Աստուած ի Մաքա ի տուն հօր իմոյ և ձեր՝ Աբրահամու, և պատմեաց զկամս իւր, և ի վաղիւն առաքելոց է մեզ զօրէնս»։ Եւ առեալ երինջ մի ծնեալ ի տեղի ժողովոյն, մեկնեաց յորթոյն և գրեաց զոր ինչ կամէր, և յեղջիւրս նորա կապէր. և ի ձեռն հաւատարմաց առաքեաց յանապատ, և ի վաղիւն հրամայեաց արձակել։ Եւ ինքն հաւաքեալ զամբոխն՝ մնայր. և եկն կոչն բջելով և քրտալով, և հերձեալ զամբոխն՝ խնդրէր զորթն։ Եւ հրամայեաց ունել զնա, և առեալ

զթուղթն՝ համբուրեաց և ասաց՝ Աստուծոյ եկեալ. վասն որոյ մինչև ցայսօր գրեալ են ի սկիզբն Կուրանին՝ Սուրաթ ալբակարայ, որ է «կովու օրէնք[1]»։ Եւ հրամայէ հինգ անգամ կատարել աղօթքս լուացմամբ։ Եւ փոխանակ փողոցն Իսրայելի ի բարձուէ կանչել՝ վկայ առեալ, թէ «Ալի վերայ լերինդ Սինի՝ աւետարանիչդ»։ Եւ Մուդին[2] կոչեն զձայնողն, որ է «հաւատադիր». և զմատն յականջն ածել, ասեն թէ որ կամաւ և որ ակամայ լսէ ականջովն։ Եւ զՔրիստոս Բան Աստուծոյ և Հոգի կոչեաց։ Եւ սքանչելիք զոր ասեն թէ առնէր — զլուսինն բերեալ ի վայր՝ ասեն, չորս կտոր առնէր և դարձեալ բոլորեալ՝ յերկինս առաքէր։ Բայց նախ Քաղթ էր իշխան Իսմայելի, և ապա գտեալ զՄահմետ՝ հաւանի նմա յամենայն բանս։

Եւ յորժամ զօրացան նոքա, երկուցեալ Երուսաղէմացւոց՝ զխաչն տէրունի և զամենայն սպասս եկեղեցեացն հանեալ ի նաւ՝ տարան ի Կոստանդնուպօլիս և ինքեանք հնազանդեցան Իսմայելի, զի կայսրն այլ ոչ կարաց զօր գումարել ի վերայ նոցա։ Եւ նոքա բաժանեալ յերիս մասունս, մին Յէգիպտոս և մին ի Յոյնս և միւսն ի Հայս. և եղև ամենեցուն յաղթել։ Եւ որք ելին ի Հայս ընդ Աստրեստան, հասեալ ի Դուին՝ առին զնա և սպանին որոց ոչ գոյր թիւ, և գերեցին երեսուն հինգ հազար անձինս ի ժամանակս իշխանութեան Թէոդորոսի Ուշտունւոյ, որ զկնի Դաւթի։ Եւ բիւր մի ի նոցանէ հարին զՊռոկոպոս զօրագլուխն Յունաց, որ նստէր ի սահմանս Հայոց վեց բիւրիւ։

Յորում աւուր մեռաւ Եղը և յաջորդեաց զթոռն Ներսէս եպիսկոպոս Տայոց զկնի տասն ամին Եղբի. բայց յափշտակութիւն եղեալ վասն անհնարին կոտորելոցն՝ խորհեցաւ փախչել իբր ոչ բաւական մեծի աստիճանին։ Եւ աղաչեցեալ ի բազմաց՝ դարձաւ. և հաւաքեալ զբազմութիւն դիականցն՝ թաղէր, և ի նմին տեղւոջ շինէր զհրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի։ Շինէ

---

[1] سورة البقرة, պատճէն կամ յաղագս կովու, խորագիր երկրորդ պատճենի կամ գլխոց կուրանին։ Ծան. Մխիթ.

[2] Ուղղագրն مؤذن, մուզին կամ մուէզզին, որ է ձայնող ի բարձանց աշտարակի կամ մինարէի։

տաճար սրբութեան և ի վերայ վիրապին, և արկանէ հիմն տաճարի մեծի յանուն սրբոյն Գրիգորի յառապարի, և դնէ ի ներքոյ սեանցն չորից զհասարակ նշխարս սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. և զգլուխն ի գլոցի եդեալ՝ պահէ ի պէտս բժշկութեան ախտաժետաց։ Ընդ դնեն և զնշխարս սրբոյն Յիզոբուզտայ և զԴաւթի վկային։ Եւ զսուրբ Գրիգորի նշխարն ասեն բերեալ ի Հայս Գրիգորոյ Մամիկոնոյ ի գնալն նորա դեսպան ի Կոստանդնուպոլիս՝ տուեալ ցնա կին ոմն յաւագաց, որ ունէր առ իւր։ Եւ նորա գաղտ հանեալ ի ծով և անցեալ գայ բերէ անդիտելի քաղաքին զգանձն անանց մեծութեան։ Եւ զծնօտն տայ Աղուանից ի խնդրոյ Ջուանշիրի և քեռ իւրոյ, որ էր կին Գրիգորի։

Յայնմ ժամանակի կայսրն Կոստանդին դաւեալ ի մօրուէն Մարտինեայ՝ սպանանի, կացուցեալ զորդի իւր Հերակլակ. և Վաղենտին զօրավարն սպանեալ զՄարտին և զՀերակլակ, թագաւորեցուցանէ զԿոստանդ որդի Կոստանդեայ։ Եւ զի ապստամբեալ էր Վարազտիրոց՝ աղաչէ վասն նորա հայրապետն Ղերսէս, և դնէ զնա կուրապաղատ Հայոց. որ և յառնուլ զիշխանութիւն՝ մեռաւ և թաղեցաւ ի Դարօնս առ հօր իւրում քաջին Սմբատայ։ Եւ դնեն զՍմբատ ի պատիւ հօրն. և Թէոդորոս Ռշտունի էր զօրավար։

Բայց Մահմետ կալեալ քսան ամ զիշխանութիւնն՝ սատակի։ Եւ զկնի նորա առին զիշխանութիւն Ումար (Օթման?) և Ամր և Աբուբաքր։

Եւ սպանին զՅազկերտ՝ թոռն Խոսրովու, և բարձին զթագաւորութիւն պարսից, որ և տևեաց ամս չորս հարիւր ութսուն և մի. և զկնի նոցա առ զիշխանութիւն Մաւի։ Այլ Կոստանդիանոս՝ թոռն Հերակլեայ, ընկենու զԹէոդորոս յիշխանութենէ և հրամայէ զօրավարին Կիլիկիոյ ելանել ընդդէմ Մաւեայ։ Եւ Վարդ որդի Թէոդորոսի նենգ գործեաց զօրացն Յունաց՝ կտրեալով զխելս կամրջացն ի վերայ Եփրատու ի փախչելն Յունաց։

1 Ըստ ստուգաբանութեան ոմանց, անունս Սառակինոս ելեալ է ի شرق բառէն Ցաճկաց, որ է՝ արեւելեան. որպէս եւ ի مغرب բառէն, որ է՝ արեւմտեան, ծագեալ է անուն Ցաճկացն ՅԱփրիկէ։

Եւ կացոյց Մաւի իշխան Հայոց զԳրիգոր Մամիկոնեան. և եդ հարկս Հայոց հինգ հարիւր դահեկան։

Բ. Սամուէլ Անեցի, գրչագիր.

Յայսոսիկ աւուրս յայտնութիւն սուտ մարգարէին Սառակինոսաց, աղանդելոյն ի Կերինթոսէ և յարիանոսաց, որոյ անուն Մահմետ անուանիւր, յազգէ Իսմայէլի, որդւոյ Հագարու, որ աշակերտեցաւ ի միայնակեցէ միոյ որոյ անուն Բխիրայ կոչիւր, արիանոս աղանդով, ի յանապատին Սինայ, զոր զետեղեալ բազմացան ի հալածել Սառայի զԱդար զաղախինն յերեսաց իւր։ Ընդ՝ յաւուրս Կոստանդի որդւոյ Հերակլեայ, առաւ Դուին ի Ցաճկաց, ասէ պատմագիրն. և սպանին յաւուր յայտնութեանն ի սուրբ վկայարանի սրբոյն Սարգսի բժան հազար, և արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սուրբ սեղանն և աւազանն. և զայլն գերեցին աւելի քան զլԷ։ Այս ժողովեաց հայրապետն Ղերսէս զդիակունս անկելոցն ի պատերազմին ի նմին վկայարանի, զոր նորոգապէս շինեաց ի վերայ նոցա։ Աստանաւր նստի գլուխ ազգին Իսմայէլի նախ՝ Քաղարթ անուն, զոր և գիրն աստուածային պատմէ, թէ՝ քաղարթաշուրթն ժողովուրդն յագեցուսցեն զսուր իւրեանց յարենէ։ Սա կեցեալ ամս Ը վախճանի։ Յետ որոյ Ամրան՝ ամս ԺԲ։ Բայց հասեալ Քրզբրթ ի Դամասկոս Միջագետաց և մինչև ի քաղաքն Ամիթ, խանձեալ բազում աւարաւ։ Այս երիս սպայս, մի ի Հռոմարձակէ, Յազ անուն, և խրատուն Յովել, որք կոտորեցին ի հոռոմոց Է հազար։ Եւ ի պարսից կողմն արձակէ զԱբմանն ամիրա և զՄաւիկ զաւրավարն։ Ղրքա հարին զՄիրդատ իւր, և զՄուշեղ սպարապետն Հայոց իւրով սպայիւն, և տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից և Ասորոց, Եգիպտացւոց, Մարաց և Պարթևաց և Պաղեստինացւոց։ Բայց պատճառ եղոյն նոցա այս է։ Լեալ էր իշխան ոմն կողմանցն Դամասկոսի՝ Սարգիս անուն. նա բազում ինչ յափշտակէր յիսմայէլացւոց վաճառականացն, զոր երիցս աղերսիւ խնդրեալ Քրզբրթի, և նորա ոչ թողացուցեալ։ Այս ժողովեալ զիւրոյ ազգին զայր և զձի և երիցս ասպատակեալ, առին զիւրեանցն և զնոցայն։ Եւ յորձի և երիցս ասպատակեալ, առին զիւրեանցն և զնոցայն։ Եւ յոր-

ժամ զաւրացաւ ի վերայ Հայոց (?), ապա սկսաւ շրջել զհաւատս նոցա. և նոքա ոչ հաւանէին: Իսկ իշխանին Իսմայէլի գտեալ խորհրդակից զոմն՝ Մահմետ անուն, գլուխ վաճառականացն եգիպտացի, որ տեղեակ էր նուազ աւրինացն Մովսիսի, բայց հաստատեալէր աղանդովն Աբրոսի և Կերինթոսի, այն որ մարմնաւորապէս ասաց զարքայութիւնն ի վերայ երկրի, կերակուր պորտոյ և ամուսնութիւն յետ յարութեանն: Ուսոյց և աւրէնս հակառակ հնոյ և նորոյ աւրինադրութեանց իմանաւղ զանարժանս և խաւսելով զանուղղայս. յոյժ ձաղանաւք խայտառակեաց զուխտադրութիւն Աբրահամու, որպէս և գրեալ է՝ Թլփատեսցի ձեր ամենայն արու յաւուր ը երորդի: Իսկ սա ոչ միայն զարս, այլ և զկանայս անգամ, որով զարշելի այպանեաց զնշանակ ուխտի Տեառն: Այլ և ջրով լոկով ողողանիլ հանապազ փոխանակ մկրտութեան աւազանին, և այլ ևս յոլով անարժան և մոլեկան աւանդութիւնս և ծիծաղելիս: Օ՛սա ստացեալ աւրէնսդիր պատգամաբեր և զաւրավար՝ ամս ի. և կոտորեցին զԱզնունիս, զԱզոյովիտ և զՏարաւն: Զոր Մահմետս այս արդեալ զսուրն, և բանիւ խրատու նորա հնազանդեցուցին ինքեանց զմեծ մասն տիեզերաց: Զոր անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ հաստատակամ ունել զքրիստոնէութիւնն, և վաճառեաց նոցա զհաւատս նոցա, յամենայն տանէ առեալ՝ ը դրամ և ը մոդ խորբալ և ձիատաւպրակ մի և պարան մի մազէ և ձեռնարար մի: Իսկ ի քահանայից և յազատաց և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն: Զոր ի տիրելն աշխարհաց կոչեցան ամիրիմումնիք: Որ յետ ի ամին Մուահմըդայ տիրեցին Ազուբաքար, Աբմանն և Ամր՝ ամս լը:

ը. Կիրակոս Գանձակեցի, Մոսկվա, 1858, եր. 32—34:

Իսկ իբրև լցաւ ի ծննդենէն Քրիստոսի ամք ոժը, և Հայոց թուականին կէ, յայտնեցաւ ոմն սուտ մարգարէ հեթանոսաց, աղանդեալ ի Կերինթոսէ և յԱբրահանոսաց, Մահմետ անուն, իսմայէլացի ազգաւ, յորդւոցն Հագարու: Սա մինչդեռ վաճառականացն նոցա. և իբրև տեսին զայդ թագաւորն պարսից, սպանին զԱզկերտ թագաւոր պարսից, և դադարեաց թագաւորութիւնն պարսից: Օ՛ր յայսու ժամանակաւ խաւարեցաւ կէս արեգականն. Արեգ՝ աշնան ամիս, մինչև ի Քաղոց՝ ամարան ամիս: Ապա արձակեցին զորս ընդ երիս կողմանս մի ի Հռոմ՝ Յաղ անուն և խրատատու Յովել, որք կոտո-

ցի մոջ, որում անուն էր Սերգիս Ռխիրայ՝ Աբրահանոս աղանդով, յանապատին Սինայ: Սա ուսոյց Մահմետի զսուտ աստուածաբանութիւն, զովեաց նմա զհին օրէնսն՝ զուսեալն ի Մովսիսէ, և ասաց. եթէ լուիցես բանից իմոց, լինիս առաջնորդ և օրէնսդիր ի վերայ ազգին քո: Այս գնացեալ Մահմետի զճանապարհս իւր՝ յանկարծակի եմուտ ի նա ոգի պիղծ, և անկեալ փրփրեցաւ: Այս ընկերաց նորա տեսեալ զայն կացին առ նմա մինչև սակաւ մի ուշաբերեցաւ. և ապա յարուցին զնա. հարցեալ զպատճառս այնպիսի մոլեգնութեանն, ասէր ի հրեշտակէ սրբոյ լինել զայն, և յղել զնա պատգամաւոր յազգն իւր. և երթեալ ի քաղաք իւր՝ սկսաւ քարոզել, զոր ուսոյց նմա սուտ քրիստոնէայն: Ային նմա հօրեղբարք գլխաւորք. նոքա հալածեցին զնա, սպառնացեալք մահու չափ, եթէ այլ այնպիսի բանս ինչ լսիցեն ի նմանէ. և նա երթեալ ի տուն իւր՝ նստէր տրտում: Այս մտեալ Աբլի, որ էր նոքա հօրեղբօրորդի և փեսայ, և հարցեալ զպատճառս տրտմութեան, և նա ասացեալ՝ թէ վասն զի զԱստուած քարոզեցի նոցա, սպառնացան մահու ինձ. և ասէ Աբլի. եկ երթիցուք և դարձեալ քարոզեսցուք. եթէ ընդդէմ դառնան մեզ, սպանցուք զնոսա սրով. զի այր զօրաւոր էր Աբլի, և արք զօրաւորք՝ որ ընդ նմա: Այս իբրև սկսան քարոզել եղև խռովութիւն յոյժ և պատերազմ. և պարտեցաւ կողմն Մահմետի. և փախեալ գնացին ի փոքր Մադիամ, ուր էին ժողովեալ Հրեայք երկոտասան հազար, զոր հալածեալ էր Կոստանդնի կայսեր. և առեալ զնոսա Մահմետի, չոգաւ ի վերայ այնոցիկ՝ որ հալածեցին զնա. և կոտորեաց զնոսա: Իբրև տեսին Հրեայքն զյաջողուած գործոյն, կացուցին զնա իւրեանց առաջնորդ. յարեցան ի նոսա և այլ Մադիանացիք, և Քաղբրթ առաջնորդ. և եղեն բանակ մեծ, չոգան ի վերայ Պաղեստինի, հարին զզօրսն Հռոմոց, որք յափշտակէին զինչս վաճառականաց նոցա. և իբրև տեսին զյաղթութիւնն, չոգան ի վերայ տերութեանն պարսից, սպանին զԱզկերտ թագաւոր պարսից, և դադարեաց թագաւորութիւնն պարսից: Օ՛ր յայսու ժամանակաւ խաւարեցաւ կէս արեգականն. Արեգ՝ աշնան ամիս, մինչև ի Քաղոց՝ ամարան ամիս: Ապա արձակեցին զորս ընդ երիս կողմանս մի ի Հռոմ՝ Յաղ անուն և խրատատու Յովել, որք կոտո-

բեցին ի Հռոմոց զեօթանասուն հազար։ Եւ ի պարսից կողմն արձակեցին զՕթման ամիրայ և զՄաւիէ զօրավար. նոքա հարին զՄիրզատ քսան հազարաւ, և զՈւշեղ սպարապետն Հայոց իւրով սպայիւն, և տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից և Ասորւոց, Եգիպտացւոց, Մարաց և Պարթևաց, և սկսան շրջել զհաւատս նոցա, և նոքա ոչ հաւանեցան։ Իսկ Մադիանացիքն և հաւանեալքն նոցա խնդրեցին օրէնս ի Մահմետէ, և նա ետ նոցա օրէնս՝ յոյժ խայտառականօք. ասաց մարմնաւոր լինել զարքայութիւնն ի վերայ երկրի, կերակուր պորտոյ, և ամուսնութիւն յետ արքայութեանն. և կանանց կոյս մնացելոց հանապազ խառնակութիւն. ուստից և օրէնս հակառակ հնոյ և նորոյ օրինադրութեանց, իմանալ զանարժանս, և խոսող զանուղղայս խայտառակաց, մեծապէս ձաղանօք զուխտադրութիւնն Աստուծոյ՝ որ առ Աբրահամ, զի գրեալ է. Թլփատեսցի ձեր ամենայն արու ութօրեայ։ Իսկ սա օրինադրեաց. յորժամ կամեսցի թլփատել, յորում հասակի և իցէ, ոչ միայն զարս, այլ և զկանայս անդամ. և փոխանակ լուսաւոր մկրտութեանն՝ զոր ասաց տէր մեր Յիսուս Քրիստոս, եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ մտանիցէ յարքայութիւն Աստուծոյ. սա ասաց հանապազ գործել զչարիս և ջրով լոկով ողողանիլ և սրբիլ և այլ բազում անարժանս և մոլեկան աւանդութիւնս և ծիծաղելիս։ Սա եղև օրէնսդիր պատգամաբեր ամն հինգ, և կոտորեցին զՀոնունիս, զՄղեովիտ և զՏարօն։ Եւ Մահմետ արդել զսուրն, և բանիւ խրատու նորա հնազանդեցուցին զմեծ մասն տիեզերաց, և անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս համարձակութեամբ ունել զքրիստոնէութիւն, և վաճառեաց նոցա զհաւատս նոցա՝ յամենայն տանէ առեալ չորս դրամ և երեք մոթ խորբալ՝ որ է ցորեան, և ձիոյ տօպրակ մի և պարան մի մազէ և ձեթնարար մի։ Իսկ ի քահանայից և յաղատաց և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն, և ի տիրելն աշխարհաց՝ կոչեցան Ամիրմումնիք։ Եւ յետ ամին Մահմետի կալան զիշխանութիւնն Իսմայէլի, Աբուբաքր, Օթման և Ամր՝ ամն երեսուն և ութ։

Դ. Մովսէս Կաղանկատուացի, Փարիզ, 1860. Գ. եր. 5—9.

Զոր ընկալաք ի հոգեզուարճ վարդապետաց մակերևութեն ապառնեաց՝ արտածել ուսցուք, յիշելով զնահապետական բանն առ Իսմայէլ մարգարէացեալ. «Եթէ ձեռք դորա յամենեսին, և ձեռքդ յազգ մեծ»։

Ընդ նաւազիլ թագաւորութեանն պարսից Սասանական ազգին ի վեր երևեցաւ այր մի Մահմետ անուն, ի սուտ մարգարէիցն, զոր ի Փրկչէն լուաք, դիւահոգւով, վայրագ աղեղնաւոր, որ յանապատս կայր։ Եւ ի միում աւուր կերպարանեալ սատանայ ի ձև էրէց վայրոյ դիպեցուցանէ զնա Աբրոսի կեղծիւն միայնակեցի ումեմն՝ անուն՝ Բախիրա. և չարն չէր եղեալ ի տեղւոջն. առ որ լիալիճ աղեղն ի Մահմետէ գեղապարիւր։ Իսկ նորա սաստիկ ձայնեալ ասէ. «Մի մեղանչեր՝ որդեակ, զի իբրև զքեզ մարդ եմ». ասէ առ նա Մահմետն. «Օ՛ի մարդ ես, վասն է՞ր կաս ի քարանձաւդ»։ Յայնժամ կոչեցեալ առ ինքն զնա՝ սկսաւ ուսուցանել ի Հին և ի Նոր Կտակարանաց ըստ Աբրոսի, որ ասարած զՈրդին Աստուծոյ ասաց։ Եւ նա, զոր ինչ ի նմանէ լինէր ուսեալ՝ ի պիղծ վարդապետէն, հրամայէր նմա զնոյն խուժադուժ Տաճկացն պատմել. և բողոքէր առ նա զի մի՛ ոք գիտասցէ զնորա տեղին։ Իսկ անիմաստ հեթանոսամիտ և մարդահաճոյ ազգն այն՝ ի զարմանս եղեալ սակս հրաշաբանութեանն, ասեն ցՄահմետ. «Ուստի՞ է քեզ զայդ գիտել». և Մահմետն հայթայթեալ զանծանօթն իւր ազգ՝ ասէ.—«Հրեշտակ խօսի ընդ իս՝ որպէս ընդ մի ոք յաստուածախօս առաջին մարգարէիցն»։— Եւ նոցա գաղտնի լրտեսս կացուցեալ առ ի գիտել, թէ ով պատմէ նմա զայն, կամ ուստի գիտէ նա զայն ամենայն։ Իսկ զայս իմացեալ Մահմետի զդաւաճանսն, ծածկաբար զչար վարդապետն իւր սպանեալ ընդաւազեաց. և ի նմին տեղւոջ նստեալ ինքն ասէ ցլրտեսս. «Յայսմ տեղւոջ հրեշտակ ինձ երևեալ՝ մեծամեծ սքանչելիս պատմէ»։ Եւ նոցա տեսեալ զնա միայն՝ եկին պատմեցին վրիպական մոլորամիտ ազգի Տաճկաց. և նոցա մեծախումբ ապրարեալ ժողով՝ դիմեցին յանջրդի դիւական յանապատն և մեծագոյն պատուով զդիւանշունչն այն Մահմետն ածին յիւրեանց

մէջն։ Եւ փրկչական բանն անդանօր կատարիւր, յառնել սուտ մարգարէի, զոր դիւապատիր Մահմէտն սկսաւ առնել մարգարէութիւն և ասէ. «Եթէ դուք անսայք իմոյ մարգարէութեանս և քարոզութեանս և առնէք զայնս՝ մեծ իշխանութիւն ազգիս մերոյ հասանէ, որպէս Հռոմոց գիրն ասէ, թէ մեզ իշխանութիւն վասն հաւատոյս մերոյ տուաւ Աստուծոյ։ Եւ զոր իւրեանց ատրուշանաց և զոհից էին տեղիք՝ Գմբէթ Աբրահամու անուանեաց և տեղի աստուածակոխ. և անդ հրամայեաց կոտորած առնել, և զօրն զայն Աբրահամու անուանեաց։ Հրաման ետ չորեքկուսի ի զոհանոցն աղօթել, քար արձան տայր կանգնել և համբուրել յանուն Աբրահամու։ Եւ առ նա երանելի մարգարէն առնէր զմարգարէութիւնն, «Եթէ՝ թողցէ այր զկին իւր, և լինիցի առն այլուր. եթէ դառնայցէ առ այր իւր, ոչ ապաքէն պղծելով պղծեսցի կինն այն»։ Այս իսկ կատարեաց Մահմէտն. զի Տալբ ոմն Տաճիկ ունէր կին գեղեցիկ. վասն որոյ յղեաց պատգամ առ նա, եթէ Աստուած հրամայեաց թողուլ զկին քո։ Իսկ Տալբն այն ածեալ զկինն իւր ի մէջ հրապարակին՝ երդմամբ կացուցեալ վկայս, երդան արձակեաց յիւրմէ. և Մահմէտ առ ինքն առեալ զկինն՝ ելից զբղջախոհ ախտին իւրոյ զտուփանս։ Եւ յետ այնորիկ դարձեալ ասէ ցՏալբն. «Աստուած հրամայեաց առնուլ զկին քո առ քեզ»։ Եւ սյս օրէնքս տաղակի յազգ նոցա եմուտ. եթէ զկին թողեալ ի կնութենէ, ապա առ այլուր եղեալ ի քուն, առ ինքն առնու։ Եւ այնպէս է անօրէն նոցա օրէնսդրութիւն, որ մինչ յահեղ անունն Աստուծոյ երդնուն՝ ստեն, և մինչ յառականս կանանց երդնուն, անսուտ պահեն։ Եւ այլ ինչ բազումս աղտեղութիւն աւանդեաց ազգին այնմիկ, որք են կարապետք և զօրք նեռինն և լինելոց են երկրպագուք նմա և մարտակիցք նորա լինին։ Եւ նոսա ասէ օրհնեալն Պողոս՝ «մարդք ապականեալք մեղօք, անպիտանք ի հաւատս, որոց անմտութիւնն յայտնի լիցի յաւուր մեծի դատաստանին աստուծոյ»։ Եւ այլուր՝ «լալով իսկ ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն կորուստ է»։

Ի լնուլ վաթսուն և հինգ թուին Հայոց՝ երևեցաւ մոլարն Մահմէտ ի Մեդին շահաստանի. և իբրև եղև եօթանասուն

թիւն եկն ի Գմբէթն Աբրահամու, և անտի էլ յայն շահաստան, որ այժմ կոչի յիւր անուն՝ Մահմետայ, յամենեանն սաֆար[1]։ Եղև անդ ամ մի, և զողջոյն ամն ի շահաստանէն ասպատակ արար. և յամենեանն շահր ռաբիլ ավալ[2] սկսեալ թափեաց զԳմբէթն Աբրահամու, ի ռամազան[3] ամսոյ ժԹ. այն ուրեքորդ ամէր նորա իշխանութեանն։ Շաւալ[4] ամսոյ ժԵ կռուեցաւ ընդ Ղեփ պարսկի. յաղկաթ[5] ամսոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ եկն ի Մաքայ և անտի դարձեալ յիւր շահաստանն, մինչ դեռ վեց օր կայր ի Զուլհէջայ[6] ամսոյ ի նմին ամի. եթող ամիրայ ի Մաքայ զՍէդ՝ Աբուսիդայ որդին։ Եւ դարձան նորա ընկերքն ի Մաքա։ Աբուբէքր՝ Աբուհափայ որդին, աւագ էր յընկերացն. և այն ինն տարի էր Մահմետայ իշխանութեանն։ Ի տասներորդ ամին մեռաւ յաւուր երկուշաբաթի յամենեանն շահռաբի աղաւաղի[7] յերկուցն, կալեալ զիշխանութիւնն ամս տասն։ Եւ երեքտասան ամ զմոլորականն իւր քարոզութեան գաղտնի հաստատեաց հաւատ։ Քառասուն ամ ունէր մինչ երևեցաւն, և ի վաթսուն և յերրորդ ամին մեռաւ։

Երկրորդ իշխանութեանն Տաճկաց զկնի Մահմետայ նստաւ Աբուբէքր Աբի Կահֆեան, և կալաւ ամս ինն։ Օմար Իխատաբեան եօթն ամ, զնա սպանին։ Ութման իբն Ֆան ամս տասն և մեկ. ապա արգելին զիշխանութիւնն Ութմանայ. և Ութման ետ իշխանութիւն Աբդլահի պատիւ՝ քրքմել զկերս և զմորուսս։ Մաւիկ ամս ինն։ Եզիդ իբն Մաւիկ ամս ութ։ Աբդլմալիք իբն Մրուան ամս տասն և մեկ. ի սորա աւուրս էր Հաջէջ իբն Ու-

---

1 Սաֆար, صفر, երկրորդ ամիս Տաճկաց։

2 ربيع الأول (շահր, լուսնական ամիս), ռաբի ալավվալ, այսինքն՝ առաջին Ռաբի, որ է երրորդ ամիս Տաճկաց։

3 Ռամազան, رمضان, իններորդ ամիս Տաճկաց։

4 Շավալ, شوال, տասներորդ ամիս։

5 Ղէ յաղկատ, այլ Զուլքադէ կամ Զուլքադէ, ذو القعدة, մետասաներորդ ամիս։

6 Զուլհէջայ, ذو الحجة, այսինքն՝ ամիս ուխտագնացութեան, երկոտասաներորդ ամիս Տաճկաց։

7 Տես ծան. 2.

սուփ։ Վ՝լեթ՝ Աբդլմելիքայ որդին, ամ ինն։ Սուլէյման իբն Աբդլմելիք ամ տասն և չորս։ Օմար, Աբդլազիզայ որդի՝ ամ տասն։ Եզիդ իբն Աբդլմելիք ամ վեց։ Հէշամ իբն Աբդլմելիք ամ քսան։ Վ՝լեթ իբն Եզիդ ամ մի. զնա սպանին և շփոթուին եղև Տաճկաց։ Մրուան, Մահմետայ որդի՝ ամ չորս սա սպան զԿուրիշիկս գլխաւորս Տաճկաց արս վաթսուն՝ զսպանողս Վ՝լեթայ-ամիրային՝ առաջի իւր ակնարկեալ սպանողացն։ Եւ եկն Աբլ Աբաս ի Մարաց օգնականութեամբ և զօրաք Աբու Մսլիմայ Խորասանայ իշխանին և սպան զՄրուան և կալաւ զիշխանութիւնն ամ եօթն։ Եւ Աբլ Աբաս Աբդալլահ Մահմադայ որդի՝ Աղայի որդի, Աբդլահի որդի, Աբբասայ որդի, Աբդլ Մուտաղիբայ որդի, որք այժմ ազգաւ կոչին Հեշամիկք. և սպան նա գաղտուկ զԱբու Մսլիմ, յորժամ եհաս յիշխանութիւնն. և յետ նորա սպանմանն և ինքն վախճանեցաւ։ Աբու Ջաֆր, որ կոչեցաւ Աբդալլահ, նորին եղբայր, ամ քսան և երկու. սա մեռաւ ի Դմբէթն Աբրահամու։ Մահդի, որ կոչի Մահմատ, որդի Աբդալլահի ամ ինն։ Մուսէ ամ մի։ Հարուն՝ Մահդիայ որդին, զոր Մադիուէնն կոչեն, ամ քսան և հինգ. սա նեղութիւն անչափ հասոյց աշխարհի և վասն այնր բազում գաւառք Հայոց փախեան ի Հռոմն։ Մահմետ՝ որդի Հարունայ, ամ երեք։ Հարուն՝ մինչ կենդանի էր, բաժանեաց զիշխանութիւնն երկուց որդւոց իւրոց՝ Մահմատայ և Մայմունայ. և ըստ երիցութեանն ունիլ Մահմետայ զիշխանութիւնն ի Բաղդատ և ի Խորասան. և Մայմուն ընդ հակառակս նմա եղեալ պատերազմաւ՝ մեռանի Մահմատ. և Աբդալլահ, որ և Մայմունն կոչէր, իշխեաց ամենայնի ամ...։ Իբրահիմ, ամ տասն։ Հարուն՝ քսան և երրորդ նստաւ ի Մահմետայ Ամիր Մումին. և հայ թուականն էր երկու հարիւր եւթանասուն ամ։

Ե. Թովմա Արծրունի. Կ. Պոլիս, 1852. եր. 108—115.

Ընդ ժամանակս Հայրակղի Կայսեր հոռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութիւնն պարսից։ Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք երկոտասան հազար

յամենայն ցեղից Իսրայէլի, զի տեսին եթէ մեկնեցաւ զօրն պարսից, և թողին ի բաց զքաղաքն. նոքա երթեալ մտին անդ, փակեցին զդրունսն և ամրացան ի նմա. և սկսան ապստամբել ի հռովմայեցւոց տէրութենէն։

Իսկ թագաւորն Հայրակղէս հրաման ետ պաշարել զնոսա. զոր Թէոդորոս եղբայր թագաւորին և բազմութիւն զօրացն կամեցան սատակել զնոսա։ Իսկ թագաւորն հրաման ետ երթալ գնալ ի սահմանաց իւրոց. և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի ի քաղաքն որ կոչի Մադիամ. զոր աւերեացն Իսրայէլ յելանելն իւրում յԱգիպտոսէ, և Ինդիպատերազմելն ընդ Բաղակայ արքայի Մովաբայ։ Եւ քանզի իշխանութիւնն պարսից յոյժ լքեալ էր, և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ, և բնակեցան ի նմա։

Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի, և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն. և թէ որդիք Աբրահամու եմք, մեք և դուք եղբարք. պարտ է ձեզ զալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ։ Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց, ըստ իւրաքանչիւր կամաց։

Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան, որ այժմ կոչի Մաքայ։ Արք պատերազմողք զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին ամենեցուն պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար։ Դէպ եղև միում ի նոցանէ մեռանիլ որում՝ կոչէին Աբդլայ. և որդի նորա Ճնացեալ մատաղ հասակաւ որում Մահմէտ կոչէին. զոր առեալ սնուցանէր հօր եղբայր իւր Աղուտալբ, մինչև ցարբունս հասակի, և ի չափ ինչ հասեալ բնակեցաւ առ ումեմն մեծատան ի նոցունց ազգականից, հարկանէր նմա սպասաւորութիւնս միամիտս, արածէր ուղտս, և լինէր հրամանատար տանն նորա։ Եւ իբրև անցին աւուրք ինչ, վախճանեցաւ տանուտէր տանն։ Տեսեալ անցին աւուրք ինչ, վախճանեցաւ տանուտէր տանն։ Տեսեալ կնոջն զՄահմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն յամենայն իրս աշխարհականս, եղև նմա կին. և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տանն և ընչից. և եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի գործ վա-

ճառականութեանն, Յեգիպտոս և ի կողմանս պաղեստինացւոց. և մինչ այսմ գործոյ պարապէր, դէպ եղև նմա ի կողմանս եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի որում կոչէին Սարգիս Ռֆիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. սմա ծանօթացեալ և սիրողացեալ ժամանակաւ ուսուցանէր բազում ինչ նմա, և յոլովագոյնս զՀնոց կտակարանաց, և եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Աստուծոյ։ Յս միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն։ Զի թէ յայս եկեսցես իմով հրամանաւ, եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո։ Յուշ առնէր նմա և զխոստումն Աստուծոյ առ Աբրահամ, և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն, և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև խսպառ։

Յս եղև ի միում աւուրց ի գալ նորա ի նմանէն, ձայն օտարոտի և ազգումն ահագին դիւական անկեալ ի վերայ նորա ուշաթափ անկեալ դնէր, զոր դիպողագոյն է այժմ ըստ առաջիկայ օրինակիս յայտ առնել. քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռինն է ծնանելոց, ճանապարհորդել Յեգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Պաւայ, երթեալ դադարէ անդ հանգստեամբ, և ի նիրհելն իւրում ձայնէ հոգին աւտար ի բերանոյ կնոջն քարացելոյ. եթէ՝ ծնցիս որդի աշխարհակալ, որ և ի պուռնկութենէ յղացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ. այնպիսիք և առ սովաւ երևեցան։ Քանզի հարցեալ ցնա որք նորին ուղեկից. թէ որպիսի՞ պատճառաւ անկեալ եղեր ի մտաց, ասէ. ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն զլխաւորութեան, և զստութիւն հաւատոյ որ ի կուռս յանդիմանել և քակտել։ Յս եկեալ ի փառան զնոյն ասաց երկրորդել զբանս զայսոսիկ առ հօր եղբօրն իւրոյ որ կոչէր Աղլէհր։ Ասէ. զի՞նչ է նոր հաւատդ որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել, անձին քում դու եղիջիր պարտական. և նա տրամեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ սպիտէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալցէ աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց։ Յս բազումք ի նոցանէ հաւանեցան նմա պատգամաւոր Աստուծոյ ասել։

Յս յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօր եղբօրն իւրոյ, եկն եմուտ առ նա Աղի որդի Աղուտալպի, և ասէ. զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. և նա ասէ. զԱստուած արարիչ երկնի և երկրի պատմեմ, և անարգեն զիս սպառնալեօք։ Յս Աղի էր այր քաջ, ասէ ցնա. արի՛ ելցուք քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ։

Յս ելեալ նոցա արտաքս սկսաւ խօսել Մահմէտ հրապարակաւ զնոյն բանս. և եղև աղաղակ մեծ ի միջի նոցա և կռիւ, այնքան մինչև բազումք ի նոցանէ ի սուրս դիմեցին. և պարտեցաւ կողմն Մահմէտի, և վիրաւորք բազումք լինէին յերկոցունց կողմանցն, և փախստական եղեալ Մահմէտ և Աղի. և ընդ նոսա իբրև արք քառասուն. եկին ի քաղաքն Մադիամ զոր և ասացաք յառաջագոյն, և ուսեալ հրէից զպատճառս փախստեանն խրախուսեցին ի միաբանութիւն ճշմարիտ ասել զասացեալսն. իբրև նախանձախնդիրք Աստուծոյ, և որդիք Աբրահամու և եղբարք միմեանց։ Յղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց. և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն առաջարկութեանն այնորիկ։ Գումարեցան ի միասին հրէայքն հանդերձ Իսմայէլացովք, և եղեն բանակ մեծ և ելեալք ի վերայ Փառանու արարին մեծ խորտակումն դիմադարձացն, սպանին և զԱղլէհրն, և զբազումս ի զօրէն ամենեցւոց և մովաբացւոց. կործանեցին և զպատկերսն Սամայ որ ի բազնին այնորիկ. յանդգնեցան ասել և զմեհեան տուն Աբրահամու, հնազանդեցուցին և զամենայն բնակիչս սահմանացն մերձակայից, և զապստամբսն միահաղոյն բարձին սրով։ Տեսեալ Մահմէտի զյաջողութիւն իրացն, և զմիաբանութիւն հրէից, ասաց զինքն զլուխ և առաջնորդ ամենեցուն։ Կարգեաց հրամանատարս և զօրագլուխս ինքեան յիսմայէլականաց անտի, զԱղի, և զԱղուբիքր, և զԱմր, և զՈՒթման։ Յս յոմն պատգամ առ Թէոդորոս եղբայր Հայրակղի, ըստ այնմ որում հրէայքն եղեն ձեռնտու. եթէ զերկիրդ զայդ Աբրահամու խոստացաւ Աստուած և զաւակի նորա,

և ի ձեռս նոցա էր բաղում ժամանակս. և եթէ վասն չարութեան գործոց նոցա տաղտկացաւ Աստուած և եհան ի ձեռս ձեր, բաւական լիցի ձեզ այդչափ որչափ կալէքդ, և արդ մեք զաւակ Աբրահամու եմք. և գիտէք դուք զխոստումն որ առ Իսմայէլ հայրն մեր. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ. ապա թէ ոչ առցուք պատերազմաւ ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բաղումս։ Եւ նորա կամեցեալ ցուցանել Թագաւորին, ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին, ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. այլ հրամայէր միայն զգուշանալ, և ոչ ելանել պատերազմաւ ընդ դէմ նոցա, մինչև տեսցէ զելս իրացն. և բանակն Իսմայէլի հզօրագոյնս ստիպէր ի պատերազմ. և նոքա կամեցեալ անձնապահ լինել աշխարհին, զնացին ընդ դէմ նոցա. թողեալ զերիվարս իւրեանց, ի հետիոտս ելին ընդ դէմ նոցա։ Իսկ նոքա քանզի ի հանդստեանն էին զիմեցին ի վերայ նոցա, և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զենուցն, և ի ջերմութենէ տապոյ արեգականն, և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից և ի հետևակաղնացութենէն, և ամենեքումբք թշուառացեալ անկան ի ձեռս թշնամեացն, որք դատեցին ի սուրս իւրեանց. և եկեալ ի տեղի բանակի նոցա, առին աւար բազում. և սկսան աներկիւղ տարածանել ի վերայ երկրին. քանզի ոչ կասկածէին ի պատերազմէ իմեքէ։

Յայնժամ տեսեալ Հրուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն, առին զԱստուածային Սուրբ Նշանն Տէրունական հանդերձ այլ սպասիւք Եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն Թագաւորական ի Կոստանդին. և Իսմայէլ տիրեաց ամենայն հրէաստանի։

Իսկ աբեղայն արիոսեան զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմետի, տեսեալ զյաջողութիւն իրացն, յարուցեալ եկն առ Մահմետ ցուցանել նմա զգուութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց։

Իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ, յոյժ դժուարեալ ընդ իրսն սպան զնա ի գաղտնիս։

Ի սոյն ժամանակս էր այլ ոմն ի կողմանս պարսից միայնացեալ կրօնաւորութեամբ, էր և նորա աշակերտ մի որում անուն էր

Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին, պատուիրէր նմա և ասէր. որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից. այլ երթիցես ի կողմանս եգիպտոսի, բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո։ Եւ վախճանեալ միայնակեցին, կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղման։ Դէպ եղև նմա ճանապարհաւ գալ ի քաղաքն Մադիամ. էր և ծանօթ գիտութեան գրոց թէպէտ և ոչ կատարելապէս։ Զսա տեսեալ Մահմետի կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ Իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ գպրութիւն։ Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս. էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. այլ և ինքն Մահմետ մոլեկան հոգւով շարժեցեալ տայր գրել զանուղղայս զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք։ Քանզի ասէր զինքն մխիթարիչն՝ զոր խոստացաւ Տէր Քրիստոս առաքել աշակերտացն իւրոց. և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել, և ուղեկից ճանապարհի նորա յասելն Լսայեայ մարգարէի հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու. զայս ամենայն յինքն յարակցէր։ Եւ փոխանակ սուրբ մկրտութեանն, հանապազ ողողանիլ ջրով. և զայն բաւական համարել ի սրբութիւն։ Եւ զերկնային պարգեւացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէր, զանպատում և զհրեշտակային նորոգութեանն, նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց, հանապազ անյագաբար խառնակումն։ Եւ երկայնագոյնս է զամենայն բանս պղծութեան նորա շարագրել. զի յոյժ բազում է և ընդդիմակ աստուծոյ։ Եւ զայս ամենայն հաստատեալ եդ ազգի իւրում կոչելով Կուրանս։ Եւ արդ՝ է՛կ ասացից քեզ ո՞րպիսի ողբովք ողբայ զնոսա հին մատենագիրն, ասելով. վայ քեզ, եղուկ դու ազգ Տաճկաց, արանց և կանանց և ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութիւն կարգաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանաւրէնս բարբառիր։ Հասեալ կայիք յանդիման մեծազաւրին ասուածոյ։ Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծատուածոյ։ Եւ

զաւր թագաւորին, արդ նոր և զարմանալի վերաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս։ Այլ և սաստիկ հարուածովք սատակեսցէ զքեզ։ Այլ առ հառարակ ամենայն տիեզերքք ծխեալ տեսանիցեն. և ի քէն ամենեին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զհնոց խեցագործաց այրեսցիս. և քեզ ոչ եղիցի հանգիստ։

Այլ նորա զայս ամենայն չարիս կատարեալ ևս բազմագոյնս քան զայս հաստատեալ եդ ազգի իւրում օրէնս բազում և այլ չարագործութեամբք. և կեցեալ ամս քսան ի սմին, մեռաւ. և ինքն կացուցանէ ի գլխաւորութիւն տաճկաց զԱպուբաքր, և կեցեալ ամս երկուս մեռանի։ Յետ այսորիկ կայ ի գլխաւորութիւն տաճկաց Ամր, որդի Հատապայ ամս քսան և ամիսս վեց։ Սա հալածեաց զյոյնս, և դումարեալ զօր բազում զնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն պարսից յերկիրն պարթևաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային պարսից, և փախեաւ Յազկերտ յերեսաց նոցա, և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս քուշանաց. և կոտորեցին զամենայն զօրս նորա. և փախուցեալ նա անկաւ ի զօրն Թեատղայ, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Իսմայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան։ Այլ յայնմ հետէ բարձաւ տէրութիւնն պարսից և ազգին Սասանայ որ տևեաց ամս, ՇԽԲ.

Քաղուածք ի պատմութենէ Համզայի Իսպահանեցւոյ յաղագս յաջորդաց Մահմետի։
Տես, Hamsae Ispahanensis annalium Libri X, T. II, translatio latina, Gottwaldt, Lipsiae, 1848, p. 126—127.

Աբուբէքր թագաւորեաց	ամս՝ Բ,	ամիսս՝ զ	աւուրս՝ Ը
Այմար „ „	ամս՝ Ժ,	ամիսս՝ Ղ,	աւուրս՝ ԺԸ
Աւթման „ „	ամս՝ ԺԱ,	ամիսս՝ ԺԱ,	աւուրս՝ ԻԲ
Ալի, որդի Աբութալէբի,	ամս՝ Դ,	ամիսս՝ Թ	
Մոավիա „ „	ամս՝ ԺԹ,	ամիսս՝ Դ,	աւուրս՝ ԻԵ
Եզիտ „ „	ամս՝ Դ,	ամիսս՝ Ը	
Մոավիա, որդի Եզտի,	„ „	ամիսս՝ Դ,	աւուրս՝ ԻԲ

Աբդալլահ, որդի Զոբէյրի,	ամս՝ Թ,	ամիսս՝ ԺԱ,	աւուրս՝ Դ
Աբդուլմելիք „	ամս՝ ԺԲ,	ամիսս՝ Դ,	աւուրս՝ Ե
Վալիդ, Աբդլմելքի որդի,	ամս՝ Թ,	ամիսս՝ Է,	աւուրս՝ ԻԹ
Սոլէյման, „ „	ամս՝ Բ,	ամիսս՝ Է,	աւուրս՝ ԻԹ
Այմար, Աբդլազզի որդի,	ամս՝ Բ,	ամիսս՝ Ե,	աւուրս՝ ԻԴ
Եզիտ, Աբդլմելքայ որդի,	ամս՝ Դ,	„	աւր՝ մի
Հիշամ, Աբդլմելքայ որդի,	ամս՝ ԺԹ,	ամիսս՝ Ը,	աւուրս՝ Ի
Վալիդ, Եզտի որդի,	„ ամ՝ մի,	ամիսս՝ Բ,	աւուրս՝ ԻԱ
Եզիտ, Վալիդի որդի,	„ „ „,	ամիսս՝ Բ,	աւուրս՝ Թ
Իբրահիմ, Վալիդի որդի,	„ „,	ամիսս՝ Բ,	աւուրս՝ ԺԱ
Մերուան, Մոհամմեդի որդի,	ամս՝ Ե,	ամիս՝ Ա,	
Ասաֆախ „ „	ամս՝ Դ,	ամիսս՝ Ը,	աւուրս՝ Բ
Ալմանսուր „ „	ամս՝ ԻԱ,	ամիսս՝ ԺԱ,	աւուրս՝ Ը
Ալմահդի „ „	ամս՝ Ճ,	ամիս՝ Ա,	աւուրս՝ ԺԲ կամ Ե
Ալհադի „ „	ամս՝ Ա,	ամիս՝ Ա,	աւուրս՝ ԺԵ
Առաշիդ „ „	ամս՝ ԻԳ,	ամիսս՝ Բ,	աւուրս՝ ԻԷ
Ալամին „ „	ամս՝ Դ,	ամիսս՝ Ե,	աւուրս՝ Բ
Ալմամուն „ „	ամս՝ Ի,	ամիսս՝ Ե,	աւուրս՝ ԻԲ
Ալմոթասէմ „ „	ամս՝ Ը,	ամիսս՝ Ը,	աւուրս՝ Բ
Ալվաթեք „ „	ամս՝ Ե,	ամիսս՝ Թ,	աւուրս՝ Զ
Ալմոթաւաքէլ „ „	ամս՝ ԺԴ,	ամիսս՝ Թ,	աւուրս՝ Թ
Ալմոնթասիր „ „ „		ամիսս՝ Զ,	աւր՝ մի
Ալմոթազ „ „	ամս՝ Դ,	ամիսս՝ Զ,	աւուրս՝ ԻԵ
Ալմոհթեդի „ „ „		ամիսս՝ ԺԱ,	աւուրս՝ Ի

ՑԱՆԿ

Ա. ՍԵԲԷՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ՀԵՐԱԿԼԻՆ

	Երես
Յառաջաբան	Ա
Դպրութիւն Ա.	1
Դպրութիւն Բ.	11
Դպրութիւն Գ.	22—153

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա. Ի Պատմութենէ Թոմայի Արծրունւոյ	154
Բ. Ի Պատմութենէ Ստեփանոսի Տարօնեցւոյ	167
Գ. Ի Պատմութենէ Վարդանայ	180
Դ. Ի Պատմութենէ Յովհաննու Կաթուղիկոսի	185
Ծանօթութիւնք	197
Վրիպակք	203

Բ. Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն	1—52

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա. Ի Պատմութենէ Վարդանայ	53
Բ. Ի Պատմութենէ Սամուէլի Անեցւոյ	57
Գ. Ի Պատմութենէ Կիրակոսի	58
Դ. Ի Պատմութենէ Կաղանկատուացւոյ	61
Ե. Ի Պատմութենէ Թոմայի Արծրունւոյ	64—71

ՀՀ Ազգային գրադարան
NL0345283
ՀՀ Ազգային գրադարան
NL0345282